

ԳԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍԱՎՈՐՈՒՄ  
№ 12-13

2014

Տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:

Տպաքանակը՝ 1411 օրինակ, 144 էջ:

Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 5763 37

[www.atc.am](http://www.atc.am)

Գլխավոր խմբագիր՝ Գագիկ ՄԵԼԻՔՅԱՆ  
Գլխ.խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ԱՇՈՏՅԱՆ – ԿԳ նախարար  
Մանուկ ՄԿՐՏՉՅԱՆ – ԿԳ փոխնախարար  
Արմեն ՓԱՇՍՅԱՆ – ԳԹԿ փոխտնօրեն  
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ – ԳԹԿ փոխտնօրեն  
Համլետ ԴԱՎԹՅԱՆ – ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ  
Կարո ՆԱՍԻՔՅԱՆ – ԳԹԿ քննությունների կազմակերպման  
բաժնի պետ  
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ – ԳԹԿ իրավաբանական և  
անձնակազմի կառավարման բաժնի  
պետ  
Ալեքսան ԵՍԱՅԱՆ – ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ  
Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ – ԳԹԿ հրատարակչական բաժնի  
գլխավոր մասնագետ  
Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ – ԳԹԿ թեստաբանության բաժնի  
գլխավոր մասնագետ

Խմբագրական կազմ՝

Լուիզա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
Միքայել ԽՈՍՐՈՎՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4  
Հեռ. (+374 10)55-32-65  
E-mail: gtk2005@web.am

---

**ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Գնահատման առանձնահատկություններն ավագ դպրոցում ..... 101

**ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Թեստերի օգտագործումը ուսումնական գործընթացում ..... 114

**ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**

Անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտին .. 124

**ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ**

Մոսկվայի Լազարյան ճեմարանը ..... 135

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ն. ԲԱՅԱԹՅԱՆ, Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ն. ՍԱՐԳՍՅԱՆ  
2013 թ. փետրվար-մարտ ամիսներին  
ՀՀ հանրակրթական հաստատությունների  
11-րդ դասարաններում անցկացված արտաքին  
ընթացիկ գնահատման արդյունքները ..... 3

Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, Ն. ՄԱՐԳՍՅԱՆ  
2013 թ. միասնական քննությունների արդյունքների  
վիճակագրական վերլուծություն ..... 32

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Մ. ՀԱԼԱԶՅԱՆ, Վ. ՄԿՐՏՅԱՆ  
<<Ի՞նչ զիտենք մեր մասին>> հայագիտական առարկաներից  
ազգային ստուգատեսի թեստի կարճ և ընդարձակ  
պատասխանների բովանդակային-վիճակագրական  
վերլուծություն ..... 66

Նարինե ԲԱՅԱԹՅԱՆ  
Գթշկ համակարգչային և վերլուծական աշխատանքների  
բաժնի գլխավոր մասնագետ

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ  
Գթշկ համակարգչային և վերլուծական աշխատանքների  
բաժնի առաջին կարգի մասնագետ

Նարե ՄԱՐԳՍՅԱՆ  
Գթշկ համակարգչային և վերլուծական աշխատանքների  
բաժնի առաջին կարգի մասնագետ

**2013 թ. փետրվար-մարտ ամիսներին**  
**ՀՀ հանրակրթական հաստատությունների**  
**11-րդ դասարաններում անցկացված**  
**արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները**

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1. Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

2013 թ. փետրվար-մարտ ամիսներին հանրակրթական 63 դպրոցների տասնմեկերորդ դասարաններում անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ շուրջ 4111 աշակերտի մասնակցությամբ։ Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել են

## ՆԵՐԿՐՈՒՄ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Մ. ՀԱԼԱԶՅԱՆ  
Հայաստանի հանրակրթական դպրոցներում ընթերցանության  
որակի հետազոտություն ..... 89

ՀՀ մարզերում հավասարաշափ բաշխված 19 ավագ, 41 միջնակարգ դպրոցների և 3 պետական վարժարանների աշակերտներ:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 6-ական տարբերակ:

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ, որտեղ ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման: Գնահատման արդյունքները տրվել են համապատասխան դպրոցներին դասամատյաններում անցկացնելու համար:

Արտաքին ընթացիկ գնահատման հետ միաժամանակ տնօրենների և ուսուցիչների շրջանում անցկացվել է անանոն հարցում, որի նպատակը եղել է դպրոցում ուսուցման արդյունավետության չափի բացահայտումը: Հարցման համար մշակվել են հարցաթերթիկներ, որոնք լրացվել են վերոնշյալ դպրոցների տնօրենների և տասնմեկ-երրորդ դասարանների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների շուրջ 267 ուսուցիչների կողմից: Հարցաթերթիկները ենթարկվել են համակարգչային մշակման և ծրագրային վերլուծության:

## 1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Բովանդակային առումով թեստերը կազմվել են 11-րդ դասարանի առարկայական ծրագրերին համապատասխան՝ սեպտեմբերից հունվար ամիսներին ուսումնասիրած թեմաների շրջանակներում: Հայոց լեզվի և հայ գրականության թեստային առաջադրանքներից 10-ը (1-8-րդ, 17-րդ, 18-րդ առաջադրանքները) եղել են «Հայոց լեզու», 10-ը (9-16-րդ, 19-րդ, 20-րդ առաջադրանքները)՝ «Հայ գրականություն» առարկաներից, մաթեմատիկայի թեստային

Խմբագրություն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրապարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարաններում:

առաջադրանքներից 10-ը (1-7-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ առաջադրանքները՝ «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» (այսուհետև՝ «Հանրահաշիվ»), 10-ը (8-14-րդ, 18-20-րդ առաջադրանքները՝ «Երկրաչափություն» առարկաներից):

Արտաքին գնահատման թեստերը բաղկացած են եղել 20-ական առաջադրանքներից: Բոլոր առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով: Թեստային 20 միավորներից գնահատման 10 միավորանոց համակարգի անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակի:

Միավոր	Գնահատականը
0, 1	1
2, 3	2
4, 5	3
6, 7	4
8, 9	5
10, 11, 12	6
13, 14	7
15, 16	8
17, 18	9
19, 20	10

Արտաքին գնահատման արդյունքները 10-միավորանոց համակարգով տրվել են համապատասխան ուսումնական հաստատություններին իրենց դասամատյաններում գրանցելու համար:

## 2. Վիճակագրական տվյալներ արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերաբերյալ

### 2.1. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ առարկաների

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն	2699	5,1
Մաթեմատիկա	2684	3,5

## <<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> տեղեկատվական-վերլուծական հանդեսում հոդվածներ տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրապարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:


Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է նաև համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]: Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Միջին միավորները ստանդարտ միջինից (5,5-ից) ցածր են եղել ընդ որում՝ մաթեմատիկայի միջին միավորը չի հասել դրական միավորների շեմին:

## 2.2. Գնահատականների բաշխման տոկոսներն ըստ առարկաների



Դիագրամից պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ աշակերտներն ունեցել են ցածր առաջադիմություն մաթեմատիկայից (այդ առարկայից դրական միավորների շեմը չի հաղթահարել աշակերտների 40 տոկոսից ավելին) և միջին առաջադիմություն՝ հայոց լեզվից և հայ գրականությունից: Հայոց լեզվի և հայ գրականության միավորների բաշխումը մոտ է նորմալ բաշխմանը, մաթեմատիկայի միավորները փոքր-ինչ շեղվել են դեպի անբավարար գնահատականները: Չնայած դրան՝ երկու առարկաներից էլ 9-10 գնահատականները կազմել են գնահատականների 3 տոկոսը:

## Московская Лазаревская гимназия

### Резюме

Во времена правления Шах Абаса предки Лазарянов были переселены из Армении в Иран. В середине 18-го века Лазарь Назарович Лазарян со 4-мя сыновьями переселился в Россию. Самым патриотическим начинанием и делом семьи Лазарянов в Москве является учреждение Лазаревской гимназии, открытие которой связывают с именами братьев Ованес и Еким (Иоаким) Лазарянов. В течение столетней исторической деятельности выпускниками гимназии стали государственные, дипломатические, военные и многие выдающиеся деятели армянской просветительной мысли, интеллигенции, общественной жизни, культуры, науки и литературы.

## Moscow Lazaryan Seminary

### Summary

The Lazaryans ancestors' had been carried to Persia still at Shah Abas times. In the mid of the 18<sup>th</sup> century Ghazar Nazar Lazaryan moved to Russia with his 4 sons. The most patriotic work of Lazaryans had been the foundation of Lazaryan Seminary in Moscow which was connected with the names of Hovhannes and Hovakim. During the century the seminary had given many outstanding state, diplomatic and army sphere figures as well as thousands of famous people in Armenian public, cultural and educational life.

դիվանագիտական, զինվորական ասպարեզների, այնպես էլ հայ հասարակական կյանքի, մշակույթի, ժողովրդական լուսավորության, գիտության ու գրականության հարյուրավոր գործիչներ:

Պատրաստեց՝ Ն. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

### **3. Տնօրենների և ուսուցիչների հարցման արդյունքները**

#### **3.1. Տնօրենների հարցման արդյունքները**

Հարցմանը մասնակցել են 63 դպրոցների տնօրեններ, որոնց 22 տոկոսն ունի մինչև 5, 38 տոկոսը՝ 6-15, 40 տոկոսը՝ 16-30 տարվա տնօրենի աշխատանքային ստած:

Տնօրենների 67 տոկոսը նշել է, որ վերջին տարիներին աշակերտների ուսման առաջընթացը քիչ է բարելավվել, իսկ 15 տոկոսը՝ որ նվազել է:

Դպրոցի ուսումնանյութական ռեսուրսներով մտահոգված են տնօրենների 77, ուսումնական նյութի ծանրաբեռնվածությամբ՝ 89, աշակերտների ուսման որակի նվազմամբ՝ 86 տոկոսը:

Տնօրենների 14 տոկոսը համամիտ չէ աշակերտների ուսման որակի նվազման վերաբերյալ պնդման հետ: Նրանք ունեն 16 տարուց ավելի մանկավարժական ստած, որպես տնօրեն աշխատում են 5-23 տարի և նրանց 60 տոկոսը դեկավարում է 500-730 աշակերտ ունեցող դպրոցներ:

Տնօրենների 48 տոկոսը մտահոգված է ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության պակասով, 48 տոկոսը՝ ոչ այնուամենայնիվ, տնօրենների 21 տոկոսը գտնում է, որ ուսուցիչները կարիք ունեն մասնակցելու առարկայական, 62 տոկոսը՝ մեթոդական, 39 տոկոսը՝ հոգեբանա-մանկավարժական թեմաներով վերապատրաստումների, մինչդեռ իրենց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները բարելավվելու համար առարկայական, մեթոդական և հոգեբանա-մանկավարժական թեմաներով վերապատրաստումների մասնակցելու ցանկություն հայտնել են հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչների համապատասխանաբար՝ 15, 49 և 25, մաթեմատիկայի ուսուցիչների՝ 20, 36 և 29 տոկոսը:

### 3.2. Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչների հարցման արդյունքները

Հարցմանը մասնակցել է հայոց լեզվի և հայ գրականության 134 ուսուցիչ, որոնց 96 տոկոսն ունի բարձրագույն մասնագիտական, 1 տոկոսը՝ բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն, 97 տոկոսը կին է, 1 տոկոսը՝ տղամարդ։ Տարիքային բաշխվածությունը այսպիսին է. ուսուցիչների 4 տոկոսը մինչև 25 տարեկան է, 16 տոկոսը գտնվում է 26-35, 28 տոկոսը՝ 36-45, 35 տոկոսը՝ 46-55, 15 տոկոսը՝ 56-65 տարիքային խմբերում։

Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչների 92 տոկոսը նշել է, որ իրենց աշակերտների մեծ մասը սովորելու ցանկություն ունի, 98 տոկոսը՝ որ աշակերտների համար իրենց դասավանդած առարկան հասկանալի է, և 99 տոկոսը՝ որ դասից առաջ մանրամասն նախապատրաստվում է դասին։ Ընդ որում՝ ուսուցիչների 84 տոկոսին դպրոցում ամենաշատը մտահոգում է աշակերտների ուսման ցածր որակը (միջին միավորը՝ 5,1)<sup>2</sup>, 78 տոկոսին՝ ուսումնական նյութի ծանրաբեռնվածությունը (միջին միավորը՝ 5,1), 50 տոկոսին՝ ուսուցման մեթոդների նվազ արդյունավետությունը (միջին միավորը՝ 5,0), 69 տոկոսին՝ դպրոցի ուսումնանյութական ռեսուրսների պակասը (միջին միավորը՝ 5,2)։ Այսինքն՝ բոլոր դեպքերում միջին միավորներն ունեցել են չնչին տարբերություններ (0-0,2)։ Հարկ կա ավելացնելու, որ նման մտահոգություններ չունեցող ուսուցիչների աշակերտների միջին միավորների և մտահոգվող ուսուցիչների աշակերտների միջին միավորների տարբերությունը նշանակալի չի եղել։ Հետևաբար, վերոնշյալ գործոնները ազդեցություն չեն ունեցել գնահատման արդյունքների վրա։

<sup>1</sup> Ուսուցիչների 3-4 տոկոսը չի պատասխանել որոշ հարցերի, այդ պատճառով տվյալները ամբողջական չեն։

<sup>2</sup> Փակագծերում տրված են հայոց լեզվի և հայ գրականության ընթացիկ արդյունքների արտաքին գնահատման միջին միավորները՝ տվյալ ընտրանքին համապատասխան։

ուսուցական կազմ հրավիրելու համար։ 1813 թ. Լազարյան Ճեմարան է հրավիրվում ականավոր գործիչ, գիտնական ու մանկավարժ Հարություն Ալամդարյանը։ 1840-1860թթ. Ճեմարանի հայագիտական առարկաների ուսուցիչ ու դասախոս է եղել ականավոր հայագետ-գիտնական Մկրտիչ Էմինը։ 1849թ. Կազանից տեղափոխվելով Սոսկվա, երկար տարիներ Լազարյան Ճեմարանում արևելյան լեզուների պրոֆեսորություն է արել Ս. Նազարյանը։ Շատ կարծ ժամանակով Լազարյան Ճեմարանում հայոց լեզու է դասավանդել ուսուցիչներ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը, շուտով, ռեակցիոն ուժերի ջանքերով, հեռացվում է Ճեմարանից։

Լազարյան Ճեմարանի հիմնախնդիրների սկզբնական նպատակն էր՝ այդտեղ ուսում տալ հայ մանուկներին՝ գերազանցապես չքավոր ընտանիքներից։ Սակայն Ճեմարանի հետագա վերափոխումների հետևանքով փոփոխության է ենթարկվել նաև սովորողների ինչպես ազգային-էթնիկական, այնպես էլ սոցիալական կազմը։ Ուսումնարան են ընդունվում ինչպես հայերի, այնպես էլ մյուս ազգությունների ազնվականների և աստիճանավորների երեխաներ, ընդ որում մյուս ազատ դասերի երեխաներին նույնպես թույլատրվում է այդտեղ սովորել։ Լազարյան Ճեմարանի գիմնազիան և լիցեյական բաժիններն ավարտողներն իրենց իրավունքներով և արտոնություններով հավասարեցված էին արքունի միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտողների հետ։

Լազարյան Ճեմարանում սովորել և այն ավարտել են բազմաթիվ աշբի ընկնող՝ ժողովրդական լուսավորության գործիչներ, ուսուցիչներ, անվանի գիտնականներ, գրողներ, բանաստեղծներ։ Անգնահատելի է Լազարյան Ճեմարանի դերը մասնավորապես հայ մտավորականության բազմաթիվ ականավոր ներկայացուցիչների պատրաստման գործում։ Լազարյան Ճեմարանում են սովորել իր ժամանակի հայտնի գործիչներ, մանկավարժներ, գրողներ Հ. Երեցփոխյանը, Միք. Պատկանյանը, Բ. Միլլերը, Ռ. Պատկանյանը, Հ. Հովհաննիսիայանը, Վ. Տերյանը...։

Մեծ է եղել Լազարյան Ճեմարանի դերը նաև հայկական դպրոցների համար ուսումնական ձեռնարկներ պատրաստելու գործում։ Իր մեկդարյա գոյության ընթացքում Ճեմարանը տվել է ինչպես պետական,

Իրենց գործարար և դիվանագիտական գործունեությամբ Մերձավոր Արևելքի հետ սերտորեն կապված Լազարյանները շատ լավ են հասկանում արևելյան լեզուների, արևելագիտության մեծ գործնական նշանակությունը Ռուսաստանի դիվանագիտական և առևտրական հարաբերությունների համար: Եվ իրենց առաջին հերթին արևելագիտությունը, այդ թվում և հայագիտությունը, հանդիսացավ այն շաղախը, որով հնարավոր դարձավ շաղկապել Լազարյան Ճեմարանի առջև դրվող ինչպես հայկական-ազգային, այնպես էլ պետական-քաղաքական բնույթի խնդիրները:

30-ական թվականների սկզբից Լազարյան Ճեմարանի առջև դրվում են հետևյալ խնդիրները. պատրաստել ուսուցիչներ Ռուսաստանում գտնվող հայկական դպրոցների համար և հոգևորականներ՝ հայ-լուսավորչական եկեղեցու համար:

Լազարյան Ճեմարանի առջև դրված նպատակների ու խնդիրների համապատասխան էլ սահմանվում ու փոփոխության է ենթարկվում նրա ուսման բովանդակությունը: 1827թ., բացի արդեն հիշատակված առարկաներից, Լազարյան Ճեմարանում դասավանդում էին նաև ճարտասանություն, բարյագիտություն, տնտեսագիտություն, առևտրական գիտություններ, փորձնական ֆիզիկա, բնական պատմություն: Լազարյան Ճեմարանի դեկանարությունը և մանկավարժական կազմը աշխատել են կենսագործել ժամանակի առաջավոր դիդակտիկական պահանջները, երեխանների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, ուսուցման գննականություն, գիտակցականության, երեխանների ինքնուրույնության և ակտիվության ապահովում և այլն:

Ուսուցչական որակյալ կադրերով ապահովված լինելու տեսակետից Լազարյան Ճեմարանը շատ ավելի լավ պայմաններում էր, քան ժամանակի ոռուսական որևէ այլ դպրոց: Նա գտնվում էր կուլտուրական, կրթական և գիտական խոշոր կենտրոն Սոսկվայում, ուներ պահանջվող նյութական-դրամական միջոցներ՝ բարձրորակ

### 3.3. Մաթեմատիկայի ուսուցիչների հարցման արդյունքները

Հարցմանը մասնակցել է մաթեմատիկայի 133 ուսուցիչ, որոնց 95 տոկոսն ունի բարձրագույն մասնագիտական, 5 տոկոսը՝ բարձրագույն ոչ մասնագիտական կրթություն, 92 տոկոսը կին է, 8 տոկոսը՝ տղամարդ, ընդ որում՝ ուսուցիչների 1 տոկոսը մինչև 25 տարեկան է, 12 տոկոսը՝ 26-35 տարեկան, 26 տոկոսը՝ 36-45 տարեկան, 31 տո-կոսը՝ 46-55 տարեկան, 29 տոկոսը՝ 56-65 տարեկան:

Մաթեմատիկայի ուսուցիչների 84 տոկոսը նշել է, որ աշակերտների մեծ մասը սովորելու ցանկություն ունի (միջին միավորը՝ 3,6)<sup>3</sup>, 97 տոկոսը՝ որ աշակերտների համար իրենց դասավանդած առարկան հասկանալի է, և 98 տոկոսը՝ որ նա դասից առաջ մանրամասն նախապատրաստվում է դասին: Ըստ որում՝ ուսուցիչների 80 տոկոսին դպրոցում ամենաշատը մտահոգում է աշակերտների ուսման ցածր որակը (միջին միավորը՝ 3,5), 84 տոկոսին՝ ուսումնական նյութի ծանրաբեռնվածությունը (միջին միավորը՝ 3,6), 47 տոկոսին՝ ուսուցման մեթոդների նվազ արդյունավետությունը (միջին միավորը՝ 3,5), 58 տոկոսին՝ դպրոցի ուսումնանյութական ռեսուրսների պակասը (միջին միավորը՝ 3,6): Մաթեմատիկայի դեպքում նույնպես վերոնշյալ գործոնները ազդեցություն չեն ունեցել գնահատման արդյունքների վրա:

### 3.4. Միջին միավորները՝ կախված ուսուցիչների դասավանդման ձևերից

Հարցաթերթիկում ներառված էր հարց. «Եթե ձեր դասարանում 4-5 աշակերտ անվերջ անպատրաստ են ներկայանում և դասը չեն լսում, ի՞նչ քայլեր եք ձեռնարկում»: Այս հարցին ուսուցիչների 25 տոկոսը պատասխանել է, որ պարզում է պատճառը, առարկայի հանդեպ մեծացնում է հետաքրքրությունը, կիրառում է նոր մեթոդներ, խմբային աշխատանքի շնորհիվ աշակերտներին ներգրավում է դասապրոցեսի մեջ (դասավանդման ժողովրդավարական ձևեր), 67 տոկոսը՝ անբավարար է

<sup>3</sup> Փակագծերում տրված են մաթեմատիկայի արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորները՝ տվյալ ընտրանքին համապատասխան:

նշանակում, տեղեկացնում է դասղեկին, ծնողին, տնօրենին, կրկին բացատրում է նյութը, ցուցաբերում է անհատական մոտեցում, դասերից հետո անցկացնում է լրացուցիչ պարապմունքներ (դասավանդման ավտորիտար ձևեր):

Վերլուծությունը պարզել է, որ ուսուցիչների դասավանդման տարրեր ձևերի դեպքում ընթացիկ արդյունքների արտաքին գնահատման միջին միավորները միմյանցից չեն տարբերվում, այսինքն՝ այս գործոնը նույնպես ազդեցություն չի ունեցել գնահատման արդյունքների վրա:

### **3.5. Աշակերտների մշտապես ակտիվ մասնակցությունը դասին՝ որպես առաջադիմության վրա ազդող գործոն**

**Տնօրենները** 11-րդ դասարանի «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի դասավանդման արդյունավետությունը 10 միավորանոց սանդղակում գնահատել են 7, մաթեմատիկայինը՝ 6,4:

**Հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչները** 11-րդ դասարանում իրենց առարկայի դասավանդման արդյունավետությունը 10 միավորանոց սանդղակում գնահատել են 7,4: Նրանց 2 տոկոսը նշել է, որ դասին մշտապես ակտիվ մասնակցում է աշակերտների 10-20%-ը (միջին միավորը՝ 4,6), 18 տոկոսի մոտ ակտիվ է եղել աշակերտների 30-40%-ը (միջին միավորը՝ 4,7), 53 տոկոսի մոտ՝ աշակերտների 50-70%-ը (միջին միավորը՝ 5,1), 24 տոկոսի մոտ՝ աշակերտների 80-90%-ը (միջին միավորը՝ 5,2):

**Մաթեմատիկայի ուսուցիչները** 11-րդ դասարանում իրենց առարկայի դասավանդման արդյունավետությունը 10 միավորանոց սանդղակով գնահատել են 7,0: Նրանց 4 տոկոսը նշել է, որ դասին մշտապես ակտիվ մասնակցում է աշակերտների 10-20%-ը (միջին միավորը՝ 3,4), 31 տոկոսի մոտ ակտիվ է աշակերտների 30-40%-ը (միջին միավորը՝ 3,3), 57 տոկոսի մոտ՝ աշակերտների 50-70%-ը (միջին միավորը՝ 3,6), 8 տոկոսի մոտ՝ աշակերտների 80-90%-ը (միջին միավորը՝ 4,2):

### **Մոսկվայի Լազարյան Ճեմարան**

Դեռևս Շահ Աբասի օրոք Լազարյանների նախնիները Հայաստանից տարվել են Պարսկարստան: 18-րդ դարի կեսերին Ղազար Ղազարյանը իր 4 որդիների հետ տեղափոխվում է Ռուսաստան: Լազարյանների ամենամեծ ազգասիրական գործը եղել է Մոսկվայի Լազարյան Ճեմարանի հիմնադրումը, որը կապվում է Հռվիաննես և Հռվակիմ Լազարյանների անվան հետ:

1814թ. հիմնադրվում է դպրոցի շենքը: 1815թ. Մայիսի 4-ին սկսվում են ուսումնական պարապմունքները, որն էլ համարվում է Լազարյան Ճեմարանի գոյության սկիզբը: Դպրոցը հիմնվում է <<Լազարյան ուսումնարան՝ հայկական ծագման երեխանների դաստիարակության համար>> անունով: Սակայն արդեն 1817 թվին Լազարյանները փորձում են իրենց ուսումնարանին տալ <<Հայկական Լազարյան Ճեմարան>> անունը: 1827թ. դեկտեմբերի 26-ին հաստատվում է ուսումնարանի նոր անունը՝ <<Արևելյան լեզուների՝ Լազարենների հայկական ինստիտուտ>>: Լազարյան Ճեմարանի նպատակադրման ու պրոֆիլի հիմնական գծերը՝ առաջին հերթին հայ մանուկներին ավանդել են այն ընդհանուր գիտություննը և լեզուները, որոնք անհրաժեշտ են ինչպես անձնական բարեկեցության, այնպես էլ պետական ծառայության համար. Միաժամանակ օժանդակել հայերենի և այլ արևելյան լեզուների ուսումնասիրությունը

## **Индивидуальный подход к каждому ученику**

### **Резюме**

Не секрет, что начиная со средних классов желание учиться у школьников постепенно уменьшается, и активизируется только в старших классах, что связано с необходимостью подготовки для поступления в высшие учебные заведения. С вопросом “Каким образом мотивировать желание учиться?” редакция обратилась к некоторым специалистам области образования. Мы считаем, что ниже приведенные ответы в очередной раз послужат почвой для размышлений по данному вопросу.

### **Individual approach to each child**

#### **Summary**

It's not a secret that from mid classes pupils don't want to study and they start to learn in high grades which is connected with entering the universities. We have applied to some specialists in educational sphere with the question "How can we promote pupils desire to study?" And we think that the answers printed here will be a reason to think about the problem once more.

### **Ամփոփում**

Այս արդյունքները փաստում են, որ դասին մշտապես ակտիվ մասնակցող աշակերտների տոկոսի աճման հետ մեծացել են նաև արտաքին գնահատման միջին միավորները՝ հայոց լեզվի և հայ գրականության դեպքում 4,6-ից հասնելով 5,2-ի, մաթեմատիկայի դեպքում 3,3-ից՝ 4,2-ի։ Հետևաբար, ինչպես հայոց լեզվի և հայ գրականության, այնպես էլ մաթեմատիկայի ուսուցման արդյունքներում աշակերտների առաջադիմությունը կախված չի եղել ոչ ուսուցիչների տարիքից կամ մանկավարժական ստաժից, ոչ էլ ուսումնական նյութի ծանրաբեռնվածությունից, ուսուցման մեթոդների արդյունավետությունից կամ դպրոցի ուսումնանյութական ռեսուրսների պակասից։ Աշակերտների առաջադիմությունը կապված է եղել դասին նրանց ակտիվ մասնակցության հետ՝ դասին մեծ տոկոսով մշտապես ակտիվ մասնակցող աշակերտների միջին միավորներն ավելի բարձր են եղել, քան դասի ժամանակ քիչ ակտիվություն ցուցաբերող աշակերտների միջին միավորները։ Իզուր չէ, որ աշակերտների 10-40%-ի ակտիվությունն ապահովող հայոց լեզվի ուսուցիչները իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7, մաթեմատիկայի ուսուցիչները՝ 6, իսկ աշակերտների 80-90%-ի ակտիվությունն ապահովող ուսուցիչների մեծամասնությունը՝ 8։


### **3.6. Աշակերտների դասակարգումն ըստ յուրաքանչյուր ուսուցչի աշակերտների հավաքած միջին միավորների**

Դրակտիկայում ընդհանուր միջինից 10 և ավելի տոկոսով ցածր միավոր ունեցող աշակերտները համարվում են չառաջադիմոր, ընդհանուր միջինը 10 և ավելի տոկոսով գերազանցող միավոր ունեցողները՝ առաջադիմող, մյուսները՝ միջին առաջադիմություն ունեցող։

«Չառաջաղիմող աշակերտներ», «Միջին առաջաղիմություն ունեցողներ», «Առաջաղիմող աշակերտներ» դասակարգումը կատարվել է ոչ թե անհատ աշակերտների հավաքած միավորներով, այլ այն ուսուցիչների աշակերտների, որոնց արտաքին գնահատման միջին միավորները գտնվում են հետևյալ սահմանագծերում.

Առարկան	Չառաջաղիմող աշակերտներ	Միջին առաջաղիմություն ունեցողներ	Առաջաղիմող աշակերտներ
Հայոց լեզու և հայ գրականություն	մինչև 4,5 միավոր	4,6-5,6 միավոր	5,7-ից բարձր
Մաթեմատիկա	մինչև 3,1 միավոր	3,2-3,9 միավոր	4,0-ից բարձր

Ստորև բերված դիագրամը ներկայացնում է առաջաղիմող, միջին առաջաղիմություն ունեցող և չառաջաղիմող աշակերտների տոկոսները.



### 3.7. Ուսուցիչների դասավանդման արդյունավետությունը

Ստորև բերված դիագրամը ներկայացնում է հայոց լեզվից և հայ գրականությունից, ինչպես նաև մաթեմատիկայից արտաքին գնահատման և ներքին գնահատման (կիսամյակային) միջին

ինչու է այսպես լինում և այլն: Այսպիսի գիտելիքը իմաստալից կլինի: Գիտելիքների իմաստավորված յուրացումը շատ կարևոր է, ինչին, ցավոր, մենք դպրոցում ուշադրություն չենք դարձնում: Ուսուցիչը չի կողմնորոշվում, թե որ մեթոդը որտեղ և ինչ ձևով կիրափի: Որոշ ուսումնական նյութեր երեխաներին հետաքրքրելու համարպետք է պատումի ձևով ներկայացնել, որոշ նյութեր ել՝ պրոբլեմային իրավիճակներ ստեղծելով: Ուսուցիչը պետք է մշտապես գտնի աշակերտին հետաքրքրելու ձևերը, նրանից ներքաշի ստեղծագործական, որոնողական գործունեության մեջ:

Ուսուցման անրավարար որակի պատճառներից մեկն եւ մանկավարժական կաղըերի ցածրկրթական մակարդակն է: Մենք միշտ հպարտացել ենք մեր մտավոր պոտենցիալով, բայց դա արդեն սկսել է իրականությանը չհամապատասխանել: Մեր մանկավարժների մեծամասնությունը տեղյակ չէ հանրակրթության հիմնախնդիրներից: Մի խորք՝ պատճառները բազմաթիվ են և բազմազան:


Հարցազրույցը վարեց՝ Լուիզա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ

այդ դասագիրքը չի կարող գրավիչ լինել, տրամադրել, որ երեխան: Կարենոր թն նաև ուսումնական նյութի ծավալը և բովանդակությունը: Խոսենք, մասնավորապես, <<Հայոց պատմություն>> առարկայի դասագրքերի մասին: Ներկայացվող պատմությունը թվերի ու փաստերի մի խառնակույտ է, որից ոչ մեկը գլուխ չի հանում, անհասկանելի է, թե ինչի են դրանք պետք: Կարծում եմ, պետք էաշակերտին ներկայացնել այն ուսանելի դրվագները, որոնք եղել ենմեր պատմության մեջ, դրանցովմատուցել ուսումնական նյութը՝ միանգամայն կոնկրետ նպատակ ունենալով: Պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքով: Տիգրան Մեծի պատմության այս հատվածը մատուցելով՝ նպատակ ունեմ երեխայի մեջ ձևավորելու առաջնորդի կերպար, Նժեկի հետ կապված այս դրվագ ներկայացնելով՝ ցանկանում եմ հզոր հայրենասերի, ցեղակրոնության գաղափարներ պատվաստեմ երեխայի մեջ և այլն: Եթե այսպիսի կոնկրետ դրվագներով ու գաղափարներով մատուցվիպատմությունը, այն կդառնա ուսանելի:

Որպեսզի աշակերտը սովորի, նրան պետք է դարձնել ուսուցման սուբյեկտ. աշակերտը պետք է զգա, ինքն է գիտելիքի տերը, ինքն է հայթայթում գիտելիքը՝ ուսուցից, դասագրքից տեղեկատվության այլ աղբյուրներց: Հակառակ դեպքում աշակերտը դառնում է ուսուցչի և դասագրքի ներգործության օբյեկտ, ուսուցիչը մանիպուլացիաներ է կատարում աշակերտի հետ, ծնող է կանչում, անբավարար է նշանակում, վիրավորում է և այլն: Այս ձևով սովորածը գիտություն չէ:

Աշխարհում ընդունված է, որ ուսուցումը ուսումնահետազոտական գործունեություն պետք է լինի: Այսինքն՝ դասը պետք է երեխային մատուցել ոչ թե որպես պատրաստի արտադրանք, այլ այն պետք է դրդի երեխային իրականացնելու հետզոտական գործնթաց: Ներկայացվում է հիմնախնդիրը, և աշակերտները փորձում են այն դասի ընթացքում լուծել: Սա մանկավարժության մեջ կոչվում է պրոբլեմային ուսուցում: Օրինակ՝ ջուրն ենք ուսումնասիրում: Երեխային հիշեցնում ենք, որ բոլոր մարմինները տաքանալիս ընդարձակվում են, եթե բայց շատ մեջ լցված ջուրը սառելիս ոչ թե սեղմվում է, այլ ընդարձակվում: Սա արդեն պրոբլեմ է: Սկսում ենք երեխաների հետ քննարկել այս հարցը՝ ուրիշ ինչ այսպիսի նյութերի եք հանդիպել.

միավորներ՝ «Առաջադիմող աշակերտներ», «Միջին առաջադիմություն ունեցողներ» և «Չառաջադիմող աշակերտներ» դասակարգմամբ:



Հայոց լեզվից և հայ գրականությունից առաջադիմող և չառաջադիմող աշակերտների արտաքին գնահատման միջին միավորները տարբերվում են 2 միավորով, իսկ կիսամյակային գնահատականների միջինները՝ 1,1, մաթեմատիկայի արտաքին գնահատման միջինները՝ 2,1, կիսամյակային գնահատականների միջինները՝ 0,8 միավորով:

Հայոց լեզվից և հայ գրականությունից առաջադիմող աշակերտների ուսուցիչների 50 տոկոսը իր առարկայի դասավանդման արդյունավետությունը գնահատել է 7, 25 տոկոսը՝ 8, 10 տոկոսը՝ 9, մինչդեռ չառաջադիմող աշակերտների ուսուցիչների 11 տոկոսը իր առարկայի դասավանդման արդյունավետությունը գնահատել է 6, 36 տոկոսը՝ 7, 30 տոկոսը՝ 8, 8 տոկոսը՝ 9: Պետք է նշել, որ թեև առաջադիմող և չառաջադիմող աշակերտների ուսուցիչների դասավանդման արդյունավետության գնահատականները միմյանցից քիչ են տարբերվում, սակայն շատ են տարբերվում դասի ընթացքում մշտապես ակտիվ աշակերտների տոկոսները: Առաջադիմող

աշակերտների ուսուցիչների 80 տոկոսը նշել է, որ դասի ընթացքում մշտապես ակտիվ մասնակցում է աշակերտների 60-90 տոկոսը, այն դեպքում, եթե չառաջադիմող աշակերտների ուսուցիչների 47 տոկոսն է նշել այդ մասին, նրանց 29 տոկոսը նշել է աշակերտների 10-40 տոկոսի, 23 տոկոսը՝ աշակերտների կեսի մշտապես ակտիվ մասնակցության մասին: Հայոց լեզվից և մաթեմատիկայից չառաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչների 79, առաջադիմող աշակերտներ ունեցողների 65 տոկոսը նշում է, որ դասին անպատրաստ ներկայացող աշակերտների հետ անցկացնում է անհատական գրույց, դասերից հետո՝ պարագաներ, տեղեկացնում է ծնողին, դասղեկին, տնօրենին, դնում է անբավարար գնահատական, իսկ չառաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչների 17, առաջադիմող աշակերտներ ունեցողների 26 տոկոսը նշում է, որ բարձրացնում է աշակերտների ինքնավատահությունը, առարկայի նկատմամբ հետա-քրքրությունը, ցուցաբերում է անհատական մոտեցում, կազմակերպում է խմբային աշխատանք, կիրառում է նոր մեթոդներ:

Արդյունքում՝ առաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչները դասի ընթացքում ապահովում են աշակերտների ավելի մեծ ակտիվություն, իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատում են ավելի բարձր, քան չառաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչները: Առաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչների շրջանում 14 տոկոսով պակաս են ուսուցակենտրոն ուսուցմամբ դասավանդողները և 9 տոկոսով ավելի են աշակերտակենտրոն ուսուցմամբ դասավանդողները՝ չառաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչների համեմատությամբ: Հարկ է ավելացնել նաև այն, որ առաջադիմող աշակերտներ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների 35, մաթեմատիկայի ուսուցիչների 30 տոկոսը ցանկություն է հայտնել մասնակցելու առարկայական, հայոց լեզվի ուսուցիչների 55, մաթեմատիկայի ուսուցիչների 39 տոկոսը՝ մեթոդական, հայոց լեզվի ուսուցիչների 40, մաթեմատիկայի ուսուցիչների 35 տոկոսը՝ հոգեբանամանկավարժական դասընթացների: Այդ դասընթացներին մասնակցելու ցանկություն են հայտնել չառաջադիմող աշակերտներ ունեցող հայոց լեզվի ուսուցիչների համապատասխանաբար՝ 18, 64, 23, մաթեմատիկայի՝ 28, 49, 31 տոկոսը: Այսինքն՝ բոլոր դեպքերում մեթոդական

նորմալ մթնոլորտ լինի և աշակերտներն իրենց լավ զգան, հաճույքով սովորեն:

Հաջորդը աշակերտի սոցիալական պահանջմունքներն են: Օրինակ՝ երեխան ինքնախրացման ցանկություն ունի, հասկանում է, որ իր մեջ կան պոտենցիալ հնարավորություններ և ուզում է իրականացնել դրանք: Դպրոցը պետք է օգնի նրան իրականացնելու այդ պահանջմունքը, օգնի նրան ինքնադրսանորվելու:

Ինքնախրացում առանց ինքնադրսանորման չես կարող լինել: Իրականացնել և բացի այդ, սոցիալական պահանջմունքը, որշրջապատի խրախուսանքին արժանանա այդ իրքնախրացման պրոցեսում լուծում է նաև այդ խնդիրը: Մեր դպրոցները ինչքանով են կարողանում բավարարել աշակերտների այդ՝ ինքնախրացման պահանջմունքը: Որպեսզի դա բավարարվի, պետք է համակարգը բավարար ձկուն լինի, այսինքն՝ պետք է աշակերտին հնարավորինս ազատություններ տա, իհարկե նաև կարողանա կառավարել: Հակառակ դեպքումերեխայի պոտենցիալ հնարավորությունների զգալի մասը մնում է չիրացված: Ուստիև դպրոցը նրա համար դառնում է անհետաքրքիր:

Ուսուցման որակի վրա ազդում եմ նաև կրթական չափորոշիչները, ուսումնական ծրագրերը և դասագրքերը: Չափորոշիչներն ու ծրագրերը պետք է կազմվեն՝ ելնելով կրթության բովանդակությունից, այսինքն՝ մենք պետք է հստակեցնենք, թե ինչ որակներ ենք ուզում ձևավորել աշակերտի մեջ և թե մեր այսօրվա հասարակությունը ինչ որակների մարդու կարիք ունի: Ասենք, ուզում ենք, որ մարդն ունենա խորը, կայուն գիտելիքներ, լինի ձկուն, կարողանա հարմարվել սոցիալական միջավայրում, լինի հայրենասեր, ստեղծագործական կարողություններով օժտված, իր կարողությունները կարողանա օգտագործել անկախ իրադրություններում և այլն:

Այդ որակները ճշտելուց հետո պետք է ամեն ինչ նպատակառդպի դրանց ձևավորմանը՝ և չափորոշիչները, և ուսումնական ծրագրերը, և ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները, և դասագրքերը: Բայց, ցավոք, այդպես չի արվում: Օրինակ, 7-րդ դասարանի ֆիզիկայի դասագրում այնպիսի բարդ բանաձևեր ու հասկացություններ են լցրել, որ հոգեբանորեն այդ տարիքի երեխային հետաքրքիր չեն: Բնականաբար,

գիտականտեսակետից քննենք հարցը, ապա պարզ է, որ մարդը, աշակերտը չի սովորի, եթե չբավարարվեն նրա ինչ-ինչ պահանջմունքները: Որոնք են այդ պահանջմունքները: Առաջին՝ իմացական պահանջմունք՝ մարդու բնատուր հետաքրքրությունները: Փոքր երեխան ուզում է շատ հարցերի պատասխաններ իմանալ:

Տարիքից կախված նրա հարցադրումները փոխվում են: Եթե 4-5 տարեկան երեխային հետաքրքրում է, ասենք, թե ինչպես է ինքը ծնվել, ապա 6-7 տարեկանում նա հետաքրքրվում է շրջապատով, ընկերներով, հասունացման տարիքում այլ հետաքրքրություններ են առաջանում: Ժամանակինթացքում դրանցից մեկը գերակայում է, և եթե այդ գերակայող պահանջմունքը կրթական համակարգը չի բավարարում, ապա երեխայի համար սովորելն անհետաքրքիր է դառնում: Օրինակ՝ երեխան մտնում է դպրոց, 1-2 դասից հետո նա հասկանում է, որ այստեղ ինչ-որ արգելվներ կան. չի կարելի ցանկացած պահի դուրս գալ, ընկերոջ հետ խոսել, ձեռքերը տարածել այս ու այն կողմ, իսկ եթե դասերդ չեւ պատրաստում ուսուցիչը կարող է քեզ ինչ-որ ածականներ կպցնել: Այս ամենը երեխայի մեջ բացասական հույզեր են առաջացնում: Սա վկայում է, որ դպրոցում մանակավարժական գործընթացը լավ չի կազմակերպված: Դպրոցը, որպես կրթական միջավայր, չի հարմարեցված աշակերտի տարիքային առանձնահատկություններին, նրա տարիքային հոգեբանությանը, որպեսզի ըստ այդմ երեխայի հետաքրքրությունները բավարարվեն, պայմաններ ստեղծվեն, որ աշակերտը, լավ զգա իրեն դպրոցում, սիրի այդ կրթական միջավայրը: Ուսուցման որակի վրա ազդում է նաև այն, թե ինչպես է կազմակերպվում ուսուցման գործընթացը, այսինքն՝ ինչպիսի փոխազդեցություններ են իրականանում աշակերտական կողեկտիվի և ուսուցչի միջև և ինչ պայմաններ են դրվում: Դաս-դասարանային համակարգի պայմաններից մեկն այն է, որ եթե մի աշակերտ դաս է պատմում, մյուս աշակերտները պետք է լուս նատած նրան լսեն՝ պասիվ հայեցողական վիճակում լինեն: Ուսումնական նման գործընթացը չի նպաստում, որ ուսումնական


դասընթացների պահանջարկը մեծ է մյուս դասընթացների համեմատությամբ, սակայն չառաջադիմող աշակերտներ ունեցող ուսուցիչների ավելի մեծ տոկոսն է ցանկություն հայտնել մասնակցելու մեթոդական դասընթացների, քան առաջադիմող աշակերտներ ունեցողները:

### 3.8. Ինչը փոխել ուսումնական գործընթացում

Այն հարցին, թե ինչը կարելի է փոփոխել ուսումնական գործընթացում աշակերտների ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար, տնօրենների 35, ուսուցիչների 39 տոկոսը պատասխաննել է, որ անհրաժեշտ է բեռնաթափել ծրագրերը, բարելավել դասագրքերը, տնօրենների 9, ուսուցիչների 20 տոկոսը՝ նվազեցնել դասարանի աշակերտների թիվը, տնօրենների 13, ուսուցիչների 7 տոկոսը՝ ավագ դպրոցի հանդեպ ստեղծել վստահություն, աշակերտներին ավագ դպրոց ընդունել հարցազրույցով, հոսքերը կոմպելեկտավորել՝ ենելով նրանց կարողություններից, տնօրենների 13 տոկոսը՝ հարստացնել ուսումնանյութական բազան, 12 տոկոսը՝ վերանայել աշակերտների թվով ֆինանսավորումը, ուսուցիչների 7 տոկոսը՝ կիրառել ավելի արդյունավետ մեթոդներ և այլն:


## 4. Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

### 4.1. Ըստրանքն ըստ դպրոցների տիպերի



Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը կատարվել է այնպես, որ մասնակիցները հնարավորինս համաշափ բաշխված լինեն միջնակարգ և ավագ դպրոցների միջև. մասնակիցների 59 տոկոսը ավագ, 34 տոկոսը միջնակարգ դպրոցներից են, 7 տոկոսը՝ վարժարաններից: Վարժարանների աշակերտների տոկոսը փոքր է, քանի որ Հայաստանում վարժարանների թիվը փոքր է:

#### 4.2. Արտաքին գնահատման միջին միավորներն ըստ դպրոցների տիպերի



Արտաքին գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ինչպես 2012թ. նոյեմբերին, այնպես էլ 2013թ. փետրվարին ավագ դպրոցի աշակերտների միջին միավորները բարձր են եղել միջնակարգ դպրոցի աշակերտների միջին միավորներից: Եթե նախորդ արտաքին գնահատման արդյունքում վարժարանի աշակերտներն ունեին ամենափոքր միջին միավորը, ապա այս գնահատման դեպքում վարժարանի աշակերտները ցուցաբերել են ավելի բարձր արդյունքներ: Դա կախված է եղել նրանից, թե որ վարժարանն է մասնակցել արտաքին գնահատմանը: Ավագ դպրոցի միջին միավորները 0,4 միավորով բարձր են եղել միջնակարգ դպրոցների և 0,5-1,1-ով ցածր՝ վարժարանների միջին միավորներից:

«Հեղինակություն» հերոսների շարժուձը, անգամ խոսում նույն առողջանությամբ:

Ցանկությունս այն է, որ եթերով հեռարձակվեն բարի, դրական թեմաներով հաղորդումներ, երեխաների համար ցուցադրվեն հետաքրիր, դաստիարակչական, նրանց տարիքին համապատասխանող ֆիլմեր:

Ավարտելով խոսքս՝ուզում եմ դիմել կրթության ոլորտի այն աշխատողներին, ովքեր ինչ-որ առնչություն ունեն նոր օրենքների, ծրագրերի, դասգրքերի ստեղծման և մշակման հետ. ավելի ուշադիր և հետևողական եղեք, ամեն անգամ ինչ-որ փոփոխություն կատարելիս հաշվի առնեք, որ գործ ունեքերեխանների հետ: Չի կարելի անվերջ փորձարկման ենթարկել աշակերտներին նոր ծրագրերով ու դասագրքերով:

**Սարգիս ԳԱԼՈՅԱՆ, Կրթության ազգային ինստիտուտի մանկավարժության գիտահետազոտական բաժնի վարիչ.**

Մենք ինստիտուտում մենք ուսումնասիրություններ ենք կատարում մանկավարժության հետ առնչվող բոլոր հարցերի շուրջ: Մասնավորապես, ուսումնասիրել ենք տարբեր երկրներում՝ Շվեյցարիայում, Դանիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում կրթության կազմակերպման փորձը՝ ինչ մեթոդներ են օգտագործում, ուսուցման մոտիվացիան ինչպես են բարձրացնում, ինչպես են աշակերտներին շահագրգոռում և այլն: Այնպես որ, բավականին ուսումնասիրել ենք համաշխարհային փորձը:

Որպեսզի աշակերտը դպրոցում սովորի, լիարժեք ուսումնական գործունեություն ծավալի, անհրաժեշտ է մոտիվցիա, այսինքն՝ ինչ-որ դրդապատճառ, որի շնորհիվ նա ուզիսովորել: Եթե լուրջ

ուշադիր լսի, հարցեր տա, հետաքրքրվի դասավանդվող նյութով, անհնար է, որ նա անտարբեր մնա տվյալ առարկայի նկատմամբ, չկարդա, չսովորի:


Մի հարցի էլ կուզեի անդրադառնալ՝ տնային աշխատանքներին: Գիտենք, որ յուրաքանչյուր ուսուցիչ ամեն օր իր առարկայից տնային աշխատանք է տալիս աշակերտը ամեն օր փորձում է տանը լուծել խնդիրներ և վարժություններ մաթեմատիկայից, սովորել 4-5 պատմողական առարկա, անգիր անել հայ գրականությունից հանձնարարված բանաստեղծությունը և այն: Բնականաբար, հաճախ նա այդ ամենն անել չի կարողանում կամ չի հասցնում: Ուստի նա այս կամ այն առարկայից մի քանի թեմա չի յուրացնում, դրա հետևանքով մյուս թեմաները դառնում են անհասկանալի և աստիճանաբար կորչում է հետաքրքրությունը տվյալ առարկայի հանդեպ: Ես կառաջարկեի, որ տնային հանձնարարություններ քիչ տրվեն, նույնիսկ տարրական դասարանում:

Երեխաների կրթության և դաստիարակության վրա լուրջ ազդեցություն ունեն համացամցն ու հեռուստատեսությունը: Համացանցն ինքնին շատ անհրաժեշտ է երեխաներին, եթե օգտագործվում է տեղին և ճիշտ՝ լրացուցիչ տեղեկություններ դասի վերաբերյալ, ինչ-որ երևույթի, հեղինակի, մի խոսքով՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու համար: Բայց եթե երեխան մինչև ուշ գիշեր նստում է համակարգչի առջև, խաղ է խաղում կամ ինչ-որ ուրիշ, իր տարիքին չհամապատասխանող հետքրքրություններ փնտրում՝ սա արդեն միայն բացասաբար է անդրադառնում երեխայի դաստիարակության ու առողջության վրա:

Ինչ վերաբերում է հեռուստատեսությանը, ապա, բոլորս գիտենք, այն դաստիարակության հզոր միջոց է, որով կարելի թե՛ լավ, թե՛ վատ աղեցություն թողնել երեխաների վրա: Բայց մենք ականատեսն ենք այն բանի, որ այսօր ավելի շատ է բացասական ազդեցությունը: Երեխաների համար օրինակ են ծառայում կինոնկարների և սերիալների հերոսները, հաճախ՝ բացասական: Եվ նրանց բառապաշտությունները, նրանք ընդօրինակում են ժարգոնային բառեր, արտահայտությունները, նրանք ընդօրինակում են

## 4.2. Արտաքին գնահատման միավորների բաշխումն ըստ դպրոցների տիպերի

Ավագ և միջնակարգ դպրոցները, ինչպես նաև վարժարանը միմյանցից տարբերվել են ոչ միայն միջին միավորներով, այլև միավորների բաշխմամբ: Ստորև ներկայացվում են միավորների բաշխման տոկոսներն ըստ առարկաների:



## 4.3. Վերլուծություն ըստ դպրոցի աշակերտների թվի

Ստորև առանձին-առանձին ներկայացված են մինչև 200, 201-400, 401-600 և 600-ից ավելի աշակերտ ունեցող ավագ և միջնակարգ դպրոցների, ինչպես նաև վարժարանների արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորները:

	1-200 աշակերտ ունեցող դպրոցներ	201-400 աշակերտ ունեցող դպրոցներ	401-600 աշակերտ ունեցող դպրոցներ	600-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցներ
<b>Հարց լեզու և հայ գրականություն</b>				
Ավագ դպրոցներ	5.4	5.9	5.8	5.7
Միջնակարգ դպրոցներ	5.1	5.5	5.3	5.1
Վարժարաններ	6.2			
<b>Մաթեմատիկա</b>				
Ավագ դպրոցներ	4.0	4.4	4.5	4.1
Միջնակարգ դպրոցներ	3.9	4.1	4.1	3.6
Վարժարաններ	5.4			

Աղյուսակից պարզ է դառնում, որ կախված աշակերտների թվից՝ դպրոցների միջին միավորները տարբերվում են, թեև տարբերությունները փոքր են: Ավագ և միջնակարգ դպրոցներից համեմատաբար արդյունավետ է 201-400 և 401-600 աշակերտ ունեցող դպրոցների աշխատանքը: Երկու դեպքում էլ մինչև 200 աշակերտ ունեցող դպրոցների արդյունքները համեմատաբար ցածր են, ինչը չի կարելի ասել վարժարանների մասին, որոնք ունեն մինչև 200 աշակերտ և բարձր միջին արդյունքներ:

#### 4.4. Տնօրենների և ուսուցիչների հարցման արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

**Ավագ դպրոցի** հայոց լեզվի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7,5, նրանց մեծամասնության (67%-ի) աշակերտների 60-90 տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, արտաքին գնահատման միջինը՝ 5,2 (ընդհանուր միջինից 0,1 միավորով բարձր): Մաթեմատիկայի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7,1, նրանց 54%-ի աշակերտների 60-90

ուշադրության կենտրոնում են: Այդերեխաները առավել կարիք ունեն ուշադրության, հոգատարության, ինչի պակասը պետք է լրացնի դպրոցը: Ուսուցիչը պետք է կարողանա հասկանալ, թե ինչ հոգեվիճակում է աշակերտը և յուրաքանչյուրի նկատմամբ ցուցաբերի անհատական մոտեցում: Հակառակ վերաբերմունքը կարող է պատճառ դառնալ ուսման նկատմար երեխայի անտարբերության:

Առանձնահատուկ ուշադրության կարիք ունեն տարրական դպրոցի երեխաները: Առաջին օրը դպրոց եկած երեխան գրեթե ոչինչ չգիտի դպրոցի կարգուկանոնի մասին, դասը, դասարանը, դասագիրքը, տետրը, ամեն ինչ նորություն է նրա համար: Ուստի ուսուցիչն ու ծնողը շատ նրբանկատ և հետևողական պետք է լինեն, որպեսզի երեխան կարողանա կամաց-կամաց ընտելանալ այդ ամենին, իր նոր կարգավիճակին:

Երկարամյա աշխատանքային իմ փորձը ինձ հիմք է տալիս պնդելու, որ այն երեխաները, ովքեր մինչև դպրոց գնալը հաճախել են մանակապարտեզ, ավելի պատրաստված են, ավելի լավ են իրենց դրսուրում դասարանում: Ու դրա հետ կապված ասեմ, որ ինձ համար անընդունելի է, ես դեմ եմ վեց տարեկանից դպրոց հաճախելու գաղափարին, որովհետև մանակապարտեզի ավագ խումբը տեղափոխել դպրոց, որը չունի համապատասխան պայմաններ՝ քնելու, սնվելու խաղալու, և երեխային, ինչ-որ առումով, զրկել մանկությունից, չեր կարելի: Այդ տարիքի երեխայի համար դժվար է 45 րոպե նստելն ու ուշադրի ուսուցչին լսելը: Այդուամենայնիվ, կարծում եմ, որ այդ դասարաններումդասերը պետք անցկացվեն խաղի ձևով:

Հետագա տարիներին դպրոցում դասավանդվող առարկաների քանակն ավելանում է: Արդեն 6-7-րդ դասարաններում երեխաների ծանրաբեռնվածությունը մեծանում է: Ներկայիս դպոցական ծրագրերը խիստ հազեցած են: Թեև բազմից քննարկվել է դրանք թեթևացնելու հարցը, սակայն ոչ մի բան էլ չի փոխվել, դասավանդումը շարունակում ենք նույն խտացված ու ծանրաբեռնված ծրագրերով:

Շատ կարևոր եմ համարում դասի նկատմամբ աշակերտի դրական տրամադրվածության խնդիրը, և թե որքանով է այն նրան հետաքրքիր: Բնական է, եթե ուսուցիչը դասը վարի այնպես, որ աշակերտը լարված,

և այնքան անունների, տեղանունների է հանդիպում, որ անկախ իրենից կորում է հետաքրքրությունը այդ առարկայի հանդեպ:

Այսօր դժվար է ճիշտ դաստիարակել երեխային, քանի որ խիստ փոխված են արժեքները: Մենք դպրոցում աշխատում ենք երեխայի մեջ սերմանել բարձր արժեքներ՝ հայրենասիրություն, ընկերասիրություն, մարդասիրություն, բայց դրսում նա լրիվ ուրիշ բան է տեսնում: Հայտնի է, որ երեխան անում է այն, ինչ բոլորն են անում: Մենք անընդհատ լսում ենք մեր մեծերից՝ սովորիր, որ մարդ դառնաս, բայց հիմա, կարծես, մոտեցումն այլ է:

Ուսման նկատմամբ աշակերտի անտարբերության պատճառ կարող են լինել առաջին հայցքից մանրուք թվացող հանգամանքներ: Օրինակ՝ դպրոցի վատ արտաքին տեսքը, շենքային պայմանները, տեխնիկական հագեցվածությունը: Եթե դպրոցը հին է, վերանորոգման կարիք ունի, երեխան մի տեսակ անհավես է դպրոց զալիս, ծնողն էլմտածում է իր երեխային ավելի բարեկարգ դպրոցտանելու մասին: Եթե դպրոցը չունի լաբորատոր սարքավորումներ, դասագրքերում շարադրված փորձերը երեխայի աշքի առջև չեն կատարվում, ինչպե՞ս նա կարող է պատկերացնել ասենք, ֆիզիկական այս կամ այն երևույթը կամ քիմիական ռեակցիան:

Ցավով պիտի նշեմ, որ դպրոցը կորցրել է իր հեղինակությունը: Պետության վերաբերմունքն էլ դպրոցի նկատմամբ, ինչպես ասում են, այն չէ: Ես ուզում եմ, որ դպրոցի վարկանիշը բարձրանա, պետությունը, հասարակությունը, ծնողները ըստ արժանվույն գնահատեն դպրոցը: Չէ՞ որ մենք կրթում ենք մեր ապագան, ինչպիսի աշակերտներ կունենանք մենք այսօր, այդպիսին էլ կլինի մեր վաղվա օրը:

## **Հայկանուշ ԽԱԶԻԿՅԱՆ, Երևանի թիվ 21 դպրոցի հոգեբան-մանկավարժ.**

Շուրջ երեսուն տարի աշխատում եմ այս դպրոցում որպես հոգեբան: Իմ աշխատանքային գործունեության մեջ ես միշտ հաշվի եմ առել այն, որ գործ ունեմ երեխայի՝ անհատի հետ, որն ունի իր խոսքն ու կարծիքը: Երեխաները դպրոց զալիս են տարբեր ընտանիքներից, տարբեր դաստիարակություն ստացած, և բոլորը չեն, որ իրենց ընտանիքներում

տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, արտաքին գնահատման միջինը՝ 3,7 (ընդհանուր միջինից 0,2 միավորով բարձր):


**Միջնակարգ դպրոցի** հայոց լեզվի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7,2, նրանց 56%-ի աշակերտների 60-90 տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, արտաքին գնահատման միջինը՝ 4,8 (ընդհանուր միջինից 0,3 միավորով ցածր): Մաթեմատիկայի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 6,8, նրանց փոքրամասնության (30%-ի) աշակերտների 60-70 տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, իսկ մյուս ուսուցիչների՝ 10-50 տոկոսը, արտաքին գնահատման միջինը՝ 3,3 (ընդհանուր միջինից 0,2 միավորով ցածր):

**Վարժարանի** հայոց լեզվի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7, նրանց բոլորի (100%-ի) աշակերտների 60-90 տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, արտաքին գնահատման միջինը՝ 5,7 (ընդհանուր միջինից 0,6 միավորով բարձր): Մաթեմատիկայի ուսուցիչներն իրենց դասավանդման արդյունավետությունը գնահատել են 7,3, նրանց բոլորի (100%-ի) աշակերտների 50-90 տոկոսը մշտապես ակտիվ մասնակցում է դասին, արտաքին գնահատման միջինը՝ 4,8 (ընդհանուր միջինից 1,3 միավորով բարձր):

Թեև ավագ դպրոցի, միջնակարգ դպրոցի և վարժարանի ուսուցիչների դասավանդման արդյունավետության միջին գնահատականներն ունեն չնշին տարբերություններ, սակայն մեծ են այդ դպրոցների աշակերտների արտաքին գնահատման արդյունքների տարբերությունները: Ամենաբարձր արդյունքները գրանցվել են վարժարանում, ամենացածրը՝ միջնակարգ դպրոցում, ընդ որում վարժարանի աշակերտների 50-90 տոկոսն է մշտապես ակտիվ մասնակցում դասին, միջնակարգ դպրոցի աշակերտների՝ 10-50 տոկոսը: Վարժարանի ուսուցիչները ցանկություն են հայտնել մասնակցելու հիմնականում մանկավարժա-հոգեբանական, մասամբ՝ մեթոդական դասընթացների, միջնակարգ դպրոցի ուսուցիչները՝ հիմնականում մեթոդական, մասամբ՝ առարկայական և մանկավարժա-հոգեբանական,

ավագ դպրոցի ուսուցիչները՝ հիմնականում մեթոդական և մանկավարժա-հոգեբանական, մասամբ՝ առարկայական:

#### **4.5. Ավագ դպրոցների արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների համեմատությունը նախորդ տարիների արդյունքների հետ**



Դիմումամից պարզ է դառնում, որ հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորը աճել է նախորդ բոլոր տարիների համեմատությամբ, մաթեմատիկայինը՝ 2012թ. համեմատությամբ։ Պետք է նշել, որ տարեցտարի մեծացել է 9-10 գնահատականներ ստացող աշակերտների թիվը։ 2011թ. մարզերում հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 2, մաթեմատիկայից՝ 1 աշակերտից հասնելով 2013 թ. հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 71, մաթեմատիկայից՝ 43 աշակերտի։

Իմ կարծիքով, առաջին և հիմնական պառաճան այն է, որ մեզանում ծնողները իրենց երեխաների ուսման մասին մտածում են հիմնականում տարրական օղակում, մեկ էլ բուհ ընդունվելու նախաշեմին։ Միջին օղակը նրանց կարծես թե չի հետաքրքրում։

Տարրական դասարաններում ծնողները շատ հետևողական են, հետաքրքրվում են ամեն ինչով՝ դասվարի ընտրությունից սկսած մինչև դասապրոցեսի կազմակերպում, դասագիրք, հագուստ և այլն։ Չորրորդ դասարանից հետո ծնողը, ինչպես ասում են, լվանում է ձեռքերը և ամեն ինչ թողնում երեխայի հայեցողությանը։ Եվ երեխան կանգնում է ինքնուրույն սովորելու խնդրի առաջ։ Տարեցտարի ուսումնական առարկաները շատանում են, բարդանում, իսկ ծնողները չեն հասցնում և երբեմն էլ չեն կարողանում օգնել երեխաներին։

Ներկայումս բարձր դասարանցիների մեծ մասը պարապում է կրկնուսույցների մոտ՝ բուհ ընդունվելու նպատակով։ Իսկ ի՞նչ ապագա է սպասվում բուհն ավարտած երիտասարդին, ինչո՞վ է աջակցում պետությունը։ Շատ մեծ պրոբլեմ է աշխատանք գտնելը։ Բայց զարմանալի ազգ ենք, զրեթե բոլորը ձգտում են բուհընդունվել։

Հակասություն կա ներկայիս կրթական պահանջների և խնդիրների միջև, ինչը խիստ բացասաբար է ազդում է կրթության որակի վրա։ Ի՞նչ իմաստ ունի դպրոցական ծրագրում ներառել այդ ամենը, ինչն, ասենք, բուհի առաջին և երկրորդ կուրսերում են անցնում։ Օրինակ՝ առաջին կուրսում հայոց լեզվից պարզագույն գիտելիքներ են տրվում այն ուսանողին, որը բուհ ընդունվելիս բավականին բարդ թեստ է լուծել։ Ինչ որ մեխանիզմ պետք է մշակել այս ուղղությամբ, որպեսզի աշակերտները չհայտնվեն նման իրավիճակներում։


Հաջորդը հարցը, որի մասին կցանկանայի խոսել, ուսումնական առարկաների դասավանդման համար հատկացվող ժամաքանակն է։ Այսպես, 7-րդ դասարանում երեխաներն սկսում են ուսումնասիրել նոր՝ <<Քիմիա>> առարկան, այդ առարկայի հիմքն է դրվում, բայց դրա դասավանդմանը տրամադրվում է շաբաթական մեկ ժամ, ինչը շատ քիչ է երեխայի մեջ հետաքրքրություն առաջացնելու համար։ Էլ չխոսենք դասագրերի մասին։ Երեխան բացում է հայոց պատմության դասագիրքը

## 5. Արտաքին ընթացիկ գնահատման և ներքին գնահատման արդյունքների համեմատություն

### 5.1. Արտաքին և ներքին գնահատման արդյունքների դինամիկան

Արտաքին ընթացիկ գնահատումն անցկացվել է փետրվար ամսին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերից հունվար ամիսներին անցած նյութերի շրջանակում: Որպես ներքին գնահատման հիմք ընդունվել են առաջին կիսամյակի գնահատականները:

Ստորև դիագրամը կազմվել է արտաքին և ներքին գնահատումների ամրողական արդյունքների հիման վրա:



## Անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտին

Գաղտնիք չէ, որ հատկապես միջին դասարաններից սկսած աշակերտների մոտ աստիճանաբար նվազում է սովորելու ցանկությունը, և նրանք ակտիվանում են միայն բարձր դասարաններում՝ պայմանավորված բուհ ընդունվելու համար նախապատրաստվելու անհրաժեշտությամբ: <<Ինչպէս ն կարելի է խթանել աշակերտների մոտ սովորելու ցանկությունը>> հարցով դիմեցինք հանրակրթության քննազարդի մի քանի մասնագետների: Կարծում ենք՝ ստորև տպագրվող պատասխանները առիթ կհանդիսանան ևս մեկ անգամ մտորելու խնդրի շուրջ:

### Անիկ ՏԱՇՅԱՆ, Երևանի թիվ 94 դպրոցի փոխտնօրեն.

Բոլորս էլ զիտենք, որ ուսուցումը երկրորդ պլան է մղված ոչ միայն երեխաների շրջանում, այլև ընտանիքներում: Աշակերտները կորցրել են հետաքրքրությունը ուսման նկատմամբ, չկա մրցակցություն, գերազանցիկ կամ հարվածային լինելու, զիտելիքի նկատմամբ անտարբերություն կա: Որոնք են այդ երևույթի հիմնական պատճառները և լուրի շատ բան կա:

Դիագրամի տվյալների համաձայն՝ նախորդ տարիների համեմատությամբ 2013 թ. աճել են ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին գնահատման միջին միավորները:

## 5.2. Արտաքին և ներքին գնահատման արդյունքների տարբերությունները

Բոլոր տարիներին ներքին գնահատման միջին միավորները բարձր են եղել արտաքին գնահատման միջիններից 1,5-3,1 միավորով: Նախորդ տարվա համեմատությամբ 2013թ. կրծատվել է արտաքին և ներքին գնահատման տարբերությունը՝ հասնելով 1,7-ի (հայոց լեզու և հայ գրականություն) և 2,7-ի (մաթեմատիկա):

Բնական է, որ ներքին գնահատման միջին միավորները բարձր են արտաքին գնահատման միջին միավորներից, քանի որ՝

- արտաքին գնահատումն անցկացվել է 6 տարբերակով, որը նվազեցրել է արտագրելու հնարավորությունը,
- ներքին գնահատման 10 միավորանց համակարգը արհեստականորեն կրծատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 3-ը, մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները,
- ներքին գնահատումը հնարավորություն է տալիս կիրառելու բազմակողմանի գնահատման ձևեր, մինչդեռ արտաքին գնահատման հնարավորությունները սուլ են,
- ներքին գնահատման մեջ մեծ է սուլյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Թվարկված գործոնները թույլ են տալիս արտաքին և ներքին գնահատման միջին միավորների՝ 1,5-2 միավորով տարբերությունը համարել նորմալ:

## 6. Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի

### 6.1. Միջին միավորներն ըստ հոսքերի

Ավագ դպրոցների տնօրենների 17 և ուսուցիչների 11 տոկոսը գրել է, որ ավագ դպրոցների աշակերտների ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հոսքերի հստակ

## Применение тестов в учебном процессе

### Резюме

Одним из важнейших компонентов учебного процесса является проверка. Посредством проверки осуществляется обеспечение ряда педагогических функций, а именно: оценивания, мотивирования, преподавания, развития, воспитания. Один из многочисленных видов оценивания – тестирование. В педагогике тестирование выполняет три основных взаимосвязанных функций- воспитания, преподавания, стандартизации. Многочисленные положительные характеристики тестирования, как педагогического метода проверки, свидетельствуют о целесообразности применения данной технологии в учебном процессе.

### Tests Usage in Educational Processes

### Summary

One of the main components in educational process is checking. Pedagogical checking is done in several ways: assessment, stimulation, development, teaching, breeding.

Testing is one of the numerous ways of checking. In pedagogy testing is done in three correlated functions – criteria, teaching and breeding. Testing as a pedagogical method and its numerous positive sides speak about its expedience usage of this technology in educational process.

- Որպեսզի թեստավորումը լինի օբյեկտիվ և արդար, անհրաժեշտ է ձեռնարկել առաջադրանքների գաղտնիության ապահովմանն ուղղված հատուկ միջոցներ: Թեստը մեկ անգամ ևս օգտագործելի ցանկալի է, որ դրա առաջադրանքներում կատարվեն փոփոխություններ:
- Թեստավորման ժամանակ չի բացառվում պատահականության տարրը: Օրինակ, պարզ հարցին ճիշտ չպատասխանած աշակերտը կարող է ճիշտ պատասխանել բարդ հարցին: Դրա պատճառը կարող է լինել ինչպես առաջին հարցին պատասխանելիս պատահական սխալը, այնպես էլ երկրորդ հարցի պատասխանի գուշակումը: Դա խեղաթյուրում է թեստի արդյունքները, և դրանք վերլուծելիս առաջանում է պատահականության բաղադրիչը հաշվի առնելու անհրաժեշտություն:


Ցավոր, պատահականության և ինտուիցիայի տարրերից խուսափելն անհնարին է, և թեստը կազմողը պետք է հաշվի առնի այս հանգամանքը և աշխատի նվազագույնի հասցնել ճիշտ պատասխանը գուշակելու հավանականությունը:

Ամփոփենք: Վերը նշված թերություններով հանդերձ, թեստավորումը որպես ստուգման մանկավարժական մեթոդ, նրա դրական բազմաթիվ կողմերը խոսում են ուսումնական գործընթացում այդ տեխնոլոգիայի կիրառման նպատակահարմարության մասին:

Ըստ համացանցի նյութերի պատրաստեց՝ Աշոտ ՂԱԶԱՐԴՅԱՆԸ

կոմպլեկտավորումը, հոսքային դասարանների՝ ըստ սովորողների կարողությունների և ցանկությունների ձևավորումը, ինչպես նաև հարցազրույցով ընդունելությունը ավագ դպրոց:

Ստորև ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ հոսքերի:




Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են տնտեսագիտական (հայոց լեզու և հայ գրականություն՝ 5,8, մաթեմատիկա՝ 4,9), այնուհետև բնագիտական (միջին միավորները տնտեսագիտականից 0,4-ով պակաս) և ֆիզմաթ (միջին միավորները տնտեսագիտականից համապատասխանաբար՝ 1-ով և 0,1-ով պակաս) հոսքերում: Հումանիտար հոսքում մաթեմատիկայի արդյունքները ընդհանուր միջինից ցածր են եղել, իսկ հայոց լեզվի և հայ գրականության արդյունքներով այս հոսքը զիջել է տնտեսագիտական և բնագիտական հոսքերին:

Ֆիզմաթ հոսքի մաթեմատիկայի միջին միավորներն ավելի ցածր են եղել, քան տնտեսագիտական հոսքի միջին միավորները:

Ամենացածր միջին միավորները գրանցվել են ավագ դպրոցի ընդհանուր հոսքում՝ երկու առարկաներից, հումանիտար հոսքում՝ մաթեմատիկայից:

## 7. Արտաքին գնահատման արդյունքներն ըստ մարզերի

Ստորև բերված դիագրամը ներկայացնում է գնահատականների բաշխումը և միջին միավորները՝ ըստ մարզերի:



Հայոց լեզվից և հայ գրականությունից 9-10 գնահատական ստացել է Տավուշի և Արմավիրի մարզերի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 5 տոկոսը: Այուս մարզերի 9-10 գնահատականների տոկոսն ավելի փոքր է, Այունիքի մարզում 9-10 գնահատականներ չեն եղել: 6-8 գնահատականների ամենամեծ տոկոսը եղել է Շիրակի մարզում (53%), ամենափոքր տոկոսը՝ Վայոց Չորում (27%): Բոլոր մարզերում 4-5 գնահատականների տոկոսն եղել է 37-51-ի սահմաններում:

- Թեստերը ստուգման ավելի ընդգրկուն միջոց են, քանի որ թեստավորման միջոցով կարելի է ստուգել ամբողջ դասընթացից սովորողի գիտելիքները՝ բացառելով տումս քաշելու դեպքում պատահականության տարրը: Թեստավորումը հնարավորություն է տալիս ստուգելու աշակերտի գիտելիքները ինչպես ամբողջ դասընթացից, այնպես էլ առաձին թեմաներից:

- Թեստավորումը արդյունավետ է նաև տնտեսական տեսակետից: Թեստավորում անցկացնելու ծախսերը զգալիորեն ավելի քիչ են, քան գրավոր կամ բանավոր ստուգման ծախսերը: Երեսուն մարդուց բաղկացած խմբի թեստավորումն ու արդյունքների ստուգումը կատարվում է 1,5-2 ժամվա ընթացքում, իսկ գրավոր կամ բանավոր ստուգումը տևում է 4 ժամից ավելի:

- Թեստավորումը բոլոր սովորողների համար ապահովվում է հավասար պայմաններ և գնահատման միասնական չափանիշներ, ինչ շնորհիվ զգալիորեն նվազում է նրանց նախաքննական նյարդային լարվածությունը:

### Թերությունները

- Որակյալ թեստային գործիքակազմի մշակումը երկարատև, աշխատատար և թանկ արժեցող գործընթաց է:

- Թեստավորելու միջոցով մանկավարժի ստացած տվյալները, թեև ներառում են կոնկրետ բաժիններից գիտելիքների պակասի վերաբերյալ տեղեկություններ, բայց հնարավորություն չեն տալիս պարզելու դրա պատճառները:

- Թեստի միջոցով հնարավոր չէ ստուգել և գնահատել ստեղծագործելու հետ կապված գիտելիքների մակարդակը, այսինքն՝ վերացական և մեթոդաբանական գիտելիքները:

- Թեստավորելիս շատ թեմաների ընդգրկումը ունի նաև բացասական կողմ: Սովորողները թեստավորման ժամանակ, ի տարբերություն բանավոր և գրավոր քննությունների, բավարար ժամանակ չեն ունենում թեման խորը վերլուծելու համար:

- Այլնտրանքային ընտրություն -** պետք է պատասխանել՝ <<այո>> կամ <<ոչ>>;
- Համապատասխանության որոշում -** պետք է որոշել երկու ցանկերի տարրերի համապատասխանությունը
- Հաջորդականության որոշում -** պետք է ցանկի տարրերը դասավորել համապատասխան հաջորդականությամբ
- Ազատ շարադրանք -** պետք է ինքնուրույն ձևակերպել պատասխանը՝ առանց որևէ սահմանափակման
- Լրացում -** պետք է պատասխանները ձևակերպել՝ հաշվի առնելով առաջադրանքում առկա սահմանափակումները (օրինակ՝ լրացնել նախադասությունը)

### Թեստավորման առավելություններն ու թերությունները

Գիտելիքների ստուգման այլ ձևերի համեմատ թեստավորումն ունի իր առավելություններն ու թերությունները:

### Առավելությունները

- Թեստավորումը հանդիսանում է գնահատման առավել որակյալ և օբյեկտիվ եղանակ: Նրա օբյեկտիվությունը ձեռք է բերվում անցկացման գործընթացի, առաջադրանքների և ընդհանուր առմամբ թեստի որակի ցուցանիշների ստուգման ստանդարտացման միջոցով:
- Թեստավորումը ավելի արդարացի մեթոդ է, այն բոլոր սովորողների համար ապահովում է հավասար պայմաններ ինչպես ստուգման այնպես էլ գնահատման գործընթացում՝ բացառելով մանկավարժի սորյեկտիվ վերաբերմունքը: Մեծ բրիտանիայի սովորողների ամփոփիչ ատեստացիայով գրադարձող անզիական NEAB ասցիացիայի տվյալներով, թեստավորումը հնարավորություն է տալիս նվազեցնելու բողոքարկումների թիվը ավելի քան երեք անգամ, գնահատման գործընթացը բոլոր սովորողների համար միանման դարձնելու՝ անկախ բնակության վայրից, ուսումնական հաստատության տեսակից:

1-3 գնահատականների ամենամեծ տոկոսը եղել է Այունիքում (26%) և Կոտայքում (24%), ամենափոքր տոկոսը՝ Շիրակի մարզում (8%):

Մաթեմատիկայից 9-10 գնահատական ստացել է Արմավիրի մարզի արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 4, Շիրակի մարզի՝ 3 տոկոսը, իսկ Արարատում, Սյունիքում և Վայոց Ձորում 9-10 գնահատականներ չեն գրանցվել: 6-8 գնահատականների ամենամեծ տոկոսը եղել է Արմավիրում (22%), ամենափոքր տոկոսը՝ Վայոց Ձորում (2%): 4-5 գնահատականները մեծ տոկոս են կազմել Շիրակի (37%) և Լոռու մարզերում (31%), փոքր տոկոս՝ Վայոց Ձորում (13%), Սյունիքում (17%): Դրական միավորների շեմը չհաղթահարողների մեջ մեծ տոկոս են կազմում Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի աշակերտները, և ամենափոքր տոկոսը՝ Շիրակի աշակերտները:


Ընդհանուր հաշվով՝ 2013 թ. ֆետրվարի ընթացիկ արդյունքների արտաքին գնահատման արդյունքում բարձր առաջադիմություն գրանցվել է Շիրակի, Լոռու, և Տավուշի մարզերի աշակերտների շրջանում: Սյուս մարզերի աշակերտներն ունեցել են միջին առաջադիմություն:

### 8. Միջին միավորներն ըստ սեռերի

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած դպրոցների 11-րդ դասարանի աշակերտների 54%-ը եղել է աղջիկ, 46%-ը՝ տղա:

Ըստ սեռերի վերլուծությունը ցույց է տվել, որ հայոց լեզվից և հայ գրականությունից աղջիկները գերազանցել են տղաներին 1 միավորվ, իսկ մաթեմատիկայի միջին միավորները համընկել են:

## 9. Վերլուծություն ըստ բնակավայրի տիպերի



Ըստ բնակավայրի տիպերի վերլուծությունը ցույց է տվել, որ ինչքան հեռու է բնակավայրը խոշոր քաղաքներից, այնքան միջին միավորները փոքր են: Բացառություն են կազմում սահմանամերձ և հեռավոր գյուղերը, որոնց աշակերտների միջին միավորներն ամենաբարձրն են հայոց լեզվից և հայ գրականությունից, իսկ մաքեմատիկայից նրանք չեն զիջում խոշոր և միջին քաղաքների աշակերտներին:

## 10. Վերլուծություն ըստ դասարանի աշակերտների թվի

Հայտնի է, որ հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանները կոմպեկտավորվում են մինչև 30 աշակերտով: Հարցմանը մասնակցած տնօրենների 9, ուսուցիչների 20 տոկոսը գտնում է, որ ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է փոքրացնել դասարանի աշակերտների թիվը:

Ստորև հաշվարկվել է աշակերտների թվով փոքր, միջին և մեծ դասարանների միջին միավորներն ըստ առարկաների:

պահանջվում են երկու և ավելի ուսումնական առարկաներից ինտեգրացված (ընդհանրացված, փոխկապակցված) գիտելիքներ: Հարմարեցված թեստը թեստավորման ավտոմատացված համակարգի տարրերակ է, որում նախապես հայտնի են յուրաքանչյուր առաջադրանքի բարդության պարամետրերը և տարբերակիչ հատկությունները: Այդ համակարգը ստեղծված է համակարգչային բանկի տեսքով: Հարմարեցված թեստի ամենազլավոր բնութագրիչն որանց բարդության մակարդակն է, որը ձեռք է բերվել փորձի միջոցով, այսինքն՝ մինչև բանկի մեջ մտնելը յուրաքանչյուր առաջադրանք ենթարկվում է փորձարկման, որին մասնակցում են բավականաշափ մեծ թվով աշակերտներ:

### Թեստային առաջադրանքների տեսակները

Քննության առնենք թեստային առաջադրանքների առավել տարածված դասակարգումը: Այդ դասակարգման շրջանակում թեստային առաջադրանքները կարելի է բաժանել երկու խմբի՝

- փակ տիպի թեստային առաջադրանքներ (յուրաքանչյուր հարցին կից կան պատասխանների պատրաստի տարբերակներ, որոնցից պետք է ընտրել մեկ կամ մի քանի ճիշտ պատասխան),
- բաց տիպի թեստային առաջադրանքներ (յուրաքանչյուր հարցի թեստավորման ենթարկվողը պետք է տա իր պատասխանը՝ լրացնել բառն, բառակապակցությունը, նախադասությունը, նշանը, բանաձևը և այլն):

#### Բաց տիպի առաջադրանքներ

- Բազմակի ընտրություն  
Այլընտրանքային ընտրություն  
Համապատասխանության որոշում  
Հաջորդականության որոշում

- **Բազմակի ընտրություն** - տրված ցանկից պետք է ընտրել մեկ կամ մի քանի ճիշտ պատասխան

#### Փակ տիպի առաջադրանքներ

- Ազատ շարադրանք  
Լրացում

այդ թեստային միավորը զուգորդվում է <<գիտելիքների մակարդակ>> հասկացության հետ և ճշգրտվում է մանկավարժական չափման այս կամ այն մոդելի հիման վրա:

## Թեստերի տեսակները

Թեստերը կարելի է դասակարգել շատ հատկանիշների հիման վրա: Հիմնական դասակարգումը՝ ըստ թեստի ուղղվածության. Կարելի է գնահատել մարդու ունակությունները, նրա անձնական հատկանիշները մտավոր կարողությունները, որոշ հոգեբանական գործառույթները (ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը), գիտելիքները: Մենք կներկայացնենք վերջինները՝ գիտելիքները ստողող թեստերը:

## Ավանդական թեստեր

Ավանդական թեստն ունի կազմ, ամբողջականություն և կառուցվածք: Այն բաղկացած է առաջադրանքներից, դրանց կատարման կանոններից, յորաքանչյուր առաջադրանքի կատարման համար գնահատականներից և թեստի կատարման արդյունքների մեկնաբանման հանձնարարականներով: Ավանդական թեստի արդյունքը կախված է հարցերին տրված ճիշտ պատասխանների քանակից:

## Ոչ ավանդական թեստեր

Ոչ ավանդական թեստեր կարելի է համարել ինտերակտիվ, հարմարեցված, բազմաստիճան և, այսպես կոչված, չափանիշային-կողմնորոշված թեստերը:

Ինտերակտիվ կարելի է անվանել այն թեստը, որը բաղկացած է ուսումնական հաստատության շրջանավարտի պատրաստվածության ընդհանրացված ամփոփիչ չափորոշմանն ուղղված առաջա-դրանքների համակարգից: Չափորոշումը կատարվում է այնպիսի առաջադրանքների ներկայացման միջոցով որոնց ճիշտ պատասխաննելու համար

Այսուսակից պարզվում է, որ ըստ առարկաների միջին միավորներն ունեն փոքր տարբերություններ՝ կախված դասարանի աշակերտների թվից: Սակայն այսուսակում առկա է մի օրինաչափություն՝ առավելագույն միջին միավորը գրանցվել է 21-25 հոգանոց դասարաններում: Այս օրինաչափությունը խախտվել է 1-10 աշակերտ ունեցող դասարանների մաթեմատիկայի արդյունքներով, որոնք բարձր են եղել մաթեմատիկական թերումով վարժարանի՝ այդ խմբում ընդգրկված լինելու պատճառով:

2012թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված արտաքին

Առարկան	1-10 աշակերտ ունեցող դասա- րանների միջին միավորը	11-15 աշակերտ ունեցող դասա- րանների միջին միավորը	16-20 աշակերտ ունեցող դասա- րանների միջին միավորը	21-25 աշակերտ ունեցող դասա- րանների միջին միավորը	26-30 աշակերտ ունեցող դասա- րանների միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականութ- յուն	4.7	4.7	5.2	5.4	4.9
Մաթեմա- տիկա	3.6	3.3	3.5	3.7	3.3

գնահատման արդյունքներում նույնական 21-25 հոգանոց դասարանները եղել են արդյունավետ:

## Եզրակացություն

2013 թ. նոյեմբեր ամսին ՀՀ մարզերի հանրակրթական 63 դպրոցների տասնմեկերրդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակն է եղել հետազոտել 11-րդ դասարանում նշված առարկաներից սովորողների արդյունքները, պարզել նրանց առաջադիմության դիմացիկան՝ 2011 թ. և 2012 թ. արտաքին ընթացիկ և ներքին (կիսամյակային) գնահատումների արդյունքների համեմատությամբ, ուսումնասիրել արտաքին ընթացիկ

գնահատման արդյունքներն ըստ սովորողների տարբեր խմբերի (դպրոցի տիպերի, մարզերի, սեռերի և այլն), ինչպես նաև բացահայտել այն գործոնները, որոնք որոշակի ազդեցություն ունեն ուսման արդյունավետության վրա:

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների հաշվառումը ցույց է տվել, որ բացակայությունները կազմել են 9-10 տոկոս, որը նորմայի սահմաններում է:

#### • **Արտաքին գնահատման ընդհանուր արդյունքները**

Ընթացիկ արդյունքների արտաքին գնահատման թեստերը կազմվել են ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան՝ սեպտեմբերից մինչև հունվար ամիսն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրվող թեմաների շրջանակներում: Հայոց լեզվի և հայ գրականության թեստային առաջադրանքները հավասարաշափ բաշխված են եղել «Հայոց լեզու» և «Հայ գրականություն», մաթեմատիկայի թեստային առաջադրանքները՝ «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաների միջև:

Արտաքին գնահատման արդյունքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հայոց լեզվից և հայ գրականությունից աշակերտներն ունեցել են միջին առաջադիմություն, մաթեմատիկայից՝ միջինից ցածր:

Համաձայն տնօրենների և ուսուցիչների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերլուծության՝ հարցաթերթիկում նշված գործոններից շատերը (ուսուցիչների կրթությունը, տարիքը, մանկավարժական ստաժը, նրանց դասավանդման արդյունավետության գնահատականը, նրանց մտահոգությունները ուսման ցածր որակի, ուսումնական նյութի ծանրաբեռնվածության վերաբերյալ) իրենց աշակերտների առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն չեն ունեցել: Պարզվել է, որ դասի ընթացքում մշտապես ակտիվ աշակերտների թվի և նրանց առաջադիմության միջև կա ուղիղ կապ. ինչքան մեծ է եղել դասին աշակերտների մասնակցության տոկոսը, այնքան մեծ են եղել նրանց միջին միավորները: Այս փաստի և հարցաթերթիկներում ուսուցիչների մեծ տոկոսի կողմից նշված՝ մեթոդական թեմաներով վերապատրաստումների մասնակցելու

Այս սահմանումն ավելի լավ հասկանալու համար պարզաբանենք նրա հիմնական տերմինները:

Համակարգ՝ նշանակում է, որ թեստում ընդգրկված են այնպիսի առաջադրանքներ, որորն ունեն համակարգաստեղծ հատկություններ: Այստեղ, առաջին հերթին, պետք է առանձնացնել առաջադրանքների պատկանելությունը գիտելիքների միևնույն համակարգին, այսինքն՝ միևնույն ուսումնական առարկային, միևնույն, բաժնին, թեմային և այլն, դրանց կապը: Դպրոցների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման համար մետք է մշակել ինտեգրացված առաջադրանքներ, որոնց բովանդակությունն ընդգրկի գիտելիքների ամբողջ համակարգը: Մանկավարժական թեստում առաջադրանքները դրվում են ըստ բարության աստիճանի՝ ամենահեշտից մինչև ամենադժվարը:

Յուրահատուկ ձևի թեստային առաջադրանքներն առանձնանում են նրանով, որ դրանք ոչ թե հարցեր ու խնդիրներ են, այլ ասույթներ՝ ձիշտ կամ սխալ, կախված պատասխանից: Ավանդական հարցերը, ընդհակառակը, ձիշտ կամ սխալ չեն լինում, իսկ դրանց պատասխանները հաճախ այնքան անորոշ ու երկար են լինում, որ դրանց ձիշտ լինելը պարզելու համար մանկավարժները ծախսում են զգալի մտավոր էներգիա: Ուստի ավանդական հարցերն ու պատասխանները ավելի լավ է տեղ չգտնեն թեստի մեջ:

Քանի որ, ինչպես նշեցինք, մանկավարժական թեստերը կազմվում են առաջադրանքների բարդության աճման սկզբունքով, սովորողներից ումանք չեն կարողանում լուծել ամենահեշտ, առաջին իսկ առաջադրանքը, մյուսները՝ հաջորդ հեշտ առաջադրանքները: Միջին մակարդակի աշակերտները կարող են պատասխանել թեստի առաջադրանքների կեսին և, վերջապես, միայն ամենաբանիմացները կարող են կատարել թեստի վերջում տրված բարդության ամենաբարձր մակարդակի առաջադրանքները:

Գիտելիքների մակարդակը պարզվում է թեստի բոլոր առաջադրանքներին՝ յուրաքանչյուր աշակերտի պատասխանների վերլուծությունից: Որքան շատ լինեն ձիշտ պատասխանները, այնքան բարձր կլինեն նրա թեստային անհատական միավորները: Սովորաբար

## Թեստավորում

Թեստավորումը կատարվում է տեխնիկայի, բժկության, հոգեբուժության, կրթության և այլ բնագավառներում՝ որոշելու համար թեստավորման օբյեկտի պիտանիությունը կատարելու այս կամ այն գործառությը: Այն կարելի է սահմանել որպես ստանդարտացված, ժամանակի սահմանափակմամբ փորձություն՝ ուղղված քանակական և որակական անհատական տարրերությունների որոշմանը: Սովորաբար թեստավորման ժամանակ բոլորը պատասխանում են միևնույն հարցերին, նույն ժամանակահատվածում և նույն պայմաններում, բոլորի համար գործում է գնահատման միևնույն կանոնները: Թեստավորման հիմնական նպատակը գիտելիքների մակարդակի, ուղարկած վրա բոլոր թեստավորվողների մեջ յուրաքանչյուրի տեղի (վարկանիշի) որոշումն է:

Թեստերի տեսության կարևոր հարցերից մեկը մեծ քանակությամբ ստեղծվող ամեն տեսակ թեստերի մեջ լավագույնի ընտրության հարցն է: Թեստերը մեկը մյուսից տարբերվում են առաջադրանքների քանակով և այլ բնութագրիչներով: Գործնական առումով ավելի ձեռնուու է կազմել համեմատաբար քիչ թվով հարցեր պարունակող թեստեր, որոնք սակայն ունենան այն արժանիքները, որ ունեն, այսպես կոչված, երկար թեստերը: <<Թեստի երկարություն>> հասկացությունը 20-րդ դարի սկզբին ներմուծվել է Չ.Սպիրմանի կողմից: Որքան երկար է թեստը, այնքան նրանում շատ են առաջադրանքները: Առաջադրանքների քանակից ինչոր չափով կախված է մանկավարժական չափումների ճշգրտությունը: Ընդհանրապես աշխատում են թեստերի մեջ ընդգրկել բավարար նվազագույն քանակի առաջադրանքներ, որոնց միջոցով հնարավոր լինի համեմատաբար ճշգրիտ որոշել մարդու պատրաստվածության մակարդակն ու կառուցվածքը:

**Մանկավարժական թեստը** սահմանվում է որպես յուրահատուկ ձև ունեցող, աճող բարդությամբ առաջադրանքների համակարգ, որը հնարավորություն է տալիս որակյալ և արդյունավետ չափելու սովորողների պատրաստվածության մակարդակն ու կառուցվածքը:

ցանկության համարումից հետևում է, որ մեծ է աշակերտների ակտիվ մասնակցությունն ապահովող մեթոդների մշակման դասընթացների անհրաժեշտությունը:

### • Ներքին գնահատում

Արտաքին և ներքին գնահատումների արդյունքները համադրելու համար ստեղծվել է տվյալների բազա, որը պարունակել է արտաքին գնահատմանը մասնակցած աշակերտների 11-րդ դասարանի առաջին կիսամյակի գնահատականները՝ համապատասխան առարկաներից:

2013 թ. ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը հայ գրականությունից եղել է 1,7, հայոց լեզվից՝ 2,5, հանրահաշվից և երկրաչափությունից՝ 3,3 միավոր:

Ներքին և արտաքին գնահատման արդյունքների տարբերությունը պայմանավորված է մի շարք գործոններով.

- Ներքին գնահատման ձևերի ու մեթոդների բազմազանությամբ, սուբյեկտիվ գործոնի առկայությամբ, գնահատականի՝ որպես խրախուման միջոց կիրառությամբ:

- Ներքին գնահատման համար 10 միավորանց սանդղակի փոխարեն կիրառվել են 3-ից 10 գնահատականները, մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվում են 1-ից 10 գնահատականները: 3-ից 10 գնահատականներով սանդղակի ստանդարտ միջինը 6,5-ն է, 1-10 գնահատականներով սանդղակի ստանդարտ միջինը՝ 5,5-ը, այստեղից ել՝ միջին միավորների տարբերությունները:

- Թեստային առաջադրանքների 50 տոկոսը կազմվել է ընդիանուր հոսքի չափորոշչային և մակարդակին համապատասխան, և կիսամյակային 4-6 գնահատական ստացած աշակերտների 31 տոկոսը հայոց լեզվից և հայ գրականությունից, 72 տոկոսը մաթեմատիկայից, չի կարողացել հաղթահարել դրական միավորների շեմը:

### • Վերլուծություն ըստ դպրոցի աշակերտների թվի

Այն հարցին, թե ինչը կարելի է փոփոխել ուսումնական գործընթացում աշակերտների ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար, տնօրենների 12, ուսուցիչների 5 տոկոսը գրել է աշակերտների թվով ֆինանսավորման վերանայման անհրաժեշտության մասին: Բնականաբար հարցը բարձրացրել են փոքր՝ մինչև 400 աշակերտ ունեցող ավագ և միջնակարգ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները: Վերլուծության արդյունքների համաձայն՝ նշված առարկաներից համեմատաբար արդյունավետ են եղել 201-600 աշակերտ ունեցող ավագ և միջնակարգ դպրոցները:

### • Արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Ավագ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները աշակերտների ուսման արդյունավետության բարձրացման հարցում կարևորել են ավագ դպրոցի հանդեպ վստահության ստեղծումը, ավագ դպրոց հարցազրույցով ընդունելությունը, աշակերտների կարողությունների հիման վրա հոսքերի կոմպլեկտավորումը: Այսինքն՝ ավագ դպրոցը դեռ կայացման փուլում է: Թեև արդեն միջին միավորները 0,3-0,5 միավորով բարձր են միջնակարգ դպրոցների միջին միավորներից, սակայն 0,4-1,3 միավորով զիջում են վարժարանների միջին արդյունքներին: Հարկ է նշել նաև, որ ավագ և միջնակարգ դպրոցների մաթեմատիկայի միջին միավորները ցածր են եղել միավորների դրական շեմից:

### • Արդյունքներն ըստ հոսքերի

Ըստ հոսքերի վերլուծությունը ցույց է տվել, որ բոլոր առարկաներից առաջադիմության ցուցանիշները ընդհանուր միջին միավորներից բարձր են եղել տնտեսագիտական և բնագիտական հոսքերում: Թեև արտաքին ընթացիկ գնահատման թեստերը կազմվել են ընդհանուր հոսքի առարկայական ծրագրերին համապատասխան, ցածր առաջադիմություն են ցուցաբերել միջնակարգ և ավագ դպրոցների ընդհանուր հոսքի աշակերտները: Ցածր առաջադիմություն են ցուցաբերել նաև հումանիտար հոսքի աշակերտները մաթեմատիկայից և ֆիզմաթ հոսքի աշակերտները՝ հայոց լեզվից և հայ գրականությունից:

• Զափորշման գործառույթը սովորողի գիտելիքների մակարդակի, հմտությունների և կարողությունների բացահայտումն է:

• Ուսուցման գործառույթը ուսումնական նյութի յուրացմանն ուղղված սովորողի աշխատանքի ակտիվացումն է:

• Դաստիարակման գործառույթը դրսուրվում է թեստային ստուգման պարբերականության և անխուսափելիության մեջ: Այն կազմակերպում և ուղղորդում է սովորողի գործունեությունը, օգնում է վեր հանել և վերացնել իր գիտելիքների բացերը, ձգում է առաջացնում զարգացնելու իր ունակությունները:

Գոյություն ունեն թեստերի օգտագործման տարրեր կարծիքներ՝ կողմ և դեմ: Ոմանք թեստերը համարում են ուսումնական գործընթացի տեխնոլոգիականացման, աշխատատարության նվազեցման միջոց և դառնում են այդ մեթոդի շատագովներ: Մյուսները թեստերը համարում են մանկավարժի դերի նվազեցման միջոց, իսկ թեստավորման արդյունքները՝ որ բավարար հավասար: Սակայն պետք է նշել, որ հենց թեստավորումն է դարձել քննությունների հանձնման հիմնական ձևը: Իսկ դա պահանջում է, որ ուսուցման համակարգում անպայման ներդրվեն թեստային տեխնոլոգիաներ: Դրանց օգնությամբ պետք է տարվա ընթացքում գնահատել աշակերտների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակը և նրանց մեջ ձևավորել թեստային առաջադրանքների վրա աշխատելու հմտություն: Այդպիսի վարժանքները սովորողներին հնարավորություն կտան միասնական ըննություններ հանձնելիս ավելի բարձր գնահատականներ ստանալու: Բացի դրանից, այդպիսի վարժանքների ժամանակ զարգանում են ինքնակառավարման և ինքնավերահսկման համապատասխան հոգեբանական ունակությունները: Ուստի թեստավորումը, որպես շափման և ստուգման միջոց, դառնում է մեր դպրոցների ուսումնական գործընթացի հիմքը: Ցուրաքանչյուր մանկավարժ ինքն է որոշում ինչ շափով կիրառի այս կամ այն մեթոդը:

Համապատասխան հոսքերում պրոֆիլային առարկաներից անբավարար գնահատականների մեծ տոկոսը (ֆիզմաթ և տնտեսագիտական հոսքերում մաթեմատիկայից՝ 26-28%, հումանիտար հոսքում հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 14%), վկայում է այն բանի մասին, որ հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանում առկա է մասնագիտական կողմնորոշման խնդիրը:

- **Վերլուծություն ըստ մարզերի**

Եթե 2012 թ. արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներում ամենաբարձր առաջադիմությունը գրանցվել էր Սյունիքի մարզում, ապա 2013 թ. բարձր առաջադիմություն գրանցվել է Շիրակի, Լոռու, Արմավիրի և Տավուշի մարզերի աշակերտների շրջանում: Սյուս մարզերի աշակերտներն ունեցել են միջին առաջադիմություն:

- **Վերլուծություն ըստ դասարանի աշակերտների թվի**

Հարցմանը մասնակցած տնօրենների 9, ուսուցիչների 20 տոկոսը գրել է, որ աշակերտների ուսման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է նվազեցնել դասարանի աշակերտների թիվը մինչև 15 աշակերտի:

Ըստ դասարանի աշակերտների թվի վերլուծությունից պարզվել է, որ առավել արդյունավետ են այն դասարանները, որտեղ աշակերտների թիվն ընկած է 21-25-ի սահմաններում: 11-րդ դասարանի նախորդ արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներում նույնպես առավել արդյունավետ են եղել 21-25 հոգանոց դասարանները՝ նշված երկու առարկաների դեպքում:

- **Վերլուծություն ըստ բնակավայրի տիպերի**

Ըստ բնակավայրի տիպերի վերլուծության համաձայն, ինչպես և նախորդ բոլոր արտաքին գնահատման դեպքերում, խոշոր քաղաքների աշակերտների միջին միավորներն ամենաբարձրն են, և ինչքան բնակավայրը հեռու է խոշոր քաղաքներից, այնքան միջին միավորները ցածր են:

## Թեստերի օգտագործումը ուսումնական գործընթացում

Ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից մեկը ստուգումն է: մանկավարժական ստուգումն իրականացնում է մի շարք գործառույթներ՝ գնահատման, խթանման, զարգացման, ուսուցման, չափորոշման, դաստիարակման և այլն:

- Ստուգման միջոցով ապահովում է արտաքին հետադարձ կապը (մանկավարժի վերահսկողությունը) և ներքին կապը (աշակերտի ինքնաստուգումը):
- Ստուգումն կատարվում է որոշակի տեղեկություններ ստանալու նպատակով, որոնք վերլուծելով՝ մանկավարժը անհրաժեշտ ճշգրտումներ է կատարում ուսումնական գործընթացի մեջ:

Ստուգման բազմաթիվ ու բազմազան ձևերից մեկը թեստավորումն է: Մանկավարժության մեջ թեստավորումը կատարում է երեք հիմնական փոխկապակցված գործառույթ՝ չափորոշման, ուսուցման և դաստիարակման:

## Особенности оценивания в старших школах

Сильва Петросян

### Резюме

#### Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳթՎ թեստարանության բաժնի առաջատար մասնագետ

#### Նարե ՍԱՐԳՈՅԱՆ

ԳթՎ համակարգչային և վերլուծական բաժնի  
առաջին կարգի մասնագետ

### 2013 թ. միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն

#### Նախարար

Ստորև ներկայացվում են 2013 թ. միասնական քննությունների, դրանց թեստերի ու թեստային առաջադրանքների և կենտրոնացված բանափոր քննությունների վերաբերյալ կատարված վերլուծության արդյունքները։ Վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով։

- Կատարվել է ընդհանուր արդյունքների վերլուծություն (ինչպես միասնական գրավոր, այնպես էլ կենտրոնացված բանափոր քննությունների), համեմատություններ նախորդ տարիների միասնական քննությունների արդյունքների հետ։
- Ըստ որակական բնութագրիչների, թեստերի և թեստային առաջադրանքների կառուցվածքի հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքները, վերհանվել են թեստերում առկա թերությունները։ Թեստերը բարելավվելու նպատակով

Оценка- наиважнейшая задача любого общества и гражданской жизни и осознания в частности. Оценка имеет не только образовательное значение, но также связана со всеми жизненными аспектами. Демократическое образование неполноценно без соответствующего оценивания, которое должно служить не только инструментом проверки, но и выявления ошибок, совершенствования и самоутверждения. В обязанности педагогов старшей школы входит не только простое оценивание учащихся, но и подробное объяснение и комментирование причин, важности и значения каждой оценки, классификации качественных характеристик. Во время классовых оценочных работ учителя обязаны обеспечить учащимся доступность и общепонятность сведений, необходимых для их дальнейшего развития.

### Marking Characteristics in High Schools

Silva Petrosyan

### Summary

Assessment is not only an educational issue, but also an issue connected to all spheres. Education is incomplete without an appropriate assessment, which must be not only a marking tool, but also a tool to find out defects and to develop them. The duties of the specialists of high schools are not only in assessing the learners and keeping it in secret, but to explain how each assessment is done, why it is necessary and how it classified each qualitative feature. During the classroom assessment teacher must give durable and available information to the learners which is necessary for further improvement.

Այն աշակերտները, ովքեր մասնակցում են որակյալ աշխատանքի խելամիտ վերլուծությանը, որպեսզի բացահայտեն նրա էական բաղադրիչները կամ յուրացնեն իրենց առաջադիմության համար սահմանված և արժնորված նպատակները, ավելի լավ կատարողներ են դառնում: Եթե աշակերտները ստվորում են հիմնավորապես կիրառել այս չափորոշիչները և կարողանում են բանիմացորեն ու լիակատար գնահատել իրենք իրենց և մեկը մյուսի աշխատանքը, նրանք իրավամբ լավ կատարողներ դառնալու ճանապարհին են:

Ուստի, եթե ուսուցիչներն աշակերտներին ներգրավում են գնահատման գործընթացում՝ դրանով իսկ դասարանում բացահայտելով, թե ինչ է նշանակում հասնել հաջողության, նրանք գիտակցում են, որ աշակերտները գնահատման արդյունքներն օգտագործում են այնպիսի որոշումների կայացման համար, որոնք վերջին հաշվով պատասխանում են այն հարցին, թե արդյոք դպրոցն <<աշխատում>> է նրանց համար, թե՝ ոչ: Դասարանական գնահատման ժամանակ ուսուցիչները պարտավոր են ստվորողների համար մատչելի ու հասականալի դարձնել այն տեղեկությունները, որոնք նրանց անհրաժեշտ են ժամանակի ընթացքում աճելու ու զարգանալու համար:

**<<Մարդ և հասարակություն>> գիտամեթոդական ամսագիր,  
թիվ 4, 2012, էջ 16-28:**

վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:

- Վերլուծության են ենթարկվել միասնական քննության արդյունքներն ըստ մարզերի և տարածաշրջանների, կատարվել է յուրաքանչյուր առարկայի մարզային արդյունքների համեմատություն ընդհանուր արդյունքների հետ: Միասնական քննության արդյունքներն ուսումնասիրվել են նաև ըստ բնակավայրի տիպերի (խոշոր քաղաք, փոքր քաղաք, գյուղ և այլն), ըստ դպրոցների տիպերի (ավագ դպրոց, միջնակարգ դպրոց և այլն), ըստ սեռերի:

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1. Միասնական քննությունների կազմակերպումը

2013 թ. հունիսի 1-21-ը և հուլիսի 2-8-ը Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաբաշխված 38 և ԼՂՀ-ի 5 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Ռուսաց լեզու>>, <<Օտար լեզու>>, <<Հայոց պատմություն>>, <<Համաշխարհային պատմություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քենսաբանություն>>, <<Աշխարհագրություն>> առարկաներից, որոնց մասնակցել է ՀՀ, ԼՂՀ և արտերկրի 14896 դիմորդ: Քննություններն անցկացվել են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլին (հունիսի 1-21-ը) մասնակցել են ՀՀ և ԼՂՀ միջնակարգ դպրոցների 2013 թ. և նախորդ տարիների շրջանավարտները (ՀՀ-ում 13456, ԼՂՀ-ում 889 դիմորդ): Միասնական քննությունների լրացուցիչ փուլին (հուլիսի 2-8-ը) մասնակցել են պարտադիր ժամկետային գինվորական ծառա-յությունից 2012-2013 թթ. գորացրվածները, 2013 թ. արտերկրի շրջանավարտները, միասնական քննության հիմնական փուլին հայտագրված և հարգելի պատճառով քննությանը չմասնակցած, ինչպես նաև հիմնական փուլի քննությունից հեռացված և բողոքարկման թեստ 2-ի, թեստ 6-ը, 7-ը, 8-ը՝ թեստ 5-ի առաջադրանքների պատասխանների տարբերակների տեղափոխությամբ:

հանձնաժողովի կողմից լրացուցիչ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած դիմորդները:

Քննությունների կազմակերպմանն ու անցկացմանը ներգրավվել են տարբեր բնագավառների աշխատակիցներ: Ընդհանուր առմամբ, քննությունների կազմակերպմանն ու վերահսկմանը մասնակցել է 443 գթՎ ներկայացուցիչ և կենտրոնի դեկավար, իսկ դիմորդների մուտքը քննասենյակներ, քննական նյութերի բաշխումն ու հավաքումն իրականացրել է մուտքի 114 օպերատոր և քննասենյակների 306 կազմակերպիչ:

### 3.1. 2013 թ. միասնական քննությունների անցկացման ժամանակացուցը

Քննությունը	Քննության տևողությունը (ժամ)	Քննության օրը	
		Իիմնական փուլ	Լրացուցիչ փուլ
Ռուսաց լեզու	3	01.06.13	02.07.13
Հայոց լեզու և հայ գրականություն	3	04.06.13	05.07.13
Համաշխարհային պատմություն Կենսաբանություն Աշխարհագրություն	3	07.06.13	04.07.13
Մաթեմատիկա	3	11.06.13	03.07.13
Օտար լեզու	2.5	14.06.13	07.07.13
Ֆիզիկա	3	18.06.13	06.07.13
Հայոց պատմություն Քիմիա	3	21.06.13	08.07.13

#### Աղյուսակ 1

Հիմնական փուլի բոլոր առարկաների քննություններն անցկացվել են թեստերի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տարբերակներով, լրացուցիչ փուլի քննությունները՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ տարբերակներով, ընդ որում թեստ 3-ը կազմվել է թեստ 1-ի, թեստ 4-ը

Անշուշտ, նրանք վճռորոշ դեր ունեն սովորողների հաջող-դության մեջ: Բայց չափահասները չեն կարող աշակերտներին ստիպել սովորել, եթե վերջիններս այս կամ այն պատճառով չեն ուզում դա անել: **Սովորողներն իրենք են պատասխանատու իրենց ուսումնառության համար:** Եթե աշակերտները սովորել չեն ուզում կամ սովորելու ունակ չեն զգում իրենց, ուսումնառությունը չի կայանա: Ուստի մեզ համար՝ իբրև ուսուցիչների, հիմնական ուղղորդող հարցը պետք է լինի հետևյալը. Ինչպես կարող ենք օգնել աշակերտներին, որ սովորեն, ինչպես օգնենք նրանց հասկանալ, որ իրենք ընդունակ սովորողներ են:

Պատասխանը միանշանակ է. դասարանում գնահատման մեծագույն ներուժը գիտակցվում է այն ժամանակ, երբ ուսուցիչն այդ գործընթացը բաց ու մատչելի է դարձնում սովորողների համար և ընդունում նրանց իբրև լիիրավ գործընկեր: Ուստի գործընկերությունը չպետք է հասկանալ սույլ որպես սովորողների ներգրավում միմյանց ստուգողական կամ տնային աշխատանքները գնահատելու գործում: Լիիրավ համագործակցության հասկացությունն ավելի խորն է:

Ինչ կարող են անել սովորողները գնահատման գործընթացում. ստուգողական աշխատանք կատարել և գնահատվել,

- ստուգողականի, քննության ընթացքը կատարելագործելու մասին մտքեր ու կարծիք հայտնելու առաջարկություն ստանալ ուսուցչի կողմից,
- գնահատման հնարավոր առաջարկանքներ, վարժություններ առաջարկել,
- գնահատման առաջարկանքներ, վարժություններ մշակել,
- ուսուցչին օգնել գնահատման չափանիշները մշակելու գործում,
- ինքնուրույնարար մշակել գնահատման չափանիշները,
- գնահատման չափանիշները կիրառել սեփական դրսորումը գնահատելիս

• հասկանալ, թե ինչպես են գնահատում ու արթնորում ազդում իրենց սեփական առաջադիմության աճի կամ անհատական զարգացման վրա,

- հասկանալ, թե իրենց ինքնազնահատումն ինչպես է առնչվում ուսուցչի կողմից գնահատման, ինչպես նաև իրենց սեփական առաջադիմության բարձրացման ու անհատական զարգացման վրա:

ծրագրեր կազմելուց և տեղեկություններ հավաքելուց մինչև արդյունքները մեկնաբանելը, օգտագործելն ու հայտնելը: ***Սովորողը որպես գնահատման հիմնական օգտագործող***

Գնահատման գործընթացի հիմնական գործող անձը, անշուշտ, ուսուցիչն է, սակայն գնահատման արդյունքները կապվում են գիտակորապես սովորողների հետ, ուստի նրանց կարող ենք գնահատման գործընթացի ու արդյունքի հիմնական սպառողներ անվանել: Գնահատման բազմաթիվ օգտագործողներ կան՝ իշխանությունները, հիմնարկների ղեկավարությունը, ծնողները, քաղաքական գործիչները և այլն, բայց գնահատման որակի ազդեցությանն ամենից սովորողներն են ենթարկվում: Մթիզինսը նոր տեսակ է առաջ քաշում, ըստ որի սովորողների հաջողությանն առավելագույնս նպաստող դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումները, ըստ Էռության, չափահասները չեն ընդունում: Ավելի ճիշտ, ուսումնառության ընթացքում սովորողների հաջողությունը կամ ձախողումն առավելագույս պայմանավորող որոշումներն ընդունվում են իրենց՝ սովորողների կողմից: Սովորողներն իրենք են որոշում արժանի են արդյոք զիտելիքներն այն շանքերին, որ պահանջվում են դրանք ձեռքելու համար: Իրենք են որոշում՝ արդյոք իրենց բավարար չափով ունակ են համարում տվյալ դասը, նյութը, թեման սովորելու համար: Այս որոշումները նրանք կայացնում են հիմնվելով սեփական ուսումնական առաջադիմության տվյալների իրենց մեկնաբանության վրա: Հետևաբար, ինչ էլ որ անելու լինենք, նախ պետք է օգնենք նրանց հավատալ, որ ուսումնառության մեջ հաջողության հասնելու հնարավորություն ունեն, և որ այդ հաջողությունն արժանի է գործադրվելիք շանքերին: Եթե դա չկարողանանք անել, ուրեմն չենք կարող օգնել նրանց սովորել: Ճիշտ որոշումներ կայացնելու համար սովորողները կարիք ունեն մշտապես մատչելի նկարագրական տեղեկություններ ստանալ իրենց առաջընթացի մասին իբրև ընթերցողներ, գրողներ, հիմնախնդիր լուծողներ և այլն: Այսօրինակ գնահատման գործընթացում ուսուցչի գործընկերը դարձնալու դեպքում սովորողներն ապշեցուցիչ արագությամբ են հասունանում: Սա չի նշանակում, թե որոշում կայացնող չափահասները կարևոր դեր չունեն:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն կամ պարսկերեն լեզուներից որևէ մեկը:

### 3.2. Միասնական քննությունների լուսաբանումը և իրազեկումը

2013 թ. միասնական քննությունների ողջ ընթացքը հանրությանն իրազեկելու նպատակով կազմվել և հաստատվել է ժամանակացույց՝ համաձայն ԳԹԿ գործունեության ժամանակացույցի: ԶԼՄ-ներով լուսաբանվել են 2013 թ. միասնական քննությունների հետ կապված մանրամասները, այդ թվում նաև քննությունների նախապատրաստական փուլում ուղեցույցների մշակման և տրամադրման, հայտագրման, թեստերի տպագրման գործընթացները: Քննությունների անցկացման ողջ գործընթացը (քննության ընթացք, բողոքարկում, տվյալների տրամադրում, մեկնաբանում) եղել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Կազմակերպվել են հարցագրույցներ և ասուլիսներ, որոնք լայնորեն լուսաբանվել են հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով: Մանրամասն ներկայացվել և գնահատվել է քննական ողջ գործընթացը, մատնանշվել են թերացումները, գնահատկաններ են տրվել քննական գործընթացի հետ կապված ամեն մի երևույթի, քայլի և քննությունների յուրաքանչյուր փուլի վերաբերյալ:

### 3.3 . Դիմոքրատիկ մասնակցությունը 2013 թ. միասնական քննություններին

#### Հիմնական փուլ

Արդարացնելու պահանջման քայլականություն	Գործադրության մեջ ներկայացնելու պահանջման քայլականություն	Գործադրության մեջ ներկայացնելու պահանջման քայլականություն	Բացահայտված գործադրության մեջ ներկայացնելու պահանջման քայլականություն	Հարցություն մեջ ներկայացնելու պահանջման քայլականություն	Հարցություն մեջ ներկայացնելու պահանջման քայլականություն
Հայոց լեզու և հայ գրականություն	8919	8647	272	-	-
Հայոց պատմություն	2424	2266	157	1	-
Ըստհանուր պատմություն	223	214	9	-	-
Մարդկանականիկա	6884	6621	263	-	-
Ֆիզիկա	2467	2377	89	-	1
Քիմիա	1280	1242	38	-	-
Կենսաբանություն	1680	1643	37	-	-
Աշխարհագրություն	339	330	9	-	-
Ուսաց լեզու	1205	1139	66	-	-
Անգլերեն	6427	6152	274	-	1
Ֆրանսերեն	295	290	5	-	-
Գերմաներեն	359	350	9	-	-
Իսպաներեն	20	19	1	-	-
Իտալերեն	4	4	-	-	-
Պարսկերեն	1	1	-	-	-

Աղյուսակ 2

գնահատման հարցերի շուրջ արդյունավետորեն հաղորդակցվելու համար ուսուցիչները պետք է կարողանան պատշաճ կերպով օգտագործել գնահատման եզրաբանությունը և կարողանան հստակ ձևակերպել ու բացատրել գնահատման արդյունքների նշանակությունը, սահմանափակումները, հետևանքները: Նրանք պետք է կարողանան նաև պաշտպանել գնահատման իրենց կարգը և դրանց սեփական մեկնաբանությունը:

Ներկայումս Հայաստանում ուսուցիչները գրեթե ամեն օր տարբեր առարկաների գծով գնահատման գործիքների նոր փաթեթներ են ստանում և պարտավոր են հասկանալ այդ միջոցների համապատասխանությունը, ուստի կարիք ունեն գնահատման ոլորտում հատուկ նախապատրաստության, քանի որ կրթության այս բնագավառը տարիներ շարունակ միակողմանի ու թերի է եղել: Ցանկալի է, որ ուսուցիչներն անդրադառնան գնահատման զարգացման պատմությանը, որպեսզի հասկանան, որ Հայաստանում այսօր գոյություն ունեցող շատ դժվարություններ եզակի երևույթներ չեն, որ դրանք գոյություն են ունեցել նաև տարբեր երկրներում, որոնք երբեմն գտել են իրենց լուծումները, երբեմն էլ՝ ոչ: Ուսուցիչները պետք է մտածեն **գնահատման արդարացնելության, արժանահավաստության և վավերականության** մասին, որպեսզի վերականգնեն դպրոցական գնահատականների արժեքը: Նրանք պետք է կարողանան նաև տարբերակել գնահատման նպատակները, ընտրել համապատասխան մեթոդներ և հասկանալ գնահատման յուրաքանչյուր տեսակի դրական ու բացասական կողմերը: Վերջապես, ուսուցիչները պետք է հմտանան գնահատման տարբեր միջոցներ ու մեթոդներ կիրառելու և ստեղծելու մեջ՝ բարելավելու համար ուսուցման գործընթացը, որի նպատակը սովորողների հաջողությունն է:

7. Ուսուցիչները պետք է գնահատման անպատշաճ, անօրինական և այլ անհամապատասխան մեթոդները, նաև գնահատման վերաբերյալ տեղեկությունների այդօրինակ օգտագործումը **ճանաչելու** հմտություն ունենան:

Անաշոռությունը, բոլոր շահագրգիռ անձանց իրավունքները և մասնագիտական անքասիր վարքագիծը պետք է տիրապետող լինեն սովորողների գնահատման ողջ գործընթացում՝ սկսած նախնական

գործունեության նպատակի և արդյունքների վերաբերյալ: Ուսուցիչները կարևոր դեր ունեն այս մարդակնցից յուրաքանչյուրում որոշումների կայացման գործում և պետք է կարողանան գնահատման արդյունքներն արդյունավետորեն օգտագործել:

**5.** Ուսուցիչները պետք է աշակերտների ինքնազնահատման վրա ճշգրիտ գնահատականներ նշանակելու մեթոդիկա **մշակելու** հմտություն ունենան:

Գնահատականը կամ գնահատանիշը արտացոլում է թե՝ սովորողի դրսորման մակարդակը և թե՝ ուսուցիչ կողմից այդ դրսորման գնահատումը: Ուսուցիչները պետք է կարողանան մշակել կիրառել և բացատրել տարբեր առաջադրանքների, նախագծերի, դասարանական վարժությունների կամ աշակերտների այլ գործունեության ընթացքում իրենց գնահատումներից ձևավորվող միավորների հաշվարկման կարգը: Ուսուցիչները պետք է հասկանան և կարողանան հստակ ձևակերպել բացատրել, թե ինչու են իրենց նշանակած միավորները տրամաբանական, արդարացի ու անաշառ՝ միաժամանակ նաև ընդունելով, որ այդ միավորներն արտացոլում են իրենց նախընտրություններն ու կարծիքը: Ուսուցիչները պետք է գիտակցեն և կարողանան խուսափել գնահատականի սխալ կիրառումից, օրինակ՝ գնահատականն իբրև պատժամիջոց օգտագործելուց: Նրանք պետք է կարողանան արժևորել և ճշգրիտ գնահատականներ նշանակել աշակերտների ձեռքբերումների մասին՝ իրենց մեկնաբանություններն ավելի վավերական դարձնելու նպատակով:

**6.** Ուսուցիչները պետք է գնահատման արդյունքի մասին սովորողների, ծնողների, ոչ մասնագետ այլ անձանց, նաև այլ մանկավարժների հետ տեղեկատվություն փոխանակելու, քննարկելու, **հաղորդակցվելու** հմտություն ունենան:

Ուսուցիչները պետք է գնահատեն արդյունքները պարբերաբար հայտնեն աշակերտներին և ծնողներին: Բացի այդ, նրանցից հաճախ պահանջվում է գնահատման արդյունքները հայտնել այլ մանկավարժների կամ վերջիններիս հետ քննարկել դրանք: Սովորողների

## Լրացուցիչ փուլ

Առարկա	Դիմումների ներկայացնելու մեջմուտքերի թիվ	Ձմեռվածների մեջմուտքերի թիվ	Բացականացնելու մեջմուտքերի թիվ	Հիմանդրման վայսձևաբառի ընդունուած դրվագների թիվ	Ձմեռվածների մեջմուտքերի թիվ
<b>Հայոց լեզու և հայ գրականություն</b>	303	287	16	-	-
<b>Հարոց պատմություն</b>	96	89	7	-	-
<b>Ընդհանուր պատմություն</b>	5	5	-	-	-
<b>Մարեկանության</b>	320	307	12	-	1
<b>Ֆիզիկա</b>	140	122	18	-	-
<b>Քիմիա</b>	144	126	18	-	-
<b>Կենսաբանություն</b>	170	164	6	-	-
<b>Աշխարհագրություն</b>	17	16	1	-	-
<b>Ռուսաց լեզու</b>	83	79	4	-	-
<b>Անգլերեն</b>	235	214	20	-	1
<b>Ֆրանսերեն</b>	4	4	-	-	-
<b>Գերմաներեն</b>	13	12	1	-	-
<b>Իսպաներեն</b>	-	-	-	-	-
<b>Իտալերեն</b>	1	1	-	-	-
<b>Պարսկերեն</b>	-	-	-	-	-

## Աղյուսակ 3

«Հայոց պատմություն» և «Ռուսաց լեզու» առարկաների ըննություններից բացակայել են դիմումիայտ ներկայացրածների համապատասխանաբար 6.5 և 5.5 տոկոսը: Այուս քննությունների բացակա-յությունները հիմնականում չեն գերազանցել 5.0%-ը: Իսպաներենի և պարսկերենի քննություններին բոլոր մասնակիցները ներկայացել են հիմնական փուլում: Իտալերենի քննությանը երկու փուլում էլ ներկայացել են դիմում-հայտ ներկայացրած բոլոր դիմորդները:

Հիմնական փուլում հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է մեկ դիմորդ (հայոց պատմության քննություն), մեկական դիմորդ հեռացվել է ֆիզիկայի և անգլերենի քննություններից:

Լրացուցիչ փուլում հիվանդության պատճառով քննությունն ընդհատելու դեպք չի արձանագրվել: Մեկական դիմորդ հեռացվել է մաթեմատիկայի և անգլերենի քննություններից:

### **3.4 2013 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների մասնակիցների թվի համեմատություն**

Ստորև ներկայացված դիագրամը ցույց է տալիս, որ տարեցտարի միասնական քննությունների մասնակիցների թիվը նվազել է: 2011 թ. միասնական քննությունների մասնակիցների թվի սյուները շատ ցածր են, որովհետև քննություններին մասնակցել են միայն նախորդ տարիների շրջանավարտները. հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ շրջանավարտ չունենալու պատճառով միասնական քննությունների մասնակիցների թիվը կտրուկ նվազել է:

Ընդհանուր նվազման ֆոնի վրա <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Քիմիա>>, <<Վենսարանություն>>, <<Աշխարհա-գրություն>>, <<Ռուսաց լեզու>>, <<Անգլերեն>>, <<Ֆրանսերեն>>, <<Իսպաներեն>>, և <<Պարսկերեն>> առարկաների միասնական քննությունների մասնակիցների թիվը 2010 թ. համեմատությամբ 2012 թ. ավելացել է: Դա կարող է պայմանավորված լինել որոշ մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության մեծացմամբ, քանի որ դիմորդների թիվը տարեցտարի նվազել է: Ինչ վերաբերում է 2013 թ. մասնակիցների թվին, «Բուալերեն» առարկայի քննությունից բացի, այն մնացած բոլոր քննությունների դեպքում զիջում է նախորդ տարվա ցուցանիշին: Վերը նշված առարկաներից քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և ռուսաց լեզվի քննությունների մասնակիցների թիվը, նվազելով հանդերձ, այս կամ այն չափով գերազանցում է 2012 թ. համապատասխան ցուցանիշին:

ուղղված որոշումներին նպաստող տեղեկատվությունը լավագույնս օգտագործելու նախապայմանն է: Ուսուցիչները պետք է քաջատերյակ լինեն, թե ինչ տեսակի տեղեկություններ կարող են տրամադրել գնահատման այլընտրական այս կամ այն տարբերակները, ինչպես նաև իմանան դրանց ուժեղ և թույլ կողմները: Մասնավորապես, նրանք պետք է ծանոթ լինեն գնահատման տարբեր մեթոդներին, որպեսզի կարողանան ընտրել իրենց ծրագրած նպատակներին լավագույնս համապատասխանողը:

**2.** Ուսուցիչները պետք է դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումներին համապատասխանող գնահատման եղանակներ մշակելու հմտություն ունենան:

Ուսուցիչները դասավանդման ընթացքում գնահատման տարբեր մեթոդներ մշակելիս և կիրառելիս պետք է առաջնորդվեն համապատասխան սկզբունքներով գնահատելիս խուսափելով ընդհանուր սխալներից: Ուսուցիչները պետք է ընտրեն այնպիսի մեթոդներ, որոնք համապատասխանում են դասավանդման նպատակներին:

**3.** Ուսուցիչները պետք է գոյություն ունեցող և իրենց կողմից մշակված գնահատման մեթոդները կիրառելու, միավորները հաշվարկելու և արյունքները մեկնաբանելու հմտություն ունենան:

Ուսուցիչները պետք է ճիշտ կերպով կիրառեն գնահատման արյունքները, ներառյալ առաջադրանքի կատարումը:

**4.** Ուսուցիչները պետք է առանձին սովորողների մասին որոշումներ կայացնելիս, դասավանդումը ծրագրելիս, ուսումնական ծրագրեր մշակելիս և դպրոցում բարեփոխումներ կատարելիս գնահատման մեթոդներն օգտագործելու հմտություն ունենան:

Գնահատման արյունքներն օգտագործվում են տարբեր մակարդակներում կրթական որոշումներ կայացնելիս. դասարանում՝ սովորողների վերաբերյալ, համայնքում՝ դպրոցի վերաբերյալ, կրթության վարչություններում՝ և նախարարությունում՝ կրթական

- օգտագործեն թե՝ գնահատումը, թե՝ նրա արդյունքները աշակերտներին քաջալերելու համար, որպեսզի վերջիններս կարողանան վստահել իրենց ուժերին և պայքարել ուսման բարձր առաջադիմության և անձնական հաջողությունների համար:


Այն ուսուցիչները, որոնք չեն խուսափում արդյունավետ գնահատմանը հասնելու դժվարություններից, հասկանում են, որ իրենք կարիք ունեն նախապես պատրաստվել գնահատմանը, պատրաստ լինել գնահատման ժամանակ հստակ ներկայացնելուն, թե ինչու է կենսականորեն անհրաժեշտ աշակերտներին ու նրանց ընտանիքներին իրենց սպասելիքները հստակ ներկայացնելը, և թե ինչու է կարևոր, որ իրեց իրականացրած գնահատումը հստակ ու ճշգրիտ արտացոլի սովորողներից իրենց ակնկալիքները:

Հմուտ ուսուցիչները գիտակցում են, շարունակում է Սթիգինսը, որ իրենք դպրոցում գնահատման գործընթացի կենտրոնում են և այդ պարտականության նրա բավական լրջորեն են վերաբերվում: Գործիմաց ուսուցիչները հասկանում են այն բարդությունները, որ ծագում են, եթե փորձում են գրակացել ուսումնառության նպատակները գնահատման համապատասխան մեթոդների հետ, քանի որ սովորողի առաջադիմության մասին ներկայացվող տեղեկությունների համապատասխանությանն ու ճշտությանը պետք է վստահեն և ուսուցիչները, և՝ աշակերտները: Դասարանում արդյունավետ գնահատման հարցում փորձառու ուսուցիչները գիտեն, թե ինչպես պետք է աշակերտներին իրենց լիարժեք գործընկերները դարձնեն դասավանդման կարևոր նպատակները որոշելու և դրանց որակյալ գնահատական տալու հարցերում: Սովորողների ուսումնական գնահատման համար հիմք են ծառայում ուսուցչի գնահատման կարողություններին վերաբերող հետևյալ չափորոշչային պահանջները:

**1.** Ուսուցիչները պետք է դասավանդման կատարելագործմանն ուղղված որոշումներին համապատասխանող գնահատման եղանակներ ընտրելու հմտություն ունենան:

Համապատասխան, օգտակար, իրականացման տեսակետից հարմար, տեխնիկապես համարժեք և արդար գնահատման մեթոդների ընտրության հմտությունը դասավանդման կատարելագործմանն

## 2013 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների մասնակիցների թվերը



**2. Վիճակագրական տվյալներ միասնական քննությունների ընդհանուր արդյունքների վերաբերյալ**

**2.1. Միասնական քննությունների ընդհանուր արդյունքները (հիմնական և լրացուցիչ փուլերը միասին)**

Հիմնական տարրերն մասին տվյալը	0-7,25 միավոր հավաքած նույնականացնելու	7,5 - 13,25 միավոր հավաքած նույնականացնելու	13,5 - 17,25 միավոր հավաքած նույնականացնելու	17,5 - 20,0 միավոր հավաքած նույնականացնելու	Առողջության մասին տվյալներ	
					Առողջության մասին տվյալներ	Առողջության մասին տվյալներ
Հարցուելու և հաղորդականություն	8934	20	1	13,1	890	10
Հարցուածություն	2355	20	3	13,4	255	11
Համաշխառման դաշտություն	219	20	3	11,5	46	21
Մաթեմատիկա	6928	20	2	11,8	1298	19
Ֆիզիկա	2499	20	1,75	11,4	592	24
Քիմիա	1368	20	0,75	12,6	277	20
Կենսաբանություն	1807	20	2,25	14,0	262	14
Աշխարհագույն դաշտություն	346	20	3,75	14,4	21	6
Ռուսաց լեզու	1218	20	2,25	11,0	237	19
Անգլիաց լեզու	6366	20	1,75	15,4	329	5
Ֆրանսերեն	294	20	4	16,2	8	3
Գերմաներեն	362	20	4	15,6	19	5
Իտալիաց լեզու	19	20	16,75	18,8	-	-
Իսպաներեն	5	16,5	12,5	14,8	-	-
Պորտուգալերեն	1	19,25	19,25	19,3	-	-

արդեն ձևավորված տեսակներ, այսուամենայնիվ, ուսուցիչն ինքն է ընտրում, թե դրանցից որ մեկն օգտագործի՝ հաշվի առնելով տվյալ թեմատիկ միավորի, դասի կամ գործնական վարժության նպատակը և դասարանի առանձնահատկությունները:

**Գնահատումը սովորողի ուսումնառության մասին տվյալներ հավաքելու գործընթաց է, որի նպատակը դասավանդումը կատարելագործելու մասին որոշումների ընդունումն է:** Այս գործը կարող է լավ կամ վատ կատարվել: Դասարանում արդյունավետ աշխատելու համար ուսուցիչները պետք է կարողանան գնահատումը լավ կատարել: Լավ նշանակում է, որ նրանք պետք է՝

- ստույգ տեղեկություններ հավաքեն իրենց աշակերտների ձեռքբերումների ու առաջադիմության մասին,
- դասավանդման գործընթացում այնպէս միահյուսեն գնահատումն ու դրա արդյունքները, որ սովորողներն օգուտ ստանան դրանից, այսինքն՝ ոչ թե պարզապես գնահատական նշանակեն, այլ մեծացնեն սովորելու ցանկությունն ու բարձրացնեն առաջադիմությունը,
- հասկանան, թե որն է ձեռքբերումների, ուսումնական և անձնական հաջողությունների այն մակարդակը, որին ուզում են հասած տեսնել իրենց աշակերտներին, սահմանեն ձեռքբերումների այդ աստիճանը, որոնց պիտի հասնեն աշակերտները: Սա պետք է ուսուցչի ուշադրության կենտրոնում լինի գնահատման և միավորների հաշվարկման ժամանակ,
- սովորողի ուսումնական առաջադիմության ու անհատական զարգացման մասին ձևավորված իրենց պատկերացումը կարողանան արտահայտել գնահատականներով ու միավորներով, որոնք ձգրիտ տեղեկություններ կտան նրանց ձեռքբերումների մասին: Այդ նպատակով պետք է ընտրվեն գնահատման համապատասխան մեթոդներ,
- բարձրակարգ գնահատման տարրեր եղանակներն ամփոփեն մեկ ամբողջի մեջ, որը կրնդգրկի ուսուցչի ակնկալիքների ողջ շղթան, և հնարավորություն կտա նրան հիմնավոր եզրահանգումներ անել սովորողի առաջադիմության մասին,
- կանխատեսեն և բացառեն իրեց գնահատումների մեջ սողոսկող կողմնակալ, խորական վերաբերմունքի սկզբնապատճառները,

ուսումնառության արդյունավետությունը, շարունակում է Սթիգինսը, նրանք պետք է անեն ճիշտ հակառակն այն բանի, ինչ անում էին նախկին ուսուցիչները. **պետք է աշակերտների միջից հանեն ձախողման տագնապը:**

Եթե սովորողները դպրոց են զալիս, նրանք ցանկանում են ուսուցիչներից իրենց հաջողության մասին վկայություններ ստանալ: Եթե այդ առաջին ապացույցները վկայում են, որ իրենք հաջողություն ունեն, նրանց մեջ զարգանում է լավատեսությունը և ապագա ավելի մեծ հաջողությունների ակնկալիքը: Սա խանդավառում է սովորողին, մղում ավելի շատ աշխատելու, ինչն էլ իր հերթին ավելի մեծ հաջողության խթան է դառնում: Այս հիմքը սեփական ձեռքբերումների վկայություններն են, որ սովորողներն ստանում են իրենց ուսուցիչներից դասարանում կատարվող գնահատման հիման վրա:

Սա հատկապես վերաբերում է ավագ դպրոցի սովորողներին, որոնք դեռևս ինքնառողության, ինքնահաստատման ձանապարհին են, վստահ չեն իրենց զգացումների ու գործողությունների վրա և պայքարը շարունակելու համար խրախուսանքի կարիք ունեն:

Սթիգինսը արդյունավետ գնահատման համար հետևյալ սկզբունքներն է առաջարկում, որոնց միջոցով գնահատումը հասնում է իր նպատակին, այն է՝ սովորողի առավելագույն հաջողությանը:

1. Գնահատումն օգտագործեք ուսումնառությունը խթանելու և ստուգելու համար:
2. Սովորողի առավելագույն հաջողությունը:
3. Համոզվեք, որ գնահատականները ճիշտ են:
4. Հայտնեք արդյունքները:
5. Համոզվեք, որ հետապնդվող նպատակը հստակ և համապատասխան ձևակերպում ունի:

### **Ուսուցիչը որպես գնահատման նախագծող**

Թեև գնահատման գործընթացում շատ գործող անձինք կան, բայց ներկայացվող մոտեցման սկզբունքն այն է, որ **գնահատման հիմնական նախագծողն ուսուցիչն է:** Նույնիսկ եթե նա օգտագործում է գնահատման

Այլուսակը ցույց է տալիս, որ 7.5-13.25, 13.5-17.25 և 17.5-20 միջակայքերում ամենահամաշաբաթ բաշխվածը աշխարհագրության միասնական քննության միավորներն են: Դրական միավորի շեմը չի հաղթահարել քննության մասնակիցների 6%-ը:

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, համաշխարհային պատմության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ռուսաց լեզվի միավորների գերակշռող մասը բաշխված է 7.5-13.25 միջակայքում: Դրական միավորի շեմը չի հաղթահարել այդ քննությունների մասնակիցների 10-24%-ը, իսկ 17.5-20 միավորների միջակայքում է 7-24%-ը:


Քիմիայի քննության միավորների 1/3-ը 7.5-13.25 միջակայքում է, 1/4-ից քիչ ավելին՝ 17.5-20-ում: Մասնակիցների թվի 1/5-ը չի հաղթահարել դրական միավորի շեմը:

Կեսարանության, անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի միավորների մեծ մասը (38-51%, օտար լեզուների դեպքում՝ 42-51%) բաշխված է 17.5-20 միջակայքում: Դրական միավորի շեմը չի հաղթահարել այդ քննությունների մասնակիցների 3-14%-ը (օտար լեզուների դեպքում՝ 3-5%):

Խսպաներենի միավորների 84%-ը և պարսկերենի միակ՝ 19.25 միավորը 17.5-20 միջակայքում են, իտալերենի 60%-ը՝ 13.5-17.25 միջակայքում, իսկ դրական միավորի շեմը չհաղթահարողներ չեն եղել: Այս քննությունների բարձր միավորները փոքրաթիվ (խսպաներեն՝ 19, իտալերեն՝ 5 և պարսկերեն՝ 1 դիմորդ) մասնակիցների՝ լավ պատրաստված լինելու արդյունք են:

Ընդհանուր հաշվարկով, միասնական քննությունների մեկ կամ մեկից ավելի առարկաներից դրական միավորների շեմը չի հաղթահարել 4234 դիմորդ, որը կազմում է դիմորդների ընդհանուր թվի (14896 մասնակից) 28.4 տոկոսը: Այդ դիմորդներից 2553-ը (17.1%) որևէ քննությունից դրական միավորի շեմից բարձր գնահատական չի ստացել:

## 2.2. 2013 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների արդյունքների համեմատություն



Դիագրամը վկայում է, որ միասնական քննությունների միջին միավորները մինչև 2011 թ. ընդհանուր առմամբ նվազման միտում են ունեցել: Իսպաներենի, իտալերենի և պարսկերենի միջին միավորների մեծ տատանումները բացատրվում են մասնակիցների փոքրաթիվ լինելով: 2011 թ. տվյալները օրինաչափությունների շեն ենթարկվում, և այդ տարվա միասնական քննությունների միջին միավորները

գնահատականների միջև եղած տարբերությունը: Այս նպատակով ստեղծվել է գնահատման կենտրոն և հուսանք, որ գնահատման այս երկու տեսակների միջև եղած տարբերությունը մոտ ապագայում կվերանա:

Գնահատման նպատակը

Խորհրդային դպրոցում կրթության կարևորագույն արդյունքը ուսման առաջադիմությունն էր, ուստի գնահատման իմաստը պարզապես բովանդակային գիտելիքների ծավալը որոշելն էր: Եվ այն աշակերտները, որոնք տեսական լավ պատրաստություն ունեին, համարվում էին դպրոցի լավագույն ներկայացուցիչներ: Բազմաթիվ լավ ուսուցիչներ հասկանում էին, որ գնահատումը պետք է լինի բազմակողմ և ամբողջական՝ ներառելով ոչ միայն տեսական գիտելիքների, այլ նաև այնպիսի հմտությունների գնահատումը, ինչպիսիք են, օֆինակ, ձնշմանը դիմանալը, ինքնակառավարումը, վստահությունը սեփական ուժերին, սեփական դիրքորոշումն ու վերաբերմունքը որոշակի հարցերի նկատմամբ և այլն:

Պատշաճ գնահատման խնդիրն է՝ **օգնել սովորողներին հասնել իրենց առջև դրված նպատակներին և դա հաճույքով անել**: Ու Սթիգիսը գրում է, որ ավագ սերնդի ներկայացուցիչների մեծ մասը մեծացել է այնպիսի դպրոցներում, որտեղ ուսուցիչները հավատացած էին, որ ուսումնառության առավել արդյունավետության հասնելու ուղին աշակերտների անհանգստությունը մեծացնելն է: Գնահատումը միշտ էլ վախ է ներշնչել: Չատ ուսուցիչներ հավատացած էին, որ եթե մի փոքր վախեցնելը չի ազդում, պետք է <<չափաբաժինն>> ավելացնել, այսինքն՝ ավելի շատ վախեցնել: Ահա թե ինչո՞ւ չափահասներից շատերն այսօր այն զգացումն ունեն, թե գնահատվելն, անշուշտ, վտանգավոր գործ է:

Այս հարցում ուսուցիչները սխալվում էին, քանի որ ձանաչողության ընթացքում մարդկային ուղեղի կենսաբանական գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ ուղեղն անհանգիստ ու լարված վիճակում է, այն ի պաշտպանություն կծկվում ու փակվում է: Այդ վիճակում դժվար է որևէ նոր բան տեսնել, հասկանալ և սովորել: Եթե մանկավարժներն ուզում են բարձրացնել աշակերտների

Քանի որ հասկանալու համար մարդիկ նախ փորձում են գնահատել, ուստի առավել կարևոր է անաշառ, արդար գնահատելու հմտությունը:

Թեև գնահատումը կարևոր է դպրոցի բոլոր աստիճաններում, սակայն ավագ դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունների բերումով այստեղ այն յուրահատուկ նշանակություն ունի: Այս տարիքում աշակերտները նախ՝ շատ զգայուն են գնահատման սխալների նկատմամբ, երկրորդ՝ շատ բաների բոլորովին այլ տեսանկյունից են նայում և հնարավոր են, ոչ համարժեք գնահատական են տալիս և երրորդ՝ նրանք ապրում են գնահատման տեսանկյունից շատ բազմազան աշխարհներում՝ երիտասարդական ենթամշակութային խմբերում, որոնք, որպես կանոն, համադրվում են գնահատման ընդունված համընդհանուր սկզբունքներին: Ավագ դպրոցի մանկավարժների պարտականությունը սովորողներին ոչ թե սուկ գնահատելն է՝ գաղտնի պահելով, թե ինչպես և ինչու է դա արվել, այլ բացատրելը, մեկնաբանելը, թե ինչպես է կատարվում յուրաքանչյուր գնահատում, ինչու է այն կարևոր, ինչպես է այն դասակարգում տարբեր որակական հատկանիշներ: Ավագ դպրոցի ուսուցիչը երկակի աշխատանք պիտի կատարի. ոչ միայն գնահատի, այլ նաև աշակերտներին սովորեցնի ինքնազնահատել: Ավագ դպրոցն առանձնահատուկ է, քանի որ այն ավարտելուց հետո սովորողներն ինքնուրույն կյանք են մտնում: Ուստի առօրյա կյանքում, ընդունելության քննությունների ժամանակ, գործունեության տարբեր ոլորտներում հաջողության հասնելու համար նրանք պետք է դպրոցական տարիներին լավ պատրաստվեն իրենց մասին իրական, ճիշտ պատկերացում կազմելու և գոյություն ունեցող հասարակական կյանքը հասկանալու համար:

Արժեքային կրթությունը և հույզերի կամ զգացմունքների խնդիրը ևս առկա է ավագ դպրոցում, ուստի աշակերտները կարիք ունեն հասկանալու, թե հույզերն ինչպես կարող են ազդել մարդկանց որոշումների վրա, և իրենք ինչպես կարող են պատշաճ գնահատել ուրիշներին: Սա հաղորդակցական հմտությունների կարևորագույն բաղադրիչ է: Արդի Հայաստանում բավական ցավոտ խնդիր է ավագ դպրոցի ավարտական և բուհերի ընդունելության քննությունների

համեմատության մեջ չեն դրվել մյուս տարիների միջինների հետ: Պատճառի մասին խոսվել է «Ընդհանուր տեղեկություններ» բաժնի 1.5 ենթաբաժնում:

2010 թ. համեմատությամբ 2012 և 2013 թթ. աճել են հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, գերմաներենի, իսպաներենի և պարսկերենի միջին միավորները: Նույն տարվա համեմատությամբ 2012 թ. 0.1-1.3 միավորով նվազել են հայոց պատմության, համաշխարհային պատմության, քիմիայի, ոռւսաց լեզվի, անգլերենի և ֆրանսերենի միջինները: Նշված առարկաների միջին միավորները նախորդ տարվա համեմատությամբ 2013 թ. ավելացել են 0.7-3.4 միավորով, բացի համաշխարհային պատմությունից, որի միջինը նվազել է 0.7-ով: Մաթեմատիկայի, կենսաբանության, աշխարհագրության և գերմաներենի միջին միավորները 2010 թ. համեմատությամբ վերջին 2 տարիներին աճել են, հայոց լեզվի և հայ գրականության ու ֆիզիկայի միջինների աճն ընդհատվել է, և 2013 թ., նախորդ տարվա համեմատությամբ նվազել, համապատասխանաբար, 0.8 և 0.6 միավորով:

### **2.3. Միասնական քննության արդյունքների և անցկացման կարգի բողոքարկումը**

Միասնական քննության բողոքարկումը կարող է լինել քննության անցկացման կարգի խախտման և քննության արդյունքների հետ անհամաձայնության վերաբերյալ, որոնցից առաջինի դեպքում դիմորդը կարող է գրավոր բողոքը պատասխանատու կազմակերպչին կամ գմբւներկայացուցչին ներկայացնել քննության օրը՝ մինչև քննասենյակից դուրս գալը: Երկրորդի դեպքում, տվյալ քննության արդյունքները հրապարակելու պահից մինչև հաջորդ օրվա ժամը 18.00-ը դիմորդը կարող է գրավոր բողոքը ներկայացնել այն քննական կենտրոնի օպերատորին, որտեղ հանձնել է քննությունը: Քննական կենտրոնի բողոքները կենտրոնի դեկանալ ներկայացնում է Գնահատման և թեստավորման կենտրոն: Բողոք-դիմումները քննարկվում են բողոքարկման հանձնաժողովում, որի արդյունքում կարող է որոշում

ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ փոփոխության վերաբերյալ: Միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

Քննական առարկա	Բողոք-դիմումների ընդհանուր թիվը	Ընդուածված բողոք-դիմումներ	
		թիվ	տոկոս
Հայոց լեզու և հայ գրականություն	136	13	10
Հայոց պատմություն	20	4	20
Համաշխարհային պատմություն	2	-	-
Մաթեմատիկա	126	34	27
Ֆիզիկա	42	14	33
Քիմիա	32	7	22
Կենսաբանություն	24	4	17
Աշխարհագրություն	2	2	100
Ուսուց լեզու	8	-	-
Անգլերեն	27	-	-
Ֆրանսերեն	4	-	-
Գերմաներեն	6	3	50
Իտալերեն	2	-	-

## Աղյուսակ 5

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս, որ բողոքարկման հանձնաժողովը առարկաների մեծ մասի բողոքարկման դիմումների վերաբերյալ առանձին դեպքերում քննության արդյունքի փոփոխության որոշում է կայացրել: Համաշխարհային պատմության, ուսուց լեզվի, անգլերենի, ֆրանսերենի և իտալերենի բողոքարկումների հիման վրա որևէ գնահատական չի փոխվել: Աշխարհագրության երկու դիմումներին էլ դրական պատասխան է տրվել, և գնահատականներում փոփոխություն է կատարվել: Մնացած առարկաների դեպքում դրական պատասխան ստացած դիմումները կազմել են ամրողի 10-ից (հայոց լեզու և հայ գրականություն) 50 (գերմաներեն) տոկոսը:

Սիլվա ՊԵՏՐՈՍՅԱՆ  
փիլ. գիտ. թեկնածու, ԵՊՀ դասախոս

## Գնահատման առանձնահատկություններն ավագ դպրոցում

Գնահատումը ցանկացած հասարակության և հատկապես քաղաքացիական կյանքի կարևորագույն հիմնախնդիրներից է: Շատ թյուրիմացություններ ու խնդիրներ են ծագում այն պատճառով, որ մարդիկ համարթեք չեն գնահատում, գնահատվում կամ ունեն ինքնազնահատման կարողության պակաս:

Գնահատումը ոչ թե զուտ կրթական, այլ կյանքի բոլոր բնագավառներին առնչվող խնդիր է: Անշուշտ, գնահատողների մեջ ամենակարևորը մանկավարժներն են, ուստի գնահատման նոր դերը հասկանալը նրանց համար կենսական անհրաժեշտություն է:

Ժողովրդավարական կրթությունը թերի է առանց համարթեք և համապատասխան գնահատման, որը պետք է ոչ միայն վերահսկման գործիք լինի, այլ նաև թերությունների բացահայտման, ինքնահատատման և կատարելագործման:

12. Ա. Բաղրասարյան, Ա. Դավթյան, Ա. Հալաջյան, Վ. Մկրտչյան, «Ի՞նչ գիտենք մեր մասին» հետազոտության որոշ արդյունքներ, Մանկավարժություն, հ. 2, Երևան, 2013:

**Изучение качества чтения в общеобразовательных школах  
Армении**  
**Арсен Багдасарян, Мирца Аладжян**  
**Резюме**

Центр оценки и тестирования Республики Армения регулярно в марзах и регионах страны методом тестирования проводит программу национальных исследований и оценочных мероприятий по предметам арменоведения и естествознания. Однако, к сожалению, в Армении до сих пор не было проведено полного и качественного исследования по проверке уровня преподавания важного для образовательной системы предмета – чтения. Качество чтения является одним из важнейших факторов общего образования, и должно всегда быть в центре внимания учителей и заинтересованных организаций.

**Research on Reading Quality in Secondary Schools in Armenia**  
**Arsen Baghdasaryan, Mirtsa Halajyan**  
**Summary**

Assessment and testing center carried out and consistently continuous to carry out external current assessment by tests in different marzes of Armenia, as well as national reviews on Armenological and Biological Subjects. But unfortunately there isn't any national research on reading in Armenia. Still the reading quality is one of the most important factors, which must be under the attention of teachers and organizations interested in it.

**2.4. 2013 թ. Կենտրոնացված բանավոր (թ) քննությունների ընդհանուր արդյունքները**

Քննություն	Միավոր՝ քննություն	Գումարման մեջը	Գումարման մեջը	Մասնակիություն	Մասնակիություն	Մասնակիություն	Մասնակիություն	20 միավոր ստացած դիմորդներ		Դրական միավորի շեմը շաղթահարած դիմորդներ	
								թիվ	տոկոս	թիվ	տոկոս
Հայոց լեզու(թ)	403	353	50	11.5	47	13.3	10	2.8			
Ռուսաց լեզու(թ)	132	123	9	10.7	24	19.5	2	1.6			
Անգլերեն(թ)	1260	1200	60	12.0	65	5.4	2	0.2			
Գերմաներեն(թ)	72	67	5	15.2	1	1.5	1	1.5			
Ֆրանսերեն(թ)	77	73	4	14.5	-	-	3	4.1			
Իսպաներեն(թ)	14	14	-	16.8	-	-	-	-			
Իտալերեն(թ)	5	5	-	16.8	-	-	-	-			
Նկարչություն	263	261	2	14.2	2	0.8	-	-			
Գծագրություն	274	268	6	13.8	16	6.0	1	0.4			
Գծանկար	34	14	20	13.8	-	-	-	-			
Կոմպոզիցիա	33	12	21	12.6	-	-	-	-			
Ստեղծագործական աշխատանք	174	157	17	13.2	9	5.7	-	-			
Բանավոր հադրդակցման միջոցներ	164	147	17	14.6	3	2.0	7	4.8			
Գծագրություն (կարսար)	22	15	7	6.2	8	53.3	-	-			

**Աղյուսակ 6**

Բանավոր քննություններին մասնակցել է 2709 դիմորդ, բացակայությունները կազմել են 7.4 տոկոս: Կենտրոնացված բանավոր քննություններից բացակայել են հիմնականում նրանք, ովքեր միասնական քննություններից հավաքել են 7.5-ից պակաս միավորներ:

Հայոց լեզվի և հայ գրականության, ռուսաց լեզվի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի բանավոր քննությունների, բանավոր հադրդակցման միջոցների և գծագրության քննությունների՝ դրական միավորների շեմը շաղթահարած դիմորդները կազմում են այդ քննությունների մասնակիցների թվի 0.2-4.8%-ը: Մնացած առարկաների բանավոր քննությունների դրական միավորների շեմը հաղթահարել են

բոլոր մասնակիցները: Ֆրանսերենի, իսպաներենի, իտալերենի բանավոր և գծանկարչության ու կրոմպոդիցիայի քննությունների մասնակիցներից ոչ ոք 20 միավոր չի հավաքել: Ամենաշատ 20 միավորները բաժին են ընկնում գծագրության (կաղաստ), ոռուսաց լեզվի, հայոց լեզվի և հայ գրականության բանավոր քննություններին (համապատասխանաբար՝ 53.3, 19.5 և 13.3%):

Այդուսակ 7-ում ներկայացված են 7 լեզուներից բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները, այդ դիմորդների՝ միևնույն առարկաների միասնական քննությունների միջին միավորները և ընդհանուր միջին միավորները:

Քննական առարկա	Միասնական քննության ընդհանուր միջին միավոր	Բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորներ	
		Միասնական քննություն	Բանավոր քննություն
Հայոց լեզու և հայ գրականություն	13.1	<b>13.7</b>	11.5
Ռուսաց լեզու	11.0	<b>13.7</b>	10.7
Անգլերեն	15.4	<b>16.8</b>	12.0
Ֆրանսերեն	16.2	<b>17.4</b>	14.5
Գերմաներեն	15.6	<b>18.3</b>	15.2
Իտալերեն	18.8	18.7	16.8
Խոսքերեն	14.8	<b>14.8</b>	16.8

## Աղյուսակ 7

Այդուսակը վկայում է, որ բացի իտալերենից, մնացած բանավոր քննությունների միջին միավորները ցածր են բանավոր քննություն հանձնած դիմորդների՝ տվյալ քննական առարկայի միասնական քննությունից ստացած միջին միավորներից: Վերջինները բարձր են միասնական քննությունների համապատասխան ընդհանուր միջիններից (բացի իսպաներենից):

International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2004111600, ISBN: 1-889938-35-1, p. 503..

2. I. Mullis, M. Martin, A. Kennedy, PIRLS 2006 Technical Report, TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2007925071, ISBN: 1-889938-46-7, p. 287.
3. Ed.R. Adams, M.Wu, PISA 2003 Technical Report, OECD 2004.
4. M. Wu, "Comparing the Similarities and Differences of PISA 2003 and TIMSS", OECD Education Working Papers, No 32, 2010, OECD Publishing.
5. Результаты международного исследования PIRLS - 2011 (под редакцией Г.С. Ковалевой), 2012, 8 стр.
6. Վ. Հարությունյան, Ա. Բաղդասարյան, Սաթենատիկայից և բնագիտական առարկաներից TIMSS-2003 միջազգային ստուգատեսք Հայաստանում, «Աստղիկ գրատուն», Երևան, 2004, 52 էջ:
7. Ա. Բաղդասարյան, Վ. Խաչատրյան, Ա. Սարգսյան, Ռ. Թովհյան, Ա. Սահակյան, Սովորողների գնահատման հայեցակարգ «Էղիք Պրինտ», Երևան, 2005, 12 էջ:
8. Ա. Բաղդասարյան, Օ. Միքայելյան, Ա. Նազարյան, Սովորողների առաջադիմության գնահատման ընթացակարգ «Տիգրան Մեծ», Երևան, 2007, 12 էջ:
9. Ա. Բաղդասարյան, Ընթացիկ գնահատման սկզբունքները և իրականացման ձևերը «Հանրակրթություն. Գնահատում և թեստավորում», Երևան, հ. 2, 6-21, 2008:
10. Ա. Բաղդասարյան, Մ. Հալաջյան, Ս. Մելիքյան, Ս. Մկրտչյան, Մեստավորում հայագիտական առարկաներից, Մանկավարժություն, հ. 5, 37-54, Երևան, 2012:
11. Ա. Բաղդասարյան, Մ. Հալաջյան, Վ. Մկրտչյան, «Ի՞նչ գիտենք մեր մասին» հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի թեսուի կարծ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքների բովանդակային-վիճակագրական վերլուծություն, «Մանկավարժություն», հ. 1, Երևան, 2013:

## Ակնկալվող արդյունքները

Հուսով ենք, որ հետազոտության արդյունքում կստացվեն հետևյալ արդյունքները՝

- Կմշակվի ընթերցանության որակը և ընկալման մակարդակը և առաջադիմության ցուցանիշների վրա ազդող գործոնները հետազոտելու թեստաբանական որակյալ գործիք,
- Կառաջանա Հայաստանի Հանրապետության դպրոցների ընթերցանության որակի և ընկալման մակարդակի ընդհանուր միջինացված պատկերը,
- Կկատարվի Երևանից և Հայաստանի մարզերից ստացված տեղեկությունների համեմատական վերլուծություն,
- Կկատարվի ընթերցանությանն ուղղված բազմակողմանի վերլուծություն՝ ընթերցելու փորձառություն, ինֆորմացիայի օգտագործման, կենտրոնացման և ինֆորմացիան գտնելու կարողության, եզրակացությունների կատարման, ինֆորմացիայի մեկնաբանման և տեքստի բովանդակության արժեքուման ուղղություններով,
- Կրացահայտվեն ընթերցանության և ընկալման ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, որոնք ձևավորում են առաջադիմության մակարդակը,
- Կիայտնաբերվեն ընթերցանության որակը և ընկալման մակարդակը ձևավորող հիմնական գործոնները,
- Կուտումնասիրվեն ընթերցանության դասավանդման և արժեքուման մեթոդները,
- Կատարված վերլուծական աշխատանքների հիման վրա կձևակերպվեն ոլորտի զարգացմանն ուղղված եզրահանգումներ,
- Կմշակվեն նկատառումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ:
- Հոդվածը գրվել է «ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS 13-5C367 գիտական թեմայի շրջանակներում»:


Գրականություն

1. Mullis, M. Martin, S. Chrostowski, TIMSS 2003 Technical Report, TIMSS & PIRLS

## 3. Միջին միավորները ըստ խմբերի

### 3.1. Միջին միավորների պահանջվածությունը ըստ մարզերի

Հետևյալ դիագրամն ընդհանուր պատկերացում է տալիս ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2013 թ. 1000-ից ավելի դիմորդ ունեցած առարկաների պահանջվածության մասին: Դիագրամում ըստ մարզերի ներկայացված է միասնական քննությունների դիմորդների տոկոսը դիմորդների ընդհանուր թվի մեջ: Գծերով ներկայացված են ՀՀ մայրաքաղաքը, մարզերը և ԼՂՀ-ն: Թվերը ցույց են տալիս տոկոսների սանդղակը:



Դիագրամը ցույց է տալիս, որ ՀՀ մարզերում և Երևանում քննության առարկաների պահանջվածությունը գրեթե նույն կազմի է.

ամենամեծ պահանջվածություն ունեն հայոց լեզուն և հայ գրականությունը, ապա՝ անգլերենը և մաթեմատիկան: Մյուս առարկաների պահանջվածությունն անհամեմատ ցածր է: Երեսանի և մարզերի բազմանկյունները գրեթե համընկնում են, իսկ ԼՂՀ-ինը զգալիորեն տարբեր է: ՀՀ-ի բազմանկյուններից առանձնանում է Տավուշի մարզինը: Այստեղ ամենապահանջված առարկաներից հայոց լեզվի և հայ գրականության ցուցանիշը գրեթե համընկնում է մյուս մարզերի հետ, մաթեմատիկայինը և անգլերենինը ՀՀ-ում:

### 3.2. Միասնական քննությունների միջին միավորները ըստ առարկաների և մարզերի

Այլուսակ 7-ում ՀՀ մայրաքաղաքի, մարզերի և ԼՂՀ-ի կտրվածքով ներկայացված են 2013 թ. միասնական քննությունների միջին, ինչպես նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Յուրաքանչյուր մարզի համապատասխանող տողում մգացված են տվյալ քննական առարկայի՝ ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները վանդակները: Մգացված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը:

Մարզ	Հայոց և հայ գրականություն	Հայոց պատմություն	Հայութական պատմություն	Մարդաբանություն	Ֆիզիկա	Կենսաբանություն	Աշխարհագրություն	Ինտելեկտուալ ինքնույթ	Անգլերեն	Ֆրանսերեն	Գերմաներեն	Իռլանդերեն	Իտալերեն	Շվեյցարերեն	Դաշնական
Երևան	<b>14.1</b>	14.7	10.7	<b>13.1</b>	12.4	13.4	15.2	15.1	<b>16.1</b>	17.7	<b>18.1</b>	18.7	14.4	<b>19.3</b>	
Արագածոտն	12.3	13.7	13.1	11.3	11.2	11.3	13.6	14.6	11.3	13.9	15.9	15.5	-	-	-
Արարատ	13.8	14.3	13.0	12.0	12.6	14.0	<b>15.4</b>	15.2	<b>12.8</b>	15.7	<b>18.8</b>	16.5	<b>19.5</b>	-	-
Արմավիր	13.1	13.2	11.8	11.0	11.0	12.4	13.8	16.1	10.9	14.4	16.8	14.5	-	-	-
Գեղարքունիք	13.3	12.8	10.8	11.2	12.1	13.7	14.7	12.7	12.1	14.0	11.4	16.2	-	-	-
Լոռի	13.1	13.8	12.5	11.5	12.1	<b>14.6</b>	13.8	15.5	12.7	15.4	13.5	14.5	-	-	-
Կոտայք	<b>14.1</b>	<b>15.3</b>	14.5	13.0	12.6	13.3	14.4	<b>16.7</b>	12.4	16.0	16.0	17.8	-	-	-
Շիրակ	13.3	14.1	13.0	11.5	11.0	11.9	14.9	14.9	11.6	15.1	16.7	14.9	-	-	-
Սյունիք	12.6	14.3	10.7	10.7	11.6	13.5	14.2	16.0	11.9	15.9	15.8	15.9	-	-	-
Վայոց Ձոր	11.4	14.1	<b>15.7</b>	11.1	<b>14.1</b>	12.4	13.8	14.3	10.0	12.7	13.9	13.6	-	-	-
Տավուշ	12.4	11.6	9.5	11.4	8.9	10.5	13.1	14.2	10.0	15.0	14.2	15.4	-	-	-
ԼՂՀ	9.8	9.8	9.8	8.9	7.4	10.1	10.2	11.9	10.2	14.2	16.0	-	-	-	-
Ընդհանուր միջին միավոր	13.1	13.4	11.5	11.8	11.5	12.6	14.0	14.4	11.0	15.4	16.2	15.6	18.8	14.8	<b>19.3</b>

### Այլուսակ 8

կողեր, որոնք հաշվի են առնում ոչ միայն հավաքած միավորները, այլև աշակերտների կողմից ամենահաճախ տրված (ինչպես ձիշտ, այնպես էլ սխալ) պատասխանները: Համապատասխան կողեր նախատեսված են նաև անբովանդակ պատասխանների և դատարկ թողնված առաջադրանքների համար: Կոդավորման նման ձևով հնարավորություն է տալիս ոչ միայն կատարել առաջադիմության միջին ցուցանիշների վիճակագրական վերլուծություն, այլև հայտնաբերել այս կամ այն գործոնները, որոնց պատճառով աշակերտները չեն կարողացել հաղթահարել տվյալ թեստային առաջադրանքը:

Տվյալների մուտքագրումը կատարվում է տվյալների բազայի մեջ, որտեղ գրանցվում են բոլոր դպրոցների (աշակերտների և հայագիտական առարկաների ուսուցիչների) ցուցակները, մուտքագրվում են թեստավորման գրքույկներից և հարցաշարերից ստացված տվյալները:

Տվյալների վիճակագրական վերլուծությունը իրականացվում է SPSS համակարգչային ծրագրի միջոցով: Արդյունքում առաջանում է նկարագրողական վիճակագրություն, հաշվարկվում են առաջադիմության միջին ցուցանիշները, հետազոտվում են հարաբերակցային կապերը, առաջընթացի միտումները, հայտնաբերվում է ազդեցության գործոնների նշանակալիությունը և այլն:

Ամփոփումը և եզրակացությունները կատարվում են վիճակագրական վերլուծության հիման վրա, կազմվում են հաշվետվություններ և իրապարակումներ: Հուսով ենք, որ արդյունքում կառաջանա ընթերցանության որակի և ընկալման մակարդակի ընդհանուր պատկերը, կհայտնաբերվեն ազդեցության նշանակալի գործոնները, կձգրտվեն և կիհանապատասխանեցվեն դասավանդման մեթոդները, առարկայական ծրագրերը և ուսումնական գրականությունը, աշակերտների մոտ կծանալի նպաստավոր վերաբերմունք դեպի ընթերցանությունը:

Արդյունքների լուսաբանումը պլանավորվում է կատարել գիտական հրապարակումների, գիտաժողովների, սեմինարների և քննարկումների միջոցով: Անհրաժեշտության դեպքում արդյունքները կլուսաբանվեն նաև ԶԼՍ-ներում:

- տվյալների վիճակագրական վերլուծություն,
- ամփոփում և եզրակացություններ,
- արդյունքների լուսաբանում:

Թիրախային բազմության ընտրությունը կատարվում է ներկայացուցչականության սկզբունքով՝ հետևյալ գործոնների նկատմամբ՝

- դպրոցի գտնվելու վայրը (ներկայացուցչականություն ըստ վայրի),
- դպրոցի աշակերտների թիվը (ներկայացուցչականություն ըստ չափերի):

Գործիքակազմի մշակումը ենթադրում է թեստավորման բազմաթիվ նյութերի մշակում, այդ թվում՝

- գիտելիքների գնահատման գրքույների,
- աշակերտների համար հարցաշարերի,
- օժանդակ նյութերի (ուղեցույցներ, աշխատակարգեր, ձեռնարկներ):

Սեմինարները և վերապատրաստումները կատարվում են հետազոտությանն աջակցող աշխատակազմի գործառույթները և պարտականությունները պարզաբանելու նպատակով: Այդ թվում՝

- դպրոցների համակարգողների և ուսուցիչների,
- թեստերի և հարցումների կազմակերպիչների,
- աշխատանքները ստուգողների,
- տվյալները մուտքագրողների:

Թեստավորումների և հարցումների անցկացումը կատարվում է հատուկ մշակված աշխատակարգերով: Համապատասխան մասնագետները պետք է խստորեն հետևեն աշխատակարգերին՝ նախօրոք ներկայանան և ծանոթանան դպրոցներին, թեստավորման ընթացքում աշակերտներին բացատրեն իրենց անելիքը, հետևեն կարգապահությանը և թեստավորման ժամանակահատվածներին և ժամանակին նյութերը վերադարձնեն կենտրոն: Թեստավորման ամբողջ ընթացքը իրականացվում է երեք փուլով՝ նախնական փորձարկում, փորձարկում, հիմնական թեստավորում:

Աշխատանքների ստուգումը և կողավորումը կատարվում է յուրաքանչյուր թեստային առաջադրանքի համար մշակված ստուգման ձեռնարկների հիման վրա: Կողավորումը օգտագործում է ախտորոշչի

Աղյուսակ 8-ը վկայում է, որ հիմնական քննական առարկաներից բացի, իսպաներենի, իտալերենի և պարսկերենի միասնական քննություններին մասնակցել են Երևանի, իսպաներենի քննությանը՝ նաև Արարատի մարզի դիմորդները: Տավուշի մարզի և ԼՂՀ-ի բոլոր միջին միավորները զիջում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին, թեև համաշխարհային պատմության, ոռուսաց լեզվի և ֆրանսերենի միջիններով ԼՂՀ-ն գերազանցում է Տավուշին: Միայն Արարատի մարզում է, որ բոլոր առարկաների միջին միավորները գերազանցում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Ընդ որում, կենսաբանության, ոռուսաց լեզվի, ֆրանսերենի և իսպաներենի ամենաբարձր միջին միավորները այս մարզին են պատկանում:

Երևանի միջին միավորները, բացի համաշխարհային պատմության, իսպաներենի և իտալերենի միջիններից, նույնպես բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ռուսաց լեզվի միջինը հավասար է ընդհանուր միջին միավորին: Հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի, անգլերենի և գերմաներենի ամենաբարձր միջին միավորները պատկանում են Երևանին: Պարսկերենի քննություն հանձնած միակ դիմորդը Երևանից է:

Արագածոտնի մարզում ընդհանուր միջին միավորներից բարձր են հայոց պատմության և համաշխարհային պատմության, բնագիտական առարկաներից՝ միայն աշխարհագրության, օտար լեզուներից՝ միայն աշխարհագրության, օտար լեզուներից՝ միայն ֆրանսերենի միջին միավորները:

Արմավիրի մարզի մարզի հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորը հավասար է ընդհանուր միջինին: Համապատասխան ընդհանուր միջին միավորներից բարձր են համաշխարհային պատմության, բնագիտական առարկաներից՝ միայն աշխարհագրության, օտար լեզուներից՝ միայն ֆրանսերենի միջին միավորները:

Գեղարքունիքի մարզում ընդհանուր միջին միավորից բարձր են հայոց լեզվի և հայ գրականության, բնագիտական առարկաների (բացի աշխարհագրությունից), օտար լեզուներից՝ ոռուսաց լեզվի և գերմաներենի միջին միավորները:

Լոռու մարզի հայոց լեզվի և հայ գրականության ու անգլերենի միջին միավորները հավասար են համապատասխան ընդհանուր միջիններին:

Հայոց պատմության և համաշխարհային պատմության, բնագիտական առարկաներից՝ ֆիզիկայի, քիմիայի և աշխարհագրության, օտար լեզուներից՝ ոռուսաց լեզվի միջին միավորները գերազանցում են ընդհանուր միջին միավորներին:

Կոտայքի մարզի բոլոր միջին միավորները, չհաշված քրանսերենինը, բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ընդ որում, հայոց լեզվի և հայ գրականության ամենաբարձր միջին միավորը, որը դիտվել էրևանի դեպքում ևս (14.1), բաժին է ընկել նաև այս մարզին: Հայոց պատմության և աշխարհագրության ամենաբարձր միջին միավորները նույնպես Կոտայքի մարզինն են:

Շիրակի մարզում բարձր են հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, ընդհանուր պատմության, կենսաբանության, աշխարհագրության, ոռուսաց լեզվի և ֆրանսերենի միջին միավորները:

Սյունիքի մարզում համապատասխան ընդհանուր միջին միավորներին գերազանցել են հայոց պատմության, բոլոր բնագիտական առարկաների, օտար լեզուներից՝ ոռուսաց լեզվի, անգլերենի և գերմաներենի միջինները:

Վայոց Չորի մարզում ընդհանուր միջին միավորներից բարձր են միայն հայոց պատմության, ընդհանուր պատմության և ֆիզիկայի միջինները: Ընդ որում, վերջին երկուսը այդ առարկաների ամենաբարձր միջին միավորներն են:

Ինչպես վերևում նշվել է, Տավուշի մարզի և ԼՂՀ-ի բոլոր միջին միավորները ցածր են ընդհանուր միջին միավորներից: ԼՂՀ-ում ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենինն է, ամենացածրը՝ ֆիզիկայինը:

Երևանում և մարզերում ընդհանուր միջին միավորին գերազանցող ամենաշատ միջին միավորներ ունեն հայոց պատմությունը, աշխարհագրությունը և ոռուսաց լեզուն:

ՀՀ մարզերում հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի և գերմաներենի ամենացածր միջին միավորները դիտվում են Վայոց Չորի, հայոց պատմության, ընդհանուր պատմության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և ոռուսաց լեզվի ամենացածր միջինները՝ Տավուշի

6. Հետազոտության արդյունքների հիման վրա կատարել եղրակացություններ, ամփոփումներ, սեմինարներ, կատարելագործման դաշնամարտներ, որոնք պիտի նպաստեն ընթերցանության որակի և ընկալման մակարդակի բարձրացմանը:

7. Նկարագրված նպատակների իրականացման արդյունքում հասնել հետազոտության հիմնական նպատակին՝ աշակերտների մեջ ծևավորել նպաստավոր վերաբերմունք ընթերցանության նկատմամբ, ինչի շնորհիվ՝

- ավելի արդյունավետ կդառնա ուսման հետազա առարկայական գործընթացը (որպես հետևանք՝ դասագրքերից և այլ ուսումնական ձեռնարկներից հետաքրքրությամբ և արդյունավետ օգտվելու, դրանք հաճույքով կարդալու և կարդացածը լիարժեք ընկալելու),
- կրարձրանա աշակերտների ընդհանուր զարգացածության շրջանավարտների կայացմանը (որպես գեղարվեստական և գիտահանրամատչելի գրականության ընթերցման հետևանք),
- շրջանավարտը մասնագիտական հաջողություններ կունենա հետդպրոցական կյանքում և կկայանա որպես բանհմաց մասնագետ (մասնագիտական գրականության ընթերցման և յուրացման արդյունքում):

### Իրականացման եղանակներն ու մեթոդները

Հետազոտության իրականացման հիմնական եղանակը թեստավորման և հարցման եղանակն է՝ համակարգչային տեխնոլոգիաների և մաթեմատիկական վիճակագրության մեթոդների օգտագործմամբ:

Հետազոտության նախապատրաստումն ու իրականացումը ենթադրում է աշխատանքների մեջ փաթեթ, այդ թվում՝

- թիրախային բազմության ընտրություն,
- գործիքակազմի մշակում,
- սեմինարների և վերապատրաստումների անցկացում,
- թեստավորումների և հարցումների անցկացում,
- լրացված աշխատանքների ստուգում և կողավորում,
- տվյալների մուտքագրում,

3. Հայտնաբերել ընթերցանության որակը արտահայտող առաջադիմության ցուցանիշների վրա ազդող հիմնական գործոնները և գնահատել դրանց նշանակալիությունը: Հետազոտվող գործոնների շարքում կարելի է նշել հետևյալները՝

- բնակության վայրը (մայրաքաղաք, քաղաք, գյուղ),
- ընտանիքը (սոցիալական վիճակը, ծնողների կրթությունը, սոցիալական դիրքը և այլն),
- դպրոցը (շենքային պայմանները, ֆինանսական ապահովածությունը, հագեցվածությունը և այլն),
- մթնոլորտը դպրոցում (հարաբերությունները համադասարանցների և ուսուցիչների հետ, հաճախելիությունը և վարքը, ծնողների մասնակցությունը, միջոցառումները և այլն),
- դասավանդումը (դասավանդման մեթոդները, նոր նյութի ծնողներին, շփում ընկերների հետ, գրքեր, սպորտ, հեռուստահաղորդումներ և այլն),
- աշակերտի սեօթ (տղաներ, աղջիկներ),
- Վերաբերմունքը ընթերցանությանը (անձնական վերաբերմունքը, ինքնագնահատականը, համեմատումը մյուս առարկաների հետ, ապագայի ծրագրերը և այլն):

4. Կատարել աշակերտների ցուցաբերած ցուցանիշների համեմատություն, իրականացնել տվյալների վիճակագրական վերլուծություն, հայտնաբերել աճի միտումները և հարաբերակցային կապերը: Նախատեսվում է իրականացնել գիտելիքների մակարդակների համեմատություն աշակերտների հետևյալ թիրա-խային խմբերի միջև՝

- Երևանի և մարզերի դպրոցներ,
- Հայաստանի տարբեր մարզերի դպրոցներ:

5. Ուսումնասիրել ընթերցանության դասավանդման հետ կապված հարցերը, այդ թվում՝

- դասավանդման մեթոդները,
- դասավանդման ծրագրերի համապատասխանությունը արդի պահանջներին,
- դպրոցների հագեցվածությունը ուսումնական գրականությամբ և դրա որակը:

(ոուսաց լեզվինը՝ նաև Վայոց Զորի), մաթեմատիկայինը՝ Սյունիքի, աշխարհագրությանը և ֆրանսերենինը՝ Գեղարքունիքի մարզերում:

### 3.3 Միասնական քննությունների միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Քննության առարկա	Ավագություն		Միջազգային դպրոցներ		Հարաբերական դպրոցներ		Համամական դպրոցներ		Պատուական դպրոցներ		Պատուական համարակալիցիալ դպրոցներ		Ոչ պատուական, համարակալիցիալ դպրոցներ		Ոչ պատուական համարակալիցիալ դպրոցներ		Հայուսաց պերի միավոր
	Մասնակցության տևաքանակը	Մասնակցության միջին դիրքը	Մասնակցության տևաքանակը	Մասնակցության միջին դիրքը	Մասնակցության տևաքանակը	Մասնակցության միջին դիրքը	Մասնակցության տևաքանակը	Մասնակցության միջին դիրքը									
Հարցելու և հայ գրակ.	4836	13.6	3,450	12.3	141	12.9	259	13.2	141	14.0	108	13.5	285	12.9	13.1	13.1	
Հարց պատություն	1217	14.3	1,058	12.3	32	13.0	58	14.7	41	13.9	25	12.9	20	9.0	13.4	13.4	
Համաշխառման պատու.	54	10.7	152	11.9	3	8.4	9	13.1	4	15.6	25	3.3	89	13.6	11.5	11.5	
Մարտնչական	3533	12.2	2,452	10.7	106	11.9	467	12.8	247	11.1	108	10.6	264	15.2	11.8	11.8	
Ֆիզիկա	1072	11.6	909	10.7	28	11.5	248	12.5	176	9.3	1	12.7	8	7.9	11.4	11.4	
Բժիշկա	825	12.8	420	11.9	17	12.5	39	11.3	49	14.9	0	9.1	4	8.6	12.6	12.6	
Կենսաբնույթուն	1008	14.4	613	13.1	21	14.2	51	13.1	55	15.8	34	14.6	59	16.0	14.0	14.0	
Աշխարհագրություն	137	14.4	192	14.2	7	15.1	4	16.3	6	17.0	3	6.2	1	4.8	14.4	14.4	
Ռուսաց լեզու	482	11.8	625	10.7	10	8.4	29	10.7	95	9.3	190	7.6	200	12.5	11.0	11.0	
Անգլերեն	4018	15.8	1,837	14.3	110	15.1	212	15.3	110	15.6	-	16.4	-	-	15.4	15.4	
Ֆրանսերեն	170	16.6	109	15.5	9	17.6	2	15.5	5	16.3	31	7.9	43	10.3	16.2	16.2	
Գերմաներեն	120	16.3	244	15.3	-	-	1	19.8	3	18.3	-	-	-	-	15.6	15.6	
Խոպաներեն	18	18.7	2	19.5	-	-	-	-	-	-	2	-	4	3.5	18.8	18.8	
Խոտերեն	4	14.6	-	-	-	-	1	15.8	-	-	-	-	-	-	14.8	14.8	
Պարսերեն	1	19.3	-	-	-	-	-	-	-	-	99	-	-	-	19.3	19.3	

Աղյուսակ 9-ում ըստ քննական առարկաների ներկայացված են պետական (ավագ, միջնակարգ, հիմնական դպրոցներ, հենակետային և պետական վարժարաններ և այլն) և ոչ պետական դպրոցներից քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները, ինչպես նաև այդ առարկաների քննությունների ընդհանուր միջին միավորները:

Աղյուսակից հետևում է, որ ավագ դպրոցներում ամենաբարձրը օտար լեզուների միջին միավորներն են: Այս դպրոցների գրեթե բոլոր

միջին միավորները, բացի համաշխարհային պատմությունից, իսպաներենից և իտալերենից, գերազանցում են կամ հավասար են (աշխարհագրություն) համապատասխան ընդհանուր միջիններին: Ամենաբարձր միջին միավորը պարսկերենին է (19.3), ամենացածրը՝ համաշխարհային պատմությանը (10.7):

Միջնակարգ դպրոցներում ընդհանուր միջին միավորներից բարձր են միայն համաշխարհային պատմության և իսպաներենի միջինները: Ամենաբարձր միջին միավորը իսպաներենին է (19.5), ամենացածրը՝ մաթեմատիկայինը, ֆիզիկայինը և ռուսաց լեզվինը (10.7): Այս դպրոցների շրջանավարտները իտալերենի և պարսկերենի քննություններին չեն մասնակցել:

Հիմնական դպրոցների ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենին է (17.6), ամենացածրը՝ համաշխարհային պատմությանը և ռուսաց լեզվինը (8.4): Ընդհանուր միջին միավորներից բարձր են մաթեմատիկայի, բնագիտական առարկաների (բացի քիմիայից) և ֆրանսերենի միջին միավորները: Հիմնական դպրոցների շրջանավարտները չեն մասնակցել գերմաներենի, իսպաներենի, իտալերենի և պարսկերենի քննություններին:

Ընդհանուր միջին միավորներից բարձր միջին միավորները հենակետային վարժարանների դեպքում բաժին են ընկնում հայոց լեզվին և հայ գրականությանը, հայոց պատմությանը, համաշխարհային պատմությանը, մաթեմատիկային, ֆիզիկային, աշխարհագրությանը և գերմաներենին: Ամենաբարձր միջին միավորը գերմաներենին է (19.8), ամենացածրը՝ ռուսաց լեզվինը (10.7): Հենակետային վարժարանների շրջանավարտները ևս չեն մասնակցել իսպաներենի և պարսկերենի քննություններին:

Դետական վարժարանների միջին միավորները ընդհանուր միջին միավորներից բարձր են հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, բնագիտական առարկաների (բացի ֆիզիկայից) և օտար լեզուների (բացի ռուսաց լեզվից) դեպքում: Իսպաներենի, իտալերենի և պարսկերենի քննություններին այս վարժարանների շրջանավարտները չեն մասնակցել: Ամենաբարձր միջին միավորը ունի գերմաներենը (18.3), ամենացածր միջին՝ ռուսաց լեզուն (9.3):

- եզրակացությունների կատարում,
- տեղեկության մեկնաբանում,
- տեքստի բովանդակության արժենորում:

Մշակված գործիքը հնարակորություն կտա կատարել բազմակողմանի հետազոտություն ընթերցանության վիճակը բնութագրող բոլոր նշված ուղղություններով: Հետազոտության ընթացքում նախատեսվում է իրականացնել գիտելիքների, կարողությունների և ունակությունների թեստավորում և անցկացնել սոցիոլոգիական հարցում: Հավաքված տվյալների մանրամասն և համակողմանի վիճակագրական վերլուծությունը կպարզի ինչպես ընթերցանության մակարդակի ընդհանուր միջին պատկերը, այնպես էլ կրացահայտի առաջացած ցուցանիշների կախվածության աստիճանը հարցաշարերում ընդգրկված ազդեցության գործուներից:

Ուստի ներկայումս արդիական խնդիր է ընթերցանության հմտությունները ուսումնասիրող հետազոտության անցկացումը:

Հետազոտության առանցքային նպատակն է՝ բարձրացնել Հայաստանի Հանրապետության դպրոցներում ընթերցանության մակարդակը, օժանդակել տեքստը ընկալելու, դրա վերաբերյալ կարծիքներ հայտնելու, ստացված տեղեկությունը մեկնաբանելու, ոչ բացահայտողեն, այսպես ասսած, ակնարկված մտքերը կրահելու հմտությունների ձևավորմանը, ինչը կնպաստի ոչ միայն հայոց լեզվի և գրականության նյութերի, այլև բոլոր առարկաների, ինչպես նաև գեղարվեստական, գիտահանրամատչելի գրականության, լրատվության նյութերի ձիշտ ու բազմակողմանի ընթանմանը:

Այդ նպատակին օժանդակելու համար այս նախագծի շրջանակներում մենք հետապնդում ենք հետևյալ նպատակները՝

1. Մշակել ընթերցանության որակի, կարդացածի ընկալման և ստացված ցուցանիշների վրա ազդող գործուների հետազոտության գործիքակազմ:

2. Պարզել Հայաստանի դպրոցների աշակերտների ընթերցանության որակը և կարդացածի ընկալման մակարդակը: Այս հարցում մեր նպատակն է մշակված թեստավորման գործիքակազմի միջոցով անցկացնել թիրախային բազմության թեստավորում, ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն, արդյունքների ամփոփում:

էր,և մեր աշակերտը այն կարող էր հեշտությամբ լուծել (ուներ խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական առարկայական գիտելիքները և համապատասխան ունակությունները): Սակայն մեր աշակերտների մեջ բավարար չափով մշակված չէ կարդալու և կարդացածի էությունն ու ինաստը ընկալելու կարողությունը:

Այս ամենից հանգում ենք առաջին հայացքից տարօրինակ մի եզրակացության. մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից բարձր ցուցանիշներ արձանագրելու համար անհրաժեշտ են ունակություններ և կարողություններ, որոնք ավելի բնորոշ են հումանիտար առարկաներին, մասնավորապես հայոց լեզվին և գրականությանը: Սակայն ակնհայտ է, որ ցանկացած ոլորտում, այդ թվում նաև՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների, հաջողություններ արձանագրելու համար անհրաժեշտ է նախ կարողանալ ընթերցել, ընկալել և յուրացնել տրված տեքստը, հասկանալ խնդրի դրվածքը և պահանջները:

## Հետազոտության նպատակը

Առաջիկայում նախատեսվում է մշակել թեստաբանական գործիք և դրա կիրառման միջոցով հետազոտել և վերլուծել ընթերցանության որակը և կարդացածի ընկալման մակարդակը Հայաստանի դպրոցներում: Թեստավորման, մաթեմատիկական վիճակագրության և համակարգչային մեթոդների լայն կիրառման միջոցով հնարավոր կլինի պարզել Հայաստանի դպրոցների աշակերտների՝ վերը նշված կարողությունների ընդհանուր պատկերը, հայտնաբերել ու պարզել այս առումով առկա մակարդակը ձևավորող հիմնական գործոնները:

Ընթերցանության ընդհանուր վիճակի գնահատումը ենթադրում է հետազոտություն՝ երկու հիմնական ուղղություններով՝

- ընթերցանության որակ,
  - կարդացածի ընկալում:
- Ընթերցանության որակը բնութագրվում է՝
- ընթերցելու փորձառությամբ,
  - ստացված տեղեկության օգտագործման կարողությամբ:
- Կարդացածի ընկալումը ենթադրում է՝
- կենտրոնացում և տեղեկությունը գտնելու կարողություն,

Պետական հանրակրթական այլ հաստատությունների (հատուկ դպրոցներ, քոլեջներ, և այլն) ամենաբարձր միջին միավորն անզերենից է (16.4), ամենացածրը՝ համաշխարհային պատմությունից (3.3): Ընդհանուր միջին միավորներից բարձր են հայոց լեզվի և հայ գրականության, անզերենի, կենսաբանության և ֆիզիկայի միջինները: Գերմաներենի, իսպաներենի, իտալերենի և պարսկերենի քննություններին այս դպրոցների շրջանավարտներից ոչ ոք չի մասնակցել:

Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտները ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորներ ունեն կենսաբանությունից, մաթեմատիկայից, համաշխարհային պատմությունից և ոռւսաց լեզվից: Ամենաբարձր միջին միավորը կենսաբանությունից է (16.0), ամենացածրը՝ իսպաներենից (3.5):

Հանրագումարի բերելով այսուակ 8-ի տվյալները՝ կարելի է ասել, որ հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորներն ընդհանուր միջինից բարձր են ավագ դպրոցներում, պետական վարժարաններում և պետական հանրակրթական այլ հաստատություններում, հայոց պատմությանը՝ ավագ դպրոցներում, հենակետային և պետական վարժարաններում, համաշխարհային պատմությանը՝ միջնակարգ դպրոցներում, հենակետային և պետական վարժարաններում, ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում, մաթեմատիկայինը՝ ավագ և հիմնական դպրոցներում, հենակետային և ոչ պետական վարժարաններում: Բնագիտական բոլոր առարկաների միջին միավորները ավագ դպրոցներում բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ֆիզիկայի միջինը բարձր է նաև հիմնական դպրոցներում, հենակետային վարժարաններում և պետական հանրակրթական այլ հաստատություններում, քիմիայինը՝ պետական վարժարաններում, կենսաբանությանը՝ հիմնական դպրոցներում և պետական հանրակրթական այլ հաստատություններում, պետական վարժարաններում և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում, աշխարհագրությանը՝ հիմնական դպրոցներում, հենակետային և պետական վարժարաններում:

Ոռուաց լեզվի միջին միավորը բարձր է ավագ դպրոցներում և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում, անզերենինը՝ ավագ դպրոցներում և պետական վարժարաններում, ֆրանսերենինը՝ ավագ և հիմնական դպրոցներում ու պետական վարժարաններում, գերմաներենինը՝ ավագ դպրոցներում և հենակետային ու պետական վարժարաններում։ Իսպաներենի բարձր ցուցանիշը պատկանում է միջնակարգ դպրոցներին, իտալերենինը՝ հենակետային վարժարաններին, պարսկերենինը, միակ դիմորդով՝ ավագ դպրոցներին։

Բարձր պահանջվածություն ունեցող քննական 3 առարկաներից հայոց լեզվի և հայ գրականության միջին միավորները ընդհանուր միջինին գերազանցում են հենակետային և պետական վարժարաններում, ավագ դպրոցներում և պետական հանրակրթական այլ հաստատություններում, անզերենինը ևս՝ միևնույն տիպի դպրոցներում, բացի հենակետային վարժարաններից։ Մաթեմատիկայի միջին միավորներն ընդհանուր միջին միավորին զիջում են միայն միջնակարգ դպրոցներում և պետական հանրակրթական այլ հաստատություններում։

Դպրոցների տիպերի շարքում դրական միավորի շեմից ցածր միջին միավորներ ունեն հիմնականում աշխարհագրությունը և համաշխարհային պատմությունը։ Այսպիսի միջին միավորներ դիտվում են պետական հանրակրթական այլ և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում (աղյուսակ 9)։

Ավագ դպրոցների և պետական հանրակրթական այլ հաստատությունների ամենացածր միջին միավորը համաշխարհային պատմությունից է (համապատասխանաբար՝ 10.7 և 3.3), միջնակարգ և հիմնական դպրոցներինը, հենակետային և պետական վարժարաններինը՝ ոռուաց լեզվից (համապատասխանաբար՝ 10.7, 8.4, 10.7 և 9.3), ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններինը՝ իսպաներենից (3.5)։

Ցանկացած համակարգի մասին հավաստի պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է այն դիտարկել համեմատության մեջ։ Աշխարհով մեկ այդ համեմատությունը տարիներ ի վեր իրականացվում է կրթական հետազոտությունների (տես [1, 4])՝ ստուգատեսների միջոցով։ Սակայն մասնակցությունը միջազգային ստուգատեսներին չի կարող լուծել գնահատման ոլորտի բոլոր խնդիրները։ Քիչ արդյունավետ կինի ներգրավվել միջազգային գնահատման գործընթացներին առանց պատկերացնելու կրթական համակարգի ներքին վիճակը, առանց ուսումնասիրելու վիճակը Հայաստանի մարզերում և համեմատելու դրանք իրար հետ։

Կրթության որակի գնահատման վերջին միջազգային հետազոտությունը՝ TIMSS-2011-ը, որին մասնակցել է Հայաստանը, բացահայտեց մեր դպրոցներում առկա որոշակի խնդիրներ մաթեմատիկայից և բնագիտական առարկաներից։ Մասնավորապես, պարզվեց, որ շատ դեպքերում մեր աշակերտները չեն կատարում ոչ միայն ծավալուն պատասխան պահանջող առաջադրանքները, այլև նույնիսկ տրված տարբերակներից ընտրություն կատարել պահանջող առաջադրանքները։ Մենք տեսնում ենք այս երևույթի մի քանի պատճառ։ թեստավորման ամբողջ գործընթացը դեռ անսովոր է մեր աշակերտների համար, մեր աշակերտները չունեն բավականաչափ մոտիվացիա՝ ի տարբերություն այս ոլորտում առաջատար դիրքերում գտնվող ասիական մի շարք երկրների աշակերտների, բավականին անտարբեր են բնագիտական առարկաների նկատմամբ և ապագայում չեն ցանկանում մասնագիտանալ դրանց ուղղությամբ (այս երևույթը արձանագրվել է նաև մեր հետազոտությունների արդյունքում (տես [12])։

Մենք կարևորում ենք ևս մեկ հանգամանք, որը կարող է լինել այս երևույթի պատճառներից մեկը։ Միջազգային հետազոտություններում ընդգրկված առաջադրանքների նյութը հնարավորինս առնված է առօրյա կյանքից, իսկ բովանդակությունը շատ դեպքերում շարադրված է որոշակի պատմությունների միջոցով։ Այսպիսի առաջադրանք կատարելու համար աշակերտը պետք է կարող որոշ նախապատմություն, ընկալի կարդացածը, հասկանա, թե ինչ է պահանջվում անել, կատարի պահանջվող գործողությունները և վերջապես արձանագրի ստացված պատասխանը։ Եղությունը հասկանալուց հետո հաճախ պարզվում է, որ խնդիրը բավականին հեշտ

ուսուցիչների և շահագրգիռ կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Ընթերցանության կարողություններն ու հմտությունները, որոնք ենթադրում են կարդացած ընկալում, ընթերցված տեքստում համապատասխան տեղեկությունը գտնելու կարողություն, ստացված տեղեկությունների օգտագործում, տեղեկության մեկնաբանում, եզրակացությունների կատարում, տեքստի բովանդակության գնահատում և այլն, մշակվում են սկսած ամենավաղ տարիքից՝ կրտսեր դպրոցից, և զարգացվում հանրակրթության բոլոր հետազա փուլերում:

Աշխարհի շատ երկրներում, կարևորելով այս հմտությունը, տարիներ ի վեր իրականացվում են զանազան հետազոտություններ տարբեր տարիքի սովորողների շրջանում: Այս հմտության նկատմամբ ուսումնասիրողների հետաքրքրվածությունը պայմանավորված է նրանով, որ սրա վրա է խարսխվում կրթության ողջ գործընթացը. ընթերցանության հմտության ձևավորումից է մեծապես կախված հանրակրթական բոլոր առարկաների (ոչ միայն մայրենի լեզու, հումանիտար առարկաներ, այլև մաթեմատիկա, բնագիտական առարկաներ) յուրացման արդյունավետությունը:

Բացի այդ, վաղուց արդեն աշխարհում հաջողությամբ գործում է ընթերցանության որակի ուսումնասիրությանը նվիրված PIRLS միջազգային ստուգատեսք (տես [2, 5]), որին, ցավոք, Հայաստանը չի մասնակցում: Այս պարագայում առավել արդիական են դաշնում ընթերցանության որակին և ընկալման մակարդակին նվիրված ազգային հետազոտությունները:

Ուստի ներկայումս արդիական խնդիր է Հայաստանի հանրակրթական դպրոցներում ընթերցանության մակարդակի հետազոտությունը, որի արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա պարզելու Հայաստանի դպրոցների աշակերտների ընթերցանության որակի և կարդացածի ընկալման մակարդակի ընդհանուր պատկերը, ինչպես նաև հայտնաբերել այդ մակարդակը ձևավորող հիմնական գործոնները:

### Ազգային հետազոտության անցկացման անհրաժեշտությունը

Կրթական համակարգը բարելավելու և զարգացնելու համար նախ և առաջ պետք է հստակ պատկերացնել համակարգի ներկա վիճակը:

### 3.4. Միասնական քննությունների մասնակիցների միջին միավորներն ըստ սեռերի

Առարկա	Ընդհանուր		Առջիկներ		Տղաներ	
	Աղյուսակային նշանակություն	Աղյուսակային նշանակություն	Աղյուսակային նշանակություն	Աղյուսակային նշանակություն	Աղյուսակային նշանակություն	Աղյուսակային նշանակություն
Հայոց լեզու և հայ գրականություն	8934	13.1	6369	<b>13.5</b>	2565	12.2
Հայոց պատմություն	2355	13.4	1452	<b>13.4</b>	903	<b>13.5</b>
Համաշխարհային պատմություն	219	11.5	122	11.4	97	<b>11.8</b>
Մարենութիւն	6928	11.8	2709	<b>12.3</b>	4219	11.5
Տիգիկա	2499	11.4	601	<b>12.4</b>	1898	11.1
Քիմիա	1368	12.6	859	<b>12.7</b>	509	<b>12.6</b>
Կենսաբնություն	1807	14.0	1196	<b>14.1</b>	611	<b>14.0</b>
Աշխարհագրություն	346	14.4	226	<b>14.8</b>	120	13.7
Ռուսաց լեզու	1218	11.0	805	<b>11.7</b>	413	9.7
Անգլերեն	6366	15.4	4378	<b>15.6</b>	1988	14.8
Տրանսլերեն	294	16.2	223	<b>16.5</b>	71	15.4
Գերմաներեն	362	15.6	277	<b>16.1</b>	85	14.1
Իսպաներեն	19	18.8	14	<b>18.8</b>	5	<b>18.8</b>
Իտալերեն	5	14.8	4	<b>14.4</b>	1	<b>16.5</b>
Պարսկերեն	1	19.3	-	-	1	<b>19.3</b>

### Աղյուսակ 10

Աղյուսակ 10-ը ցույց է տալիս, որ բացի համաշխարհային պատմությունից և խտակերենից, մնացած բոլոր քննությունների միջին միավորները աղջիկների դեպքում հավասար կամ բարձր են համապատասխան ընդհանուր միջիններից: Վերջիններին գերազանցում կամ հավասար են տղաների հայոց պատմության և համաշխարհային պատմության, քիմիայի և կենսաբնության, իսպաներենի, իտալերենի և պարսկերենի միջին միավորները:

Աղջիկների հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող օտար լեզուների միջին միավորները բարձր են տղաների համապատասխան միջին միավորներից: Աղջիկները և տղաները հավասար միջին միավորներ

ունեն իսպաներենից: Իտալերենից տղաների միջինը գերազանցում է աղջիկների միջինին, իսկ պարսկերենի քննությանը մասնակցել է միայն մեկ տղա:

2013 թ. դիմորդներից աղջիկների ամենաբարձր միջին միավորը իսպաներենից է (18.8), տղաներինը՝ պարսկերենից (19.3), իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից երկու սեռերի դեպքում էլ՝ ֆրանսերենից (աղջիկներ՝ 16.5, տղաներ՝ 15.4): Աղջիկների ամենացածր միջին միավորը համաշխարհային պատմությունից է (11.4), տղաներինը՝ ուսաց լեզվից (9.7):

#### 4 Բուհերի ընդունելության մրցույթի կազմակերպումը

Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորանոց համակարգով: Միասնական քննություններում դրական են համարվում 7.5 և բարձր միավորները:

Առաջին հայտազրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ըստ ընդունելության դիմումհայտում հայտազրված մասնագիտությունների, որոնցից որևէ մեկով ընդունված դիմորդը չի մասնակցում հայտազրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին: Մրցութային հավասար միավորների դեպքում գործում է առավելությունների համակարգը:

Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները և ժամկետային զինծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները: Վճարովի համակարգի նվազագույն անցումային միավորներ հավաքելու դեպքում դիմորդների որոշակի խմբերի (հաշմանդամներ, պարտադիր զինծառայությունից զորացրվածներ)՝ անվճար ուսուցման համակարգ ընդունվելու համար և գործում է արտոնությունների որոշակի համակարգ: Ընդունելության

Արևելյան ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ  
ԳթՎ փոխտնօրեն

Միքայել ՀԱՅԱՋՅԱՆ  
ԳթՎ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ

Հայաստանի հանրակրթական դպրոցներում  
ընթերցանության որակի հետազոտություն

#### Նախարան

Կրթական բարեփոխումները Հայաստանում համեմատաբար նոր են. անցել են դեռևս կարճ ժանապարհ: Այս ընթացքում Գնահատման և թեստավորման կենտրոնը Հայաստանի տարբեր մարզերում թեստավորման եղանակով իրականացրել է և հետևողականորեն իրականացնում է արտաքին ընթացիկ գնահատման միջոցառումներ, անցկացվել են ազգային ստուգատեսներ՝ հայագիտական և բնագիտական առարկաներից: Սակայն ցավոք, կրթական համակարգի համար գուցե ամենավճռորոշ՝ ընթերցանության վիճակի ուսումնասիրության ուղղությամբ ամբողջական որակյալ որևէ ազգային հետազոտություն Հայաստանում չի իրականացվել:

Մինչդեռ ընթերցանության որակը հանրակրթության կարևորագույն գործուներից է, որը մշտապես պիտի լինի

**Содержательно-сравнительный анализ кратких и полных ответов теста национальной проверки по арменоведческим предметам**

**“Что мы знаем о нас”**

**Арсен Багдасарян, Мирца Аладжян, Вардигуль**

**Мкртчян**

**Резюме**

Целью национального исследования по арменоведческим предметам “Что мы знаем о нас” является проверка уровня знаний учеников общей школы в области арменоведения, их осведомленности о (по нашему мнению считающимися) национальными символами деятелях культуры, памятниках истории и географических местностях. Выбор тем тестовых заданий был основан на принципе выявления минимального уровня знаний, необходимых каждому армянскому ребенку для общего представления о родном языке, истории и литературе, вне зависимости от его дальнейшего выбора будущей профессии.

**“What do we know about us?” Statistical Analyses on the Test Items with Short and Long Answers of National Review from Armenological Subjects**

**Arsen Baghdasaryan, Mirtsa Halajyan, Vardigul Mkrtchyan**  
**Summary**

The aim of National Review from Armenological Subjects “What do we know about us?” is to find out the knowledge of our pupils of secondary schools from Armenological Subjects, to find out the information that they have about our cultural, historical figures, about monuments and geographical places. The material of the test is chosen by the principle of finding out the minimum knowledge stock that each child must have about his native language, literature and history without taking into consideration the fact what kind of profession he would choose in future.

ըննությունների մրցույթի արդյունքների հաստատումից հետո անցկացվում է բուհերի թափուր տեղերի մրցույթը:

2013 թ. բուհերի ընդունելության մրցույթն անցկացվել է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհերում հայտագրված 13439 դիմորդներից 2553-ը որևէ ըննությունից չի հաղթահարել դրական միավորի շեմը, 576-ը մրցույթից դուրս է մնացել: 238 դիմորդ ատեստատ չներկայացնելու պատճառով չի մասնակցել մրցույթին:

Մրցույթի առաջին փուլին, որն անցկացվել է հուլիսի 15-ին, համաձայն իրենց դիմում-հայտերում նշած մասնագիտությունների, մասնակցել են դրական միավորներ հավաքած բոլոր դիմորդները: Այդ փուլում բուհերում հայտագրված 13048 դիմորդներից 576-ը դուրս է մնացել մրցույթից: Մրցույթի երկրորդ փուլն անցկացվել է հուլիսի 25-ին, որին հայտագրվել և մրցույթն անցել է 391 դիմորդ:


Այսպիսով, 2013 թ. բուհերում հայտագրված 13439 դիմորդների 81%-ը (10886 դիմորդ) ընդունվել է, 4.3%-ը (576 դիմորդ) մրցույթից դուրս է մնացել:

Բուհեր ընդունված 10886 դիմորդներից 1302-ը (12%) ընդունվել են անվճար, 9484-ը (87%)՝ վճարովի հիմունքներով և 100-ը (1%)՝ արտոնություններով: Անվճար հիմունքներով բոլոր ընդունվածներն ընդունվել են մրցույթի առաջին փուլում: Վճարովի հիմունքներով ընդունվածներից 9096-ը (96%) ընդունվել են առաջին, 388-ը (4%)՝ երկրորդ փուլում:

Այդուսակ 11-ը և հետեւյալ դիագրամը ցույց են տալիս բուհ ընդունվածների տոկոսը՝ ըստ ՀՀ մարզերի և երկրների: Ըստընվածների 99.45%-ը ներկայացնում է Հայաստանը: Մայրաքաղաքի դիմորդները կազմում են 36.48%-ը:

Երկիր	Բուհ ընդունվածներ
Մարզ	
Երևան	36.48%
Արագածոտն	4.45%
Արարատ	6.94%
Արմավիր	6.43%
Գեղարքունիք	7.30%
Լոռի	7.97%
Կոտայք	8.63%
Շիրակ	8.68%
Սյունիք	5.53%
Վայոց Ձոր	2.23%
Տավուշ	4.80%
<b>ԱՊՀ երկրներ</b>	0.21%
<b>ԼՂՀ</b>	0.17%
<b>Վրաստան</b>	0.16%
<b>Այլ երկրներ</b>	0.01%

Աղյուսակ 11



**Աղյուսակ 12-ում** ներկայացված են 2013 թ. միասնական քննություններին Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Վրաստանից և Ռուսաստանից մասնակցած դիմորդների միջին միավորները: Մզացված վանդակներով ներկայացված են համապատասխան ընդիանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորները:

Կատարելագործման կարիք ունի: Որպես երևոյթ՝ ազգային ստուգատեսը անհրաժեշտ և օգտակար է ոչ միայն հանրակրթության ոլորտում հետազոտություն անցկացնողների, այլև ստուգատեսին մասնակցողների հաճար և կարող է խթան հանդիսանալ իմացության ոլորտը ընդլայնելուն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների գնահատման հայեցակարգ, «Էղիթ Պրինտ», Երևան 2005, 12 էջ:
2. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության չափորոշիչ, «Անտարես», 2004, 71 էջ:
3. I. Mullis, M. Martin, A. Kennedy, PIRLS 2006 Technical Report, TIMSS & PIRLS International Study Center, Lynch School of Education, Boston College, Library of Congress, Catalog Card Number: 2007925071, ISBN: 1-889938-46-7, p. 287.
4. Ա. Հալաջյան, Լ. Հակոբյան, Ս. Մկրտչյան, Վ. Մկրտչյան, Հայագիտական առարկաների թեստավորման նախափորձարկման արդյունքների մասին, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, հ. 9, 2012:
5. Ա. Բաղդասարյան, Ա. Հալաջյան, Ս. Մկրտչյան, Ս. Մելիքյան, Վ. Մկրտչյան, Ի՞նչ գիտենք մեր մասին. թեստավորում հայագիտական առարկաներից, Մանկավարժություն, հ. 5, 2012:
6. Ա. Հալաջյան, Վ. Մկրտչյան, «Ի՞նչ գիտենք մեր մասին» հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի թեստավորման արդյունքների վիճակագրական վերլուծություն, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, հ. 10, 2012:

## Ամփոփում

Կարձ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները որպես կանոն բարդության ավելի մեծ աստիճան են ունենում, քան ընտրովի պատասխանով առաջադրանքները: Դրա պատճառը հիմնականում այն է, որ թեստը լրացնողը գրկված է պատահական ընտրության հնարավորությունից, որոշ դեպքերում պարզապես չի հնանում պատասխանը, որոշ դեպքերում չի կողմնորոշվում ինչ գրել, վստահ չէ, թե արդյոք իրենից հենց այդ պատասխանն է պահանջվում, երբեմն էլ ուղղակի զլանում է: Կարձ պատասխանով են առաջին և երկրորդ ենթաթեստերի առաջադրանքների կեսը: Երրորդ ենթաթեստում միայն կարձ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքներ են: Մեր ստուգատեսի դեպքում չկան այնպիսի առաջադրանքներ, որոնց ճիշտ պատասխանները բոլորովին տրված չլինեն: Սա մի կողմից նշանակում է, որ թեստի առաջադրանքների նյութը ընտրվել է ճիշտ՝ սովորողների տվյալ տարիքային խնդիր գիտելիքներին համապատասխան, մյուս կողմից աշակերտները ունեցել են բավար գիտելիքներ հանրակրթական հայագիտական առարկաներից և բավարար տեղեկացվածություն այսպես կոչված ընդհանուր հայագիտությունից: Այլ կերպ ասած, ծանոթ են հայ ազգի համար խորհրդանշներ համարվող պատմական և մշակութային գործիչներին, այցելել են հուշարձան-կոթողները կամ լսել կամ կարդացել են դրանց մասին: Անշուշտ, որոշ առաջադրանքների դեպքում մենք ակնկալում էինք ավելի բարձր ցուցանիշներ, սակայն որոշ առաջադրանքների դեպքում էլ մեզ համար կարող էր գոհացուցիչ լինել պատասխանների թեկուց փոքր քանակը: Հիմնականում ցուցանիշները համապատասխան են մեր սպասելիքներին: Որոշ դեպքերում արդյունքի վրա հավանաբար անբարենպաստ ազդեցություն է ունեցել առաջադրանքի ձևը: Առաջադրանքների միատեսակությունը պահպանելու միտումով երրորդ ենթաթեստի բոլոր առաջադրանքները տրվել են նկարներով: Թերևս որոշ դեպքերում ճիշտ կլիներ նկարի փոխարեն գրել տվյալ գործչի, օրինակ՝ Վ. Համբարձումյանի, անունը: Հնարավոր է նաև, որ որոշ դեպքերում ընտրվել է տվյալ գործչի ոչ այնքան հաջող կամ քիչ հայտնի նկար:

Այս ստուգատեսը Հայաստանում անցկացվող ազգային ստուգատեսների առաջին փորձերից է և բնականաբար

Առարկա	Միջին միավոր				Ընդհանուր միջին միավոր
	ՀՀ	ԼՂՀ	Վրաս- տան	Ռուսա- տան	
Հայոց լեզու և հայ գրականություն	11.9	9.8	8.5	8.1	13.1
Հայոց պատմություն	13.0	9.8	8.8	8.5	13.4
Համաշխարհային պատմություն	12.9	9.8	-	-	11.5
Մաթեմատիկա	9.9	8.9	5.9	10.9	11.8
Ֆիզիկա	9.7	7.4	5.8	8.5	11.4
Քիմիա	11.0	10.1	5.1	10.5	12.6
Վենսարանություն	11.1	10.2	6.6	11.7	14.0
Աշխարհագրություն	11.1	11.9	-	15.3	14.4
Ռուսաց լեզու	10.7	10.2	10.2	14.9	11.0
Անգլերեն	13.9	14.2	9.2	10.7	15.4
Ֆրանսերեն	15.6	16.0	-	-	16.2
Գերմաներեն	15.7	-	9.2	12.0	15.6
Իտալերեն	19.1	-	-	-	18.8
Բուլղարեն	15.5	-	-	-	15.5
Պարսկերեն	19.3	-	-	-	19.3

## Աղյուսակ 12

Աղյուսակը վկայում է, որ ընդհանուր միջիններից բարձր կամ հավասար են Հայաստանի դիմորդների համաշխարհային պատմության, գերմաներենի, իսպաներենի, իտալերենի, պարսկերենի և Ռուսաստանից եկած դիմորդների աշխարհագրության ու ռուսաց լեզվի միջին միավորները: ԼՂՀ-ի և Վրաստանի բոլոր միջին միավորները ցածր են համապատասխան ընդհանուր միջիններից:

Դրական միավորի շեմից ցածր են ԼՂՀ-ի դիմորդների ֆիզիկայի, Վրաստանի՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միջին միավորները:

ՀՀ-ի ամենաբարձր միջին միավորը պարսկերենից է (19.3), իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից՝ գերմաներենից (15.7), ԼՂՀ-ինը՝

ֆրանսերենից (16.0), Վրաստանինը՝ ռուսաց լեզվից (10.2), Ռուսաստանինը՝ աշխարհագրությունից (15.3):

Ամենացածր միջին միավորը ՀՀ-ում և ԼՂՀ-ում ֆիզիկայից է (համապատասխանաբար՝ 9.7 և 7.4), Վրաստանինը՝ քիմիայից (5.1), Ռուսաստանինը՝ հայոց լեզվից և հայ գրականությունից (8.1):

## 5. Թեստեր և թեստային առաջադրանքներ

### 5.1. Թեստերի կառուցվածքը և գնահատումը

Թեստերը բաղկացած էն եղել 80 առաջադրանքներից (50-ը՝ Ա, 30-ը՝ Բ մակարդակներում): Բոլոր թեստերում ընտրովի պատասխանով առաջադրանքներն ունեցել են չորս հնարավոր պատասխան (դիստրակտոր): Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների թեստերը պարունակել են նաև կարճ պատասխանով առաջադրանքներ, որոնք հայոց լեզվի և հայ գրականության թեստում կազմել են թեստային առաջադրանքների 24%-ը, հայոց պատմության 15%-ը, մաթեմատիկայի 32.5%-ը, ֆիզիկայի 38.5%-ը, քիմիայի 31.8%-ը, կենսաբանության 20%-ը և աշխարհագրության՝ 6.25%-ը: Հայոց լեզվի և հայ գրականության ու մաթեմատիկայի թեստերում առկա է նաև առաջադրանքների կառուցվածքային երրորդ տիպը՝ պնդումների փունջը, որը կազմված է 6 ենթառաջադրանքներից:

Թեստային առաջադրանքներից յուրաքանչյուրը գնահատվել է մեկ միավորով: Պնդումների փնջի յուրաքանչյուր ենթառաջադրանքի ճիշտ պատասխանի համար տրվել է 1 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 1 միավոր: «Զգիտեմ» պատասխանի դեպքում միավորը 0 է: Պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում տվյալ փնջի միավորը համարվել է 0: Այլ առաջադրանքների վրա տվյալ փնջի միավորների փոփոխությունը չի ազդել:

- Միեր Մկրտչյանը
- Ավետիք Խսահակյանը
- Անդրանիկը
- 

Մասնակիցների կեսը և կեսից ավելիի՝ 54-50%-ի կողմից ձանաչվել են՝

- Արցախի Տատ ու պապի հուշարձանը, Լևոն Արոնյանը
- Սարդարապատի հուշահամալիրը, Վազգեն Առաջինը
- Վիկտոր Համբարձումյանը

40-25%-ով ձանաչվել են՝

- Մոնթե Մելքոնյանը
- Արամ Խաչատրյանը
- Հովհաննես Բաղրամյանը
- Գարեգին Նժդեհը

Երկրորդ մասերի պատասխանները առաջին մասերի պատասխանների համեմատ նվազում են այնքան համամասնորեն, որ եթե պատկերները դասավորենք ըստ դրամց, կստանանք ճշգրիտ նույն պատկերը:

Մեր ուսումնասիրության համար հետաքրքրական է նաև, թե յուրաքանչյուր առաջադրանքի երկրորդ մասում, մանավանդ նրանցում, որոնք ձանաշման բարձր ցուցանիշ ունեն, որքանով են պատասխանները բազմազան: Պատասխանների բազմազանությունը հուշում է ածի, կոթողի կամ վայրի բազմակողմանի իմացություն: Պատասխանների միօրինակությունից, անգամ ձանաշման բավականին բարձր աստիճանի դեպքում, բխում է այն ենթադրությունը, որ տվյալ օբյեկտի մասին աշակերտներին այնուամենայնիվ թիս բան է հայտնի: Ըստ այդ մոտեցման՝ դասակարգումը կունենա մի փոքր այլ պատկեր: Այսպես, բոլորից շատ տարատեսակ տեղեկություններ գրվել են Շառլ Ազնավորի, Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի մասին: Բոլորից թիս տեղեկություններ են գրվել Ավետիք Խսահակյանի մասին: Հնարավոր է, որ դրա պատճառը կարող է լինել այն, որ այդ առաջադրանքը վերջինն է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են երրորդ մասի առաջադրանքների պատկերները: Յուրաքանչյուրի դիմաց առաջին սյունակում տրված են պատկերի ձանաշման տոկոսները, երկրորդ սյունակում՝ պատկերի վերաբերյալ գրված ճշշտ մտքերի տոկոսները:

	I	II									
	6	3		5	2		8	4		2	1
	6	8		3	8		4	8		5	5
	6	3		5	3		6	4		5	3
	2	4		4	2		9	0		4	1
	8	4		8	4		5	3		4	2
	3	7		3	7		3	0		0	3
	8	4		3	1		3	2		6	3
	2	7		5	9		7	1		4	6
	6	3		8	4		5	2		6	3
	6	8		1	6		0	7		3	5

Ինչպես երևում է աղյուսակից, հարյուր տոկոսով ձանաշված պատկերներ չկան:

Բոլորից շատ՝ 84-81%-ով, ձանաշվել են՝

- Սասունցի Ղավթի արձանը
- Արարատ լեռը, Հովհաննես Թումանյանը
- Գառնու տաճարը
- Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը

Մյուս պատկերների ձանաշումը նկատելիորեն զիջում է առաջիններին: 69-62%-ով, ձանաշվել են՝

- Մատենադարանը
- Շառլ Ազնավուրը, Կոմիտասը

Ամբողջ թեսար գնահատվել է առավելագույնը 80 միավորով: Գնահատման 80 միավորանց սանդղակից 20 միավորանց սանդղակին անցումը կատարվել է  $U=0.25 \cdot U_{80}$  բանաձևով, որտեղ  $U$ -ն միավորն է 20 միավորանց սանդղակում,  $U_{80}$ -ը՝ 80 միավորանց սանդղակում: Դրական են համարվել 7,5 և ավելի միավորները:

## 5.2. Միանական քննության թեստերի բարդությունը<sup>4</sup> և հուսալիությունը<sup>5</sup>

ակնարկ	կամացական նոր սպեկուլար													
1	2191	Արաման.	0.66	0.94	2	2151	Արաման.	0.67	0.91	3	2170	Արաման.	0.66	0.94
		Ավարտ.				Ավարտ.					Ավարտ.			
4	2136	Արաման.	0.66	0.94	5-	283	Արաման.	0.67	0.91	6-	145	Արաման.	0.51	0.95
		Ավարտ.					Ավարտ.				Ավարտ.			
1	580	Արաման.	0.69	0.95	2	565	Արաման.	0.72	0.91	3	562	Արաման.	0.68	0.95
		Ավարտ.					Ավարտ.				Ավարտ.			
4	559	Արաման.	0.66	0.95	5-	88	Արաման.	0.69	0.91	6-	290	Արաման.	0.67	0.97
		Ավարտ.						Ավարտ.			Ավարտ.			
1	54	Արաման.	0.64	0.92	2	58	Արաման.	0.63	0.88	3	53	Արաման.	0.58	0.95
		Ավարտ.					Ավարտ.				49	Արաման.	0.51	0.93
4	49	Արաման.	0.56	0.90			Ավարտ.			5-	73	Արաման.	0.49	0.88
		Ավարտ.										Ավարտ.		

<sup>4</sup>Առաջադրանքը համարվում է բարդ՝ բարդության գործակից՝  $P$ -ի 0,2-ից փոքր լինելու, միջին բարդության՝  $0,2 < P < 0,8$  և հեշտ՝  $P \geq 0,80$  դեպքերում:

ակտուալ	համար	համարական թիվ	առաջարկ	սպառագիր	բարեկարգություն և ամենամուշ դաշտավայրը	բարեկարգություն և ամենամուշ դաշտավայրը	առաջարկ	սպառագիր	բարեկարգություն և ամենամուշ դաշտավայրը	բարեկարգություն և ամենամուշ դաշտավայրը	
					ակտուալ	համար	համարական թիվ	առաջարկ	սպառագիր	բարեկարգություն և ամենամուշ դաշտավայրը	
ակտուալ	1	1690	Միասն.	0.59	0.95	ակտուալ	1	1569	Միասն.	0.79	0.95
			Ավարտ.	0.70	0.92				Ավարտ.	0.79	0.92
	2	1639	Միասն.	0.60	0.95		2	1535	Միասն.	0.78	0.95
			Ավարտ.	0.71	0.92				Ավարտ.	0.80	0.91
	3	1674	Միասն.	0.58	0.95		3	1542	Միասն.	0.76	0.95
ակտուալ			Ավարտ.	0.70	0.92				Ավարտ.	0.77	0.92
	4	1619	Միասն.	0.58	0.95		4	1506	Միասն.	0.76	0.95
			Ավարտ.	0.69	0.92				Ավարտ.	0.79	0.92
	5-8	290	Միասն.	0.43	0.95		5-8	209	Միասն.	0.63	0.97
			Ավարտ.	0.52	0.94				Ավարտ.	0.63	0.94
ակտուալ	1	602	Միասն.	0.60	0.95	ակտուալ	1	71	Միասն.	<b>0.82</b>	0.96
			Ավարտ.	0.67	0.91				Ավարտ.	<b>0.82</b>	0.94
	2	596	Միասն.	0.58	0.95		2	69	Միասն.	<b>0.82</b>	0.95
			Ավարտ.	0.65	0.91				Ավարտ.	<b>0.85</b>	0.93
	3	592	Միասն.	0.58	0.95		3	76	Միասն.	<b>0.82</b>	0.96
ակտուալ			Ավարտ.	0.65	0.91				Ավարտ.	<b>0.82</b>	0.94
	4	587	Միասն.	0.57	0.95		4	73	Միասն.	0.79	0.96
			Ավարտ.	0.64	0.91				Ավարտ.	<b>0.80</b>	0.94
	5-8	112	Միասն.	0.39	0.97		1	95	Միասն.	0.79	0.94
			Ավարտ.	0.49	0.93				Ավարտ.	<b>0.80</b>	0.90
ակտուալ	1	316	Միասն.	0.65	0.96	ակտուալ	2	86	Միասն.	0.75	0.96
			Ավարտ.	0.75	0.93				Ավարտ.	0.77	0.92
	2	313	Միասն.	0.64	0.96		3	88	Միասն.	0.79	0.94
			Ավարտ.	0.75	0.92				Ավարտ.	<b>0.81</b>	0.91
	3	314	Միասն.	0.64	0.96		4	81	Միասն.	<b>0.83</b>	0.93
ակտուալ			Ավարտ.	0.74	0.93				Ավարտ.	<b>0.84</b>	0.88
	4	299	Միասն.	0.68	0.97						
			Ավարտ.	0.76	0.93						
	5-8	126	Միասն.	0.44	0.96						
			Ավարտ.	0.57	0.92						

### Աղյուսակ 13

Աղյուսակ 13-ը ցույց է տալիս, որ միասնական քննության թեստերի մեծ մասն ունի միջին բարդություն և մեծ հուսալիություն: Մզացված թվերով ներկայացված են հեշտ թեստերի բարդության և ընդունելի

<sup>5</sup>Հուսալիության գործակի՝ 0,7-ից մինչև 0,8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0,8-ից մինչև 0,9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0,9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

- Դերասան է 75%
- Նշվել է ընտանեկան դժբախտությունը, կոնջ խելագարություն՝ 8%
- Ծնվել է Գյումրիում՝ 6,4%
- Նշվել են դերերից՝ 5%
- Սիրել է խմել՝ 2,5%

Շատերը նշել են նրա սիրված լինելը ժողովողի կողմից, երկրորդ՝ ֆրունզիկ անունը:

Միսալ պատասխանները՝ Ավ. Իսահակյան, Պարույր Սևակ

### Ավետիք Իսահակյան:

Ճանաչել է 63,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխաննել է 35%-ը:

Տրված պատասխանները 2 տիպի են՝

- Բանաստեղծ է կամ գրող է՝ 82%
- Ծնվել է Գյումրիում 14%

Միսալ պատասխանները՝ պատմիչ, Համո Սահյան:

Քանի որ թեստի այս կարգի առաջադրանքներից երկուսը վերաբերում են հայ նշանավոր գրողներին, ուստի հետաքրքիր է դրանց տրված պատասխանների համադրումը: Ինչպես և պետք էր սպասել, Ավ. Իսահակյանը ավելի քիչ է ճանաչվել: Բացի այդ, Այս առաջադրանքին տրված պատասխանները միօրինակ են: Եթե Հովհ. Թումանյանի դեպքում գրել են և՝ բանաստեղծ, և՝ արձակագիր, և՝ հեքիաթագիր, ապա Ավ. Իսահակյանի դեպքում՝ ճիշտ պատասխանախների գերակշիռ մասը գրել են **բանաստեղծ**:

Քիչ են նաև նրա մասին կենսագրական կամ այլ կարգի տեղեկությունները՝ ի տարբերություն Թումանյանի:

### **Առն Արոմյան:**

Ճանաչել է 53,7%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 31%-ը:

Տրված պատասխանները 2 տիպի են՝

- Հայտնի շախմատիստ է, գրումայստեր է՝ 68%
- Նշել են հաղթանակները՝ 11%, ոմանք անվանել են աշխարհի չեմպիոն՝ 19%

Սխալ պատասխանները՝ Տիգրան Պետրոսյան, Ռաֆայել Ֆաբիանո, Իան Դավիթս, Հայտնի ջութակահար է:

### **Մոնթե Մելքոնյան:**

Ճանաչել է 40%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 23%-ը:

Տրված պատասխանները 3 տիպի են՝

- Ազատամարտիկ է, մասնակցել է Ղարաբաղի, Շուշիի ազատագրմանը՝ 52%
- Ազգային հերոս է 20%
- Անունը եղել է Ավո՝ 8%

Սխալ պատասխանները՝ Վազգեն Սարգսյան՝ 11,5%, Նժդեհ

Այս առաջադրանքի դեպքում ուշադրություն է գրավում մի քանի անգամ կրկնվող «Թուրքերը նրանից վախեցել են» պատասխանը:

Հետաքրքրական է, որ Անդրանիկի մասին նման գրառումներ չկան: Հավանաբար նորօրյա հերոսի մասին այդ արտահայտությունները եթերում կամ ժողովրդի մեջ ավելի հաճախ են հնչում:

### **Միեր Մկրտչյան:**

Ճանաչել է 63,7%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 36%-ը:

Տրված պատասխանները 5 տիպի են՝

հուսալիություն ունեցող թեստերի հուսալիության գործակիցները: Համաշխարհային

պատմության 1-ին և 4-րդ, աշխարհագրության 3-րդ և ոուսաց լեզվի 1-4-րդ թեստերի Ա մակարդակն ունի ընդունելի հուսալիություն:

Հեշտ են ֆրանսերենի հիմնական փուլի թեստերը և նույն փուլի գերմաներենի 4-րդ թեստը, 1-ին և 3-րդ թեստերի Ա մակարդակը (ավարտական քննության թեստը):

Միասնական քննությունների թեստերից ամենափոքր բարդության գործակիցը (միասնական՝ 0,39, ավարտական՝ 0,49) ունեցել են Փիզիկայի լրացուցիչ փուլի թեստերը, ամենամեծ բարդության գործակիցը (միասնական՝ 0,83, ավարտական՝ 0,84)՝ գերմաներենի 4-րդ թեստը:

### **5.3. Միասնական քննության թեստերի վերլուծություն ըստ առաջադրանքների բարդության, տարբերակման և կորելյացիայի գործակիցների**

Թեստային առաջադրանքների՝ ըստ որակական բնութա-գրիչների (բարդություն, տարբերակում, կորելյացիա) վերլուծության արդյունքում առանձնացվել են լավ (որոնք ունեն լավ բնութագրիչներ և պիտանի են հետագա օգտագործման համար), միջին (որոնք պիտանի կլինեն օգտագործման համար միայն բարելավումից հետո) և վատ (որոնց հետագա օգտագործումը նպատակահարմար չէ) առաջադրանքները, մատնանշվել են միջին (վերանայման ենթակա) առաջադրանքների հիմնական թերությունները: Վերլուծությունը տրամադրվել է առարկայական մասնագետներին՝ հետագա օգտագործման կամ բարելավման նպատակով:

Թեստերը և թեստային առաջադրանքները հետազոտվել են ըստ որակական բնութագրիչների, թեստերիի և թեստային առաջադրանքների կառուցվածքի: Սասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով իսպաներենի, իտալերենի և պարսկերենի, ինչպես նաև մի քանի

առարկաների լրացուցիչ փուլի թեստերը վերլուծության շեն ենթարկվել, քանի որ 200-ից քիչ թվով մասնակիցների դեպքում ըստ որակական բնութագրիչների վերլուծության արդյունքները հավաստի չեն համարվում:

## **Статистический анализ результатов единых экзаменов 2013г.**

**Шушаник Никогосян, Наре Саргсян**

### **Резюме**

Представленный в данной работе анализ был проведен в следующих направлениях:

- Анализ общих результатов (единых письменных и централизованных устных экзаменов) и сравнительный анализ результатов единых экзаменов предыдущих лет.
- Изучение предметных тестов и тестовых заданий по качественным критериям, структуре тестов и тестовых заданий; выявление ошибок в тестах.

Анализ результатов единых экзаменов по марзам и регионам, сравнительный анализ региональных результатов по каждому предмету с общими результатами. Изучение результатов единых экзаменов по типу местности (большой город, маленький город, деревня и т.д.), по типам школ (старшая школа, средняя школа и т.д.), по полу экзаменующихся.

### **Կրամ Խաչատրյան:**

Ճանաչել է 37,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 21%-ը:

Տրված պատասխանները տիպի են՝

- Երգահան է, կոմպոզիտոր է 80%
- Նշել են ստեղծագործություններից՝ 8%
- Նրա անունով կա համերգասրահ 6%
- Կա նրա արձան՝ 4%

Սխալ պատասխաններ՝ Մարտիրոս Սարյան, Արմեն Բաբաջանյան, Եղիշե Չարենց, Սերժ Սարգսյան, օպերայի երգիչ

### **Վիկոր Համբարձումյան:**

Ճանաչել է 50%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 27%-ը:

Տրված պատասխանները 2 տիպի են՝

- Աստղագետ է 53%
- Բյուրականի աստղադիտարանի հիմնադիրն է 46%

Սխալ պատասխաններ՝ գրող է, Լևոն Շանթ, Նարին Զարյան, Պարույր Սևակ, Տիեզերագնաց է

### **Գարեգին Նժենի:**

Ճանաչել է 25,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 15%-ը:

Տրված պատասխանները նույնատիպ են՝ գինվորական է, ֆիդայի է, հերոս է և այլն:

Սխալ պատասխաններ՝ Արարո, Բաղրամյան, Նար-Ղոս, Վահան Տերյան:

- գտնվելու վայրը՝ 6%
- քանդակագործի անունը և արձանի նկարագրությունը՝ 3,5 %

Սխալ պատասխանները՝ Վարդան Մամիկոնյան, Հայկ Բժշկյանց, Գայի արձան, գտնվելու վայրը՝ Եջմիածին, կան նաև էպոսի դրվագների սխալ նկարագրություններ:

#### **Մատենադարան:**

Ճանաչել է 69%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 40%-ը:

Տրված պատասխանները տիպի են՝

- Նշանակությունը՝ պահպում են ձեռագիր մատյանները՝ 60%
- Մատյանների քանակի նշումով՝ 4%
- Պահպող մատյանների մասին նկարագրություններ՝ լուցկու չափ գիրք, Մշո ճառընտիրը և այլն՝ 23%
- Տեղեկություններ արձանների մասին 10%

Նշվել են նաև, որ գտնվում է Երևանում, կոչվում է Մաշտոցի անունով և այլն:

Սխալ պատասխանները՝ Մեսրոպ Մաշտոցի տուն-թանգարան < Թումանյանի տուն-թանգարան, Հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը, Մայր տաճար, Ազգային ժողովի շենքը

#### **Վազգեն Ա Կաթողիկոս:**

Ճանաչել է 53,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 30%-ը:

Տրված պատասխանները 2 տիպի են՝

- Ամենայն հայոց կաթողիկոս 42%
- Նստավայրը Մայր տաճարն է /Եջմիածինն է 39%

Մեկ մասնակից նշել է՝ Նա շնորհավորում է Նոր տարին:

Սխալ պատասխանները՝ Գրիգոր Լուսավորիչ, Հռոմի պապը:

#### **Statistical Analyses of the Results of Unified Exams 2013**

**Shushanik Nikoghosyan, Nare Sargsyan**

#### **Summary**

Presented analyses have been done by the following directions:

- Analyses have been done on final results (both on unified and oral exams) and comparisons with the results of unified exams of previous years.
- According to qualitative characteristics, tests and tests items' structures, tests and tests items have been examined and tests' defected have been detected.
- The results of unified exams have been analyzed according to marzes and districts (big cities, small villages, according to school types – high school, secondary school), and marzs' results have been compared with the final results.

- Նրա անունով Երևանում կողոք և մետրոյի կայարան լինելը՝ 11%

Սխալ պատասխանները երկու տիպի են՝ մի մասը նշել են այլ անուններ՝ Գարեգին Նժդեհ, Կազբեն Սարգսյան, Անդրանիկ, գեներալ Մանվել, մի մասը սխալվել են կոչումը կամ գործունեությունը նշելիս՝ ֆիդայի, գեներալ, գնդապետ:

#### **Ծիծեռնակաբերողի հուշահամալիր:**

Ճանաչել է 81%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 46%-ը:

Տրված պատասխանները հիմնականում 3 տիպի են՝

- Հուշարձանի նպատակը՝ եղեռնի գոհերի համար կառուցված լինելը՝ 61%
- Կառուցվածքը՝ 15%. նշվել են անմար կրակը, 12 այուները
- Հուշարձանի նշանակությունը՝ մարդկանց գնալը, ծաղկներ դնելը՝ 13%

Նշվել են նաև թանգարանի առկայությունը, տարածքում՝ ազատամարտիկների գերեզմանները:

Սխալ պատասխանները երկու տիպի են՝ մի մասը նշել են այլ անուններ՝ Զվարթնոց օդանավակայան, Եռաբլուր, մի մասն էլ կարծում է, որ դա անհայտ գինվորի՝ հավանաբար հայրենական պատերազմի, հուշարձանն է: Կան նաև այսպիսի պատասխաններ՝ Այնտեղ են թաղված եղեռնի գոհերը, Կառուցվել է Ավարայրի ճակատամարտի գոհերի պատվին:

#### **Սասունցի Դավթի արձանը:**

Ճանաչել է 84%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 48%-ը:

Տրված պատասխանները հիմնականում վերաբերում են Էպոսի հերոս լինելուն, կան էպոսի դրվագների վերապատմումներ, նշված են ձիու և թրի անունները, էպոսի այլ հերոսների անուններ՝ 90%

Տրված են նաև՝

Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ  
ԳԹՎ փոխտնօրեն

Միքայել ՀԱՅԱՋՅԱՆ  
ԳԹՎ թեստարանության բաժնի գլխավոր մասնագետ

Վարդիկուլ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԳԹՎ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի առաջին կարգի մասնագետ

**<<Ի՞նչ գիտենք մեր մասին>> հայագիտական  
առարկաներից ազգային ստուգատեսի թեստի  
կարճ և ընդարձակ պատասխանների  
բովանդակային-վիճակագրական վերլուծություն**

«Ի՞նչ գիտենք մեր մասին» հայագիտական առարկաներից ազգային ստուգատեսի նպատակն է պարզել մեր հիմնական դպրոցի աշակերտների գիտելիքները հայագիտական առարկաներից, տեղեկացվածությունը մեր ազգային խորհրդանշներ համարվող (մեր կարծիքով) հայագի մշակութային, պատմական գործիքներին, մեր հուշարձաններին, աշխարհագրական վայրերին: Թեստի առաջադրանքների նյութը ընտրվել է այն սկզբունքով, որ հնարավորություն տա պարզելու գիտելիքների այն նվազագույն պաշարը, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր հայ երեխայի՝ իր մայրենի լեզվի, գրականության և

Տրված պատասխանները 4 տիպի են՝

- Արցախում/Ղարաբաղում գտնվելը՝ 42%
- Անոնք՝ 49%, որից՝ Տատ ու պապի հուշարձան՝ 27%, Այս և ապա՝ 10%, Մենք ենք, մեր սարերը՝ 11%, մեկը պատասխանել է՝ Այր ու կին
- Սիսի և Մասիսի նման կառուցված լինելը՝ 2%
- Մի մասը անդրադարձել է Արցախի հերոսամարտին՝ 4%

Սխալ պատասխաններ չկան:

#### **Հովհաննես Թումանյան:**

Ճանաչել է 83,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 47%-ը:

Տրված պատասխանները 5 տիպի են՝

- Գրող, բանաստեղծ լինելը 67%, որոնցից՝ հեքիաթասաց՝ 21%
- Դսելում ծնված լինելը՝ 11%
- Ծննդյան, մահվան թվականները 5%
- 10/12 երեխա ունենալը 2%
- Ամենայն հայոց բանաստեղծ պատվանունը՝ 10%

Նշվել են նաև՝ Երևանում կա նրա տուն-քանզարանը, Եղեռնի ժամանակ ժողովրդին ցուցաբերած օգնությունը, ՀՀ դրամներից մեկի վրա նրա նկարը լինելը:

Սխալ պատասխաններն են՝ Մեսրոպ Մաշտոց, Եղիշե Չարենց, գրել է Վեպեր, ծնվել է Լոր գյուղում:

#### **Հովհաննես Քաղրամյան:**

Ճանաչել է 35%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 19%-ը:

Տրված պատասխանները հիմնականում 3 տիպի են՝

- Զորավար, մարշալ, հերոս լինելը՝ 61%
- Համաշխարհային պատերազմին, հայրենական մեծ պատերազմին մասնակցած լինելը՝ 19%

պատմության վերաբերյալ պատկերացում ունենալու համար՝ անկախ նրանից, թե հետազայում ինչ մասնագիտություն կընտրի:

Այդ նկատառումներով հանրակրթական դպրոցի հայագիտական առարկաների՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության դասընթացներում ուսումնասիրվող նյութից ընտրվել և թեստի առաջադրանքներում ներառվել են հատկապես այն թեմաները, որոնք անհրաժեշտ գիտելիք են ոչ միայն տվյալ առարկայից բավարար գնահատական ստանալու, այլև առհասարակ ամբողջ կյանքի համար: Այլ կերպ ասած, ընտրվել է հիմնականը և կարևորագույնը:

Բացի դպրոցական ծրագրերում առկա նյութից, թեստում տեղ են գտել նաև հարցեր, որոնց վերաբերյալ աշակերտը կարող էր գիտելիքներ ծեռք բերած լինել ինքնակրթությամբ՝ իր շրջապատից, ընտանիքից, լրատվական միջոցներից, մանկական հանրագիտարանից, այլ նյութերից: Այսպիսի հարցերի ոլորտը անվանել ենք ընդհանուր հայագիտություն:

Թեստը բաղկացած է 60 առաջադրանքներից, որոնցից՝ 20-ական «Մայրենի» և «Հայոց պատմություն» առարկաներից և 20 առաջադրանք, այսպես կոչված, ընդհանուր հայագիտությունից: Այսպիսով, ընդհանուր թեստը կազմված է երեք ենթաթեստից: Կառուցվածքային առումով այդ ենթաթեստը ներհյուսված են միմյանց այնպես, որ առաջարել են երեքական առաջադրանքներից բաղկացած 20 բլոկներ, որոնցից յուրաքանչյուրի առաջին առաջադրանքները հայոց լեզվից կամ հայ գրականությունից են, երկրորդ առաջադրանքները՝ հայոց պատմությունից, երրորդները՝ ընդհանուր հայագիտությունից:

Առաջին երկու առաջադրանքները ունեն կառուցվածքային երկու տարատեսակ՝ ընտրովի և կարձ՝ հավասար քանակներով՝ տասական յուրաքանչյուրից, որոնք համամասնորեն հաջորդում են մեկը մյուսին: Այսպես, եթե տվյալ բլոկում հայոց լեզվից կամ հայ գրականությունից տրված է ընտրովի պատասխանով առաջադրանք, ապա հայոց պատմությունից՝ կարձ, և հակառակը: Սա հնարավորություն է տալիս հավասարապես օբյեկտիվ պատկերացում ունենալու երկու առարկաների մասին է՝ հետևյալ նկատառումով: Ինչպես հայտնի է, թեստային առաջադրանքների այս տեսակներից յուրաքանչյուրը ունի իր յուրահատկությունը՝ ակնկալվող պատասխանի հավաստիության առումով:

Այսպես՝ ընտրովի պատասխանով առաջադրանքի դեպքում հնարավոր է պատահական ձիշտ ընտրություն: Այս առումով առավել արժանահավատ են կարծ պատասխանով առաջադրանքները: Սակայն կարծ պատասխանով առաջադրանքների դեպքում հնարավոր են չկողմնորոշվելու կամ չհիշելու գործոնները. աշակերտը կարող է ինանալ, սակայն չհիշել ձիշտ պատասխանը կամ վստահ չլինելով դրանում՝ խուսափել պատասխանելուց: Այս տեսակետից նախընտրելի են ընտրովի պատասխանով առաջադրանքները: Այս երկուսի համատեղումը մեծացնում է ստացվող արդյունքի հավաստիությունը:

Այս առաջադրանքներից յուրաքանչյուրը գնահատվում է մեկական միավորով:

Բլոկների երրորդ առաջադրանքները բաղկացած են երկուական ենթառաջադրանքներից, որոնցից մեկը կարծ պատասխանով է (պահանջվում է տրված պատկերի՝ անձի, հուշարձանի և այլի, ձանաչում), երկրորդը՝ ընդարձակ (պահանջվում է որևէ տեղեկություն շարադրել նկարում պատկերվածի մասին): Այս առաջադրանքների յուրաքանչյուր ենթառաջադրանք գնահատվում է մեկական միավորով, առաջադրանքը ամբողջությամբ՝ երկու միավորով:

Առաջին ենթառաջադրանքի պատասխանը միարժեք է. աշակերտը ճանաչում է կամ չի ճանաչում նկարում պատկերվածը: Երկրորդ առաջադրանքի պատասխանը, այսպես ասած, ազատ է: Աշակերտը կարող է գրել ցանկացած բան, որը ձիշտ է տվյալ գործչի կամ կոթողի մասին: Հենց սրանով էլ այս պատասխանները յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ուսումնասիրության առումով այն տեսակետից, որ ոչ միայն տեղեկություն են տալիս այն մասին, թե աշակերտը որևէ բան գիտի<sup>6</sup>, թե՝ ոչ տվյալ իրողության մասին, այլև այն մասին, թե դրա որ կողմը գիտի կամ ինչն է կարևորում<sup>6</sup> (մասամբ այսպիսին են նաև առաջին ենթաթեստի որոշ կարծ պատասխանով առաջադրանքներ):

Ներկա հոդվածում վերլուծությունը տարվում է հատկապես այդ տեսանկյունով:

<sup>6</sup> Հարկ է նշել, որ մասնակիորեն այդպիսին կարելի է համարել նաև մյուս երկու ենթաթեստերի կարծ պատասխանով առաջադրանքներից մի քանիսը:

Տրված պատասխանները 6 տիպի են՝

- Կոմպոզիտոր լինելը, երգեր մշակելը, խաղերը ստեղծելը, իրաշալի ծայն ունենալը 52%
- Իսկական անուն-ազգանունը՝ Սողոմոն Սողոմոնյանն նշել են 11%-ը
- Խելագարվել է, բուժվել է հոգեբուժարանում 15%
- Վարդապետ լինելը հիշատակել է 4%-ը
- Կենսագրական տեղեկություններ՝ ծննդյան թիվը, որը լինելը՝ 4%
- Բնութագրական նշումներ, մասնավորապես՝ աշխարհահռչակ է, հայոց երգի վեհափառն է՝ 3%

Սխալ պատասխաններն են՝ Սայաթ-Նովա, Մահացել է ցեղասպանության ժամանակ:

#### **Մարդարապատի հուշահամալիրը:**

Ճանաչել է 53,3%-ը:

Երկրորդ մասին ձիշտ պատասխանել է 28%-ը:

Տոկոսային այսքան փոքր թիվ դեպքում անհմաստ ենք համարում պատասխանների տարատեսակների տոկոսների հաշվարկումը, այնուամենայնիվ նշենք, որ տրված են այսպիսի պատասխաններ՝

- Գտնվում է Արմավիրի մարզում՝ 62%
- Նկարագրել են կառուցվածքը՝ զանգերը, ցուլերը, արծիվները՝ 18%
- Նշել են թանգարան լինելու հանգամանքը՝ 10%

Սխալ պատասխանները վերաբերում են հուշահամալիրի նշանակությանը. այս տեսանկյունից պատասխանածների մեծամասնությունը նշել է, որ հուշահամալիրը նվիրված է Ավարայրի ճակատամարտին: Այդպիսիք կազմում են այս ենթաթեստի պատասխանածների մեծամասնությունը: Մյուսների կարծիքով նվիրված է Արցախյան պատերազմին, մի մասը պարզապես նշել է պատերազմ՝ առանց կոնկրետացնելու, մեկը նշել է Բաշ-Ապարան:

Այլ սխալ պատասխաններ՝ երեքունի, Զանգեզուր, Զվարթնոց, Խոր Վիրապ:

#### **Արցախի տատ ու պապի արծանները:**

Ճանաչել է 54,3%-ը:

Երկրորդ մասին ձիշտ պատասխանել է 32%-ը:

- Արարատը՝ որպես բանաստեղծության թեմա՝ 2%

Սխալ պատասխաններն են՝ գտնվում է Հայաստանում, Հայաստանի և Թուրքիայի սահմանն է, աշխարհի/Կովկասի ամենաբարձր լեռն է, Արագած, աշխարհի հնագույն լեռը:

Թեև ճանաչել են շատերը, սակայն այս պատկերի դեպքում ենթադրվում էր հարյուր տոկոսին մոտ ճանաչում: Հետաքրքրական է, թեև բնական, որ բոլորից շատ նշվել է լեռան՝ Թուրքիայում գտնվելու հանգամանքը, թեև ինչպես տեսանք, կան նաև երեխաներ, որոնք կարծում են, թե գտնվում է Հայաստանում: Այս առաջադրանքի պատասխանները աչքի են ընկնում բազմազանությամբ. աշակերտները անդրադարձել են նաև այն հանգամանքին, որ նրա գագաթը բարձրացել է հայ մարդ, խոսել են նաև լեռան գեղեցկության մասին:

#### **Գարնոր տաճարը:**

Ճանաչել է 82%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 47%-ը:

Տրված պատասխանները 3 տիպի են՝

- Տաճարի արտաքին տեսքի նկարություններ՝ 47 %
- Հեթանոսական տաճար լինելու հանգամանքը, այդ թվում՝ արևի աստծու տաճար՝ 26%,
- Տրդատի կողմից կառուցված լինելը 9%

Սխալ պատասխաններն են՝ Գառնի-Գեղարդ, աշխարհի միակ տաճարն է, Վահագնի տաճարն է:

Ունի 24 այուն, որոնք խորհրդանշում են 24 ժամերը՝ 37 %, այլ նկարագրություններ՝ նուան, խաղողի նախշազարդեր, պատերին՝ արձանագրություններ, բաղնիք ունենալը և այլն՝ 7%, հելլենիստական ոճի տաճար լինելը՝ 3% Երկրաշարժից ավերված լինելը, թագավորների անառանոցը լինելը և այլն:

#### **Կոմիտաս:**


Ճանաչել է 66%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխանել է 38%-ը:

#### **Ենթաթեստերի վիճակագրական վերլուծությունը**


Մինչ բովանդակային վերլուծությանն անցնելը հպանցիկ ներկայացնենք վիճակագրական տվյալներ երեք ենթաթեստերի վերաբերյալ:

##### **1. Հայոց լեզու և հայ գրականություն**



Այս ենթաթեստից մասնակիցները 20 հնարավորից վաստակել են նվազագույնը 4, առավելագույնը՝ 19 միավոր: 77%-ը վաստակել է միջինից բարձր միավորներ՝ 10 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 15-ը՝ 12.2%: Միջին միավորն է 13,17:


## 2. Հայոց պատմություն



Այս ենթաթեստից մասնակիցները 20 հնարավորից վաստակել են նվազագույնը 3, առավելագույնը՝ 20 միավոր: 83,1%-ը վաստակել են միջինից բարձր միավորներ՝ 10 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 16-ը՝ 12,8%: Միջին միավորն է 12,77-ը:

Այս ենթաթեստի ցուցանիշները փոքր-ինչ ցածր են նախորդից: Սա օրինաչափ է նրանով, որ հայոց պատմությունը համեմատաբար նոր առարկա է այս տարիքի դպրոցականների համար, քան հայոց լեզուն և հայ գրականությունը, որն ուսումնասիրում են առաջին դասարանից:

## 3. Ընդհանուր հայագիտություն



միայն ծանոթ, այլև սիրված է: Հաջորդ երեք պատասխանները վկայում են, որ աշակերտները տեղեկացված են նրա կենսագրությունից, գիտեն ինչ-ինչ մանրամասներ, շատերը նշել են քրոջ, մոր անունները: Ոմանք տեղյակ են նաև, որ միևնույն ժամանակ դերասան է, բանաստեղծ է: Հայաստանին արված բարեգործության մասին թեև նշել են քերը, սակայն ուրախալի է, որ այս հանգամանքը նույնպես անտեսված չէ: Երգերի մասին մանրամասնություններ կամ երգերի վերնագրեր չեն նշվել հավանաբար դրանց օտարալեզու լինելու պատճառով:

### 6. Զորավար Անդրանիկ:

Ճանաչել է 62%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխաննել է 34%-ը:

Տրված պատասխանները 3 տիպի են՝

- Ուզմական գործիչ լինելու հանգամանքը՝ 77,7%
- Ազգանունը՝
- Պատվանուններ՝ 12,6%
- Զրույցներ նրա կյանքից ու գործից՝ 9,7%:

Սխալ պատասխաններն են՝ Բիեժնե, Անդրանիկ Բաղրամյան, Լենին:

Պատասխանների բազմազանության բացակայությունը, ի տարբերություն նախորդ առաջադրանքի, բնական է: Ուրախալի է վերջին կետը, որը վկայում է, որ բացի Անդրանիկի մասին ընդիհանուր պատկերացումներից, աշակերտները տեղեկացված են նաև նրա գործերից: Զարմանալիորեն ոչ մեկը չի նշել մետրոյի կայարաններից մեկի՝ նրա անունով լինելը, ինչպես դա արել են այլ գործիշների դեպքում:

### 9. Արարատ Խեր:

Ճանաչել է 83,3%-ը:

Երկրորդ մասին ճիշտ պատասխաննել է 47%-ը:

Առավել հաճախ հանդիպող պատասխանները 5 տիպի են՝

- Թուրքիայում գտնվելու հանգամանքը, այդ թվում՝ ցեղաս-պանության պատճառով՝ 40,4%
- Բիբլիական լեռ լինելու հանգամանքը, տապանի առասպելը՝ 22,2%
- Բարձրությունը՝ 20,2%
- Որպես լեռ՝ 15,2%

### 3-րդ Ենթաթեստ. Ընդհանուր հայագիտություն

Այս բաժնի առաջին Ենթաթարածանքում կարևորություն են ներկայացնում միայն սխալ պատասխանները, քանի որ ձիշտ պատասխանները միարժեք են: Երկրորդ Ենթաթարածանքում կարևոր են ինչպես սխալ, այնպես էլ ձիշտ պատասխանները՝ իրենց Ենթաթեսակներով:

#### **Հարց Ազնավոր:**

Ճանաչել է 81,6%-ը:

Առաջադրանքի երկրորդ մասին՝ **ինչ գիտես նրա մասին,** ձիշտ պատասխաննել է 47%:

Տրված պատասխանները ըստ բովանդակության կարելի է խմբավորել 5 տիպերի մեջ: Խնճերը, ըստ պատասխանների հաճախության, ներկայացնում են հետևյալ պատկերը՝

- Ազնավորը՝ որպես երգարվեստի ներկայացուցիչ՝ 30,7%<sup>7</sup>
- Ազնավորի հայ լինելու հանգամանքը՝ 38,9%
- Ֆրանսիայում ապրելը՝
- Անվան ծագումը՝ 9,4%
- Ընտանիքը՝ 6,4%
- Հայաստանի համար արված բարեգործությունը՝ 4,6%:

Սխալ պատասխաններն են<sup>8</sup> Հովհաննես Շիրազ, Վահան Տերյան:

Ամենահաճախեալ պատասխանը միանգամայն օրինաչափ է: Ինչպես տեսնում ենք, գրեթե նույնքան է երկրորդ հաճախ հանդիպող պատասխանը: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ առաջին կարգի պատասխաններից շատերում նույնպես հաճախ նշվել է հայ, ֆրանսահայ, ապա կարելի է եզրակացնել, որ մեր աշակերտները առանձնապես կարևորում են Ազնավորի հայ լինելը: Դատելով հաճախադեալ հանրահայտ, աշխարհահռչակ մակրիներից, ինչպես նաև ճանաչման բարձր տոկոսից, կարելի է եզրակացնել, որ Ազնավորը ոչ

<sup>7</sup> Պատասխանների տիպերի տոկոսները հաշվարկված են ըստ երկրորդ մասին տրված ձիշտ պատասխանների քանակի:

<sup>8</sup> Նշվում են թե՝ առաջին, թե՝ երկրորդ Ենթաթարածանքների սխալ պատասխանները:

Այս Ենթաթեստից մասնակիցները 40 հնարավորից վաստակել են նվազագույնը 1, առավելագույնը՝ 39 միավոր: Ընդ որում, 1 միավոր վաստակել է միայն 1 մասնակից: Հաջորդ ամենացածր միավորը 4-ն է (2 մասնակից):

63,2%-ը վաստակել են միջին և բարձր միավորներ՝ 20 և ավելի: Ամենահաճախ հանդիպող միավորն է 29-ը՝ 5,4%: Միջին միավորն է 22,81:

Միավորների համեմատաբար փոքր թիվը (համեմատած մյուս երկու Ենթաթեստերի հետ) պայմանավորված է այս Ենթաթեստում առկա ընդարձակ պատասխանով Ենթաթարածանքներով: Հաճախ մասնակիցը ճանաչել է տվյալ գործին կամ վայրը, կոթողը և այլն, սակայն առաջադրանքի երկրորդ մասին չի պատասխանել: Ինչպես վերը նշվեց, հավանաբար մասմբ այն պատճառով, որ չի կողմնորոշվել, թե ինչ գրի դրա մասին: Այնուամենայնիվ այս Ենթաթեստի առաջադրանքները նույնպես կատարված են բավարար չափով:

#### **Կարձ և ընդարձակ պատասխանով առաջադրանքների բովանդակային վերլուծությունը**

##### **1-ին Ենթաթեստ. Հայոց լեզու և հայ գրականություն**

Այս բաժնում առաջադրանքին տրված միարժեք ձիշտ պատասխանները չեն քննարկվում: Հետաքրքրություն չեն ներկայացնում նաև սխալ պատասխանների հազվադեպ հանդիպող օրինակները: Քննարկման Ենթակա են ձիշտ պատասխանի տարբերակները, որոնց հիման վրա կարելի է հետևություններ անել տվյալ իրողության ճանաչվածության աստիճանի, կրթական ինչ-ինչ միտումների մասին, և հաճախադեպ սխալ պատասխանները, որոնք ինչոր չափով համընդիմանուր թյուրիմացության կամ պարզապես Ենթադրության արդյունք են: Վերլուծությունը կտրվի ըստ յուրաքանչյուր Ենթաթեստի բաժինների:

Հայոց լեզվի **հնչյունաբանություն** բաժնից որպես կարձ պատասխանով առաջադրանք տրված է հարց այբուբենի վերաբերյալ: Պահանջվում է լրացնել այբբենական հերթականությամբ տրված տառերի շարքում բաց թողնվածները: Բաց են թողնվածք գ-ին հաջորդող եւ է-ին հաջորդող զ տառերը: Առաջինի դեպքում սխալներ չկան:

Երկրորդի դեպքում հանդիպում են հետևյալ սխալ տարբերակները՝ շեղությամբ:

**Բարակազմության** վերաբերյալ տրված առաջադրանքում պահանջվում է գրել այնպիսի կազմությամբ բառ, որն ունի մեկ արմատ, մեկ նախածանց և մեկ վերջածանց: Ճիշտ պատասխանը միարժեք չէ: Ճիշտ են համարվում տվյալ կառուցվածքն ունեցող բոլոր բառերը:

Այս առաջադրանքի վերաբերյալ կարելի է անել հետևյալ դիտարկումները՝

1. առավել հանդիպող սխալներն են՝ միայն վերջածանց կամ վերջածանցներ ունեցող բառեր,
2. պատասխաններում գերակշռում են **ան** նախածանց ունեցող բառերը,
3. մյուս առավել հաճախ հանդիպող ածանցներն են՝ **դժ, չ, ապ, տ, հակ,** միայն 1 դեպքում՝ **շար՝** հավանաբար պատահականորեն:

Ասացվածքների վերաբերյալ առաջադրանքում պահանջվում է լրացնել **Խորամանկ աղվեսը զոյգ ոտքով է թակարդն ընկնում** ասացվածքում բաց թողնված առաջին բառը: Բացի նշված բառից, որպես ճիշտ պատասխան է ընդունվում նաև **փորձված** տարբերակը: Առավել հաճախադեպ սխալ պատասխաններն են՝

1. Պոչատ
2. Չար
3. Մեկ
4. Գող

Կարճ պատասխանով առաջադրանքները հիմնականում **գրականությունից** են: Առաջադրանքներից մեկում աշակերտը պիտի ճանաչի առակագիր Խոնկո- Ապերին: Ճիշտ է համարվում նաև **Աքարեկ Խնկոյան** տարբերակը:

Առավել հաճախադեպ սխալ պատասխաններն են՝

1. Հովհաննես Թումանյան
2. Շառլ Պերո
3. Լևոն Շանթ
4. Ղազարոս Աղայան

Պատասխաններից առաջինը և չորրորդը կարելի է օրինաչափ համարել: Երկրորդ պատասխանը տվյալները ուշադրություն չեն դարձել պահանջում նշված **հայ** բառին: Երրորդ տարբերակը տարակուսանք է առաջացնում:

Գրականության վերաբերյալ մյուս առաջադրանքում պահանջվում է գրել Հովհ. Թումանյանի որևէ հեքիաթի վերնագիր: Աշակերտները նշել են ընդիանուր թվով 28 տարբեր վերնագրեր: Դրանցում նկատելի որ գերակշռում է «**Շունն ու կատուն**», որը, սակայն, բալլար է, այսինքն՝ այլ ժամանի ստեղծագործություն: Սակայն հաշվի առնելով աշկերտների տարիքը, ինչպես նաև հարցման նպատակադրումը՝ ինչպես այս, այնպես էլ դարձյալ հաճախ հանդիպող «**Մի կաթիլ մեղր**» և «**Չարի վերջը**» պատասխանները նույնպես համարվել են ճիշտ: Հետաքրքրական է, որ ավելի հաճախ նշվել են իրապատում, քան իրաշապատում հեքիաթների վերնագրեր՝ «**Բարեկենդան**», «**Չախորդ Փանոսը**», «**Տերն ու ծառան**», «**Սուտլիկ որսկանը**» և այլն: Զարմանալիորեն ոչ մեկի կողմից չի նշվել «**Կիկոսի մահը**»:

Հանդիպող սխալ պատասխանները կարելի է բաժանել երկու այսպիսի խմբերի՝

1. նշված են Հովհ. Թումանյանի այլ ստեղծագործությունների վերնագրեր՝ «Գիբոր», «Մարո»,
2. նշված են այլ գրողների հեքիաթներ:

Գրականության վերաբերյալ երրորդ առաջադրանքը Ավ. Խսահակյանի «Ազգային երգը» պատմվածքի մասին է, որը ծրագրային է: Ցանկությունը, քչերն են ծանոթ պատմվածքին: «**Ո՞րն է, քատ պատմվածքի հերոսի, իսկական ազգային երգը**» հարցի ճիշտ պատասխանը՝ **հայոց այրութենք**, գրել են քչերը: Ճիշտ են համարվել նաև **այր-բեն-գիմ** և **հայոց յեզուն** պատասխանները: Մեծամասնությունը պատասխանել է՝ **օրիներգը**: Այլ սխալ պատասխաններն են՝ **Երևան դարձած...** կամ **Երերունի-Երևան, Հայր մեր, Մարտիկի երգը**:

Մեկ այլ առաջադրանքում պահանջվում է գրել Հովհ. Թումանյանի «**Վայ, մայրիկ ջան, տես**» մանկական բանաստեղծության բաց թողնված բառը: Ճիշտ պատասխանն է՝ **թիթեռ**: Նույնպես մեծամասնությունը պատասխանել է սխալ: Գերակշռող պատասխանն է՝ **ծյում**: Մյուս հաճախ հանդիպող սխալ պատասխաններն են՝ **փաթիլ, սալիտակ**: